ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 71

«ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

03-ը փետրվարի 2024թ.

Նիստին ներկա էր գիտական խորհրդի 35 անդամներից 29-ը: Նիստը վարում էր գիտական խորհրդի նախագահ Ա. Հ. Մակարյանը, նիստի քարտուղարն էր Մ. Ս. Աթոյանը:

Ա. Հ. Մակարյանը, բացելով գիտական խորհրդի նիստը, խնդրեց մեկ րոպե լռությամբ հարգել ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի երկարամյա դասախոս, ֆրանսերեն լեզվի և գրականության սեկցիայի ղեկավար Աիդա Սերոժի Մարդանյանի հիշատակը:

Այնուհետև Ա. Հ. Մակարյանը հայտարարեց քվեակազմի առկայության մասին և քվեարկության դրեց նիստի օրակարգը:

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

1. ԵՊՀ ԻՄ կրթական ստորաբաժանումների ղեկավարների 2022-2023 ուստարվա հաշվետվություններն ըստ ԵՊՀ ԻՄ 2022-2026թթ. ռազմավարական ծրագրի.
   1.1 Բնական գիտությունների ֆակուլտետի դեկանի հաշվետվությունը,
   /Զեկուցող՝ Մ. Զաքարյան /
   1.2 Հումանիտար գիտությունների ֆակուլտետի դեկանի հաշվետվությունը,
   /Զեկուցող՝ Կ. Պողոսյան /
   1.3 Տնտեսագիտության ֆակուլտետի դեկանի հաշվետվությունը,
   /Զեկուցող՝ Ա. Մարգարյան/
   1.4 Կիրառական արվեստի ֆակուլտետի դեկանի հաշվետվությունը:
   /Զեկուցող՝ Վ. Աղաբաբյան/
2. ԵՊՀ ԻՄ-ում դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ 2022-2023 ուստարվա ուսանողական հարցումների արդյունքների մասին:
   /Զեկուցող՝ ՈՒՄՎ պետ Ա. Դավթյան/
3. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղում դասագրքերի ուսումնական և ուսումնամեթոդական այլ գրականության հրատարակման երաշխավորման գործընթացի կանոնակարգը հաստատելու մասին:
   /Զեկուցող՝ ԵՊՀ ԻՄ գիտական քարտուղար Մ. Աթոյան/
4. Ընթացիկ հարցեր:
   4.1. Հայոց պատմության և հասարակագիտության ամբիոնի ասիստենտ, պատմական գիտությունների թեկնածու Արա Կամոյի Ազատյանին ԵՊՀ գիտական խորհրդում դոցենտի գիտական կոչում ստանալու համար երաշխավորելու և միջնորդելու մասին:
   /Զեկուցող՝ ԵՊՀ ԻՄ գիտական քարտուղար Մ. Աթոյան/

Բաց քվեարկությամբ՝ 29 կողմ 0 դեմ, 0 ձեռնպահ համամասնությամբ որոշվեց.

Որոշում

- Հաստատել նիստի օրակարգը:

Այնուհետև Ա. Մակարյանը նշեց, որ դեկանների հաշվետվությունները՝ համաձայն ԵՊՀ ԻՄ գործող կանոնադրության 23-րդ կետի 11-րդ ենթակետի պետք է գնահատվեն փակ գաղտնի քվեարկությամբ և առաջարկեց կազմել հաշվիչ հանձնաժողով հետևյալ կազմով՝

ՄԿՈԱ բաժնի վարիչ Մ. Ճաղարյան, գրադարանի վարիչ Վ. Պողոսյան և ԵՊՀ ԻՄ ՈՒԽԸ նախագահ Դ. Ալեքսանյան։

Բաց քվեարկությամբ՝ 29 կողմ 0 դեմ, 0 ձեռնպահ համամասնությամբ որոշվեց

Որոշում

- Հաստատել հաշվիչ հանձնաժողովը հետևյալ կազմով.

1. ՄԿՈԱ բաժնի վարիչ Մ. Ճաղարյան
2. ԵՊՀ ԻՄ գրադարանի վարիչ Վ. Պողոսյան
3. ԵՊՀ ԻՄ ՈՒԽ նախագահ Դ. Ալեքսանյան։

Օրակարգի առաջին՝ «ԵՊՀ ԻՄ կրթական ստորաբաժանումների ղեկավարների 2022-2023 ուստարվա հաշվետվություններն ըստ ԵՊՀ ԻՄ 2022-2026թթ. ռազմավարական ծրագրի» հարցի կապակցությամբ լսեցին ԵՊՀ ԻՄ ֆակուլտետների դեկանների պաշտոնակատարների հաղորդումները։

1.1 **Բնական գիտությունների ֆակուլտետի դեկանի հաշվետվությունը ներկայացրեց բնական գիտությունների ֆակուլտետի դեկանի պաշտոնակատար ֆ.մ.գ.թ., դոցենտ Մ. Զաքարյանը**։

Նա նշեց, որ հաշվետու ուստարում ֆակուլտետն իր գործունեությունն իրականացրել է Մասնաճյուղի 2022-2026թթ. զարգացման ռազմավարական ծրագրի իրականացման գործողությունների պլանի համաձայն՝ աշխատանքային պլանում ամրագրելով այն գործողությունները, որոնք պլանավորվել են ֆակուլտետների, նաև ամբիոնների կողմից իրականացման համար։ Ֆակուլտետն իր գործողությունների պլանի շրջանակներում իրականացնում է գործընթացներ, որոնք ուղղորդված են բարելավելու ուսումնական գործընթացի կազմակերպումը, նյութատեխնիկական բազան, դասախոսական կազմը և ստեղծելու կրթական անհրաժեշտ միջավայր, նպաստելու դիմորդների թվի աճին և իր շրջանավարտների ապագա կարիերայի ձևավորմանը։ Մասնավորապես Ֆակուլտետի գործունեության հաջողությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ ֆակուլտետում վերջին տարիներին իրականացվում է «Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա» կրթական ծրագիրը, որն ընդհանուր առմամբ տարածաշրջանում պահանջված է դիմորդների կողմից, իսկ ծրագրի շրջանավարտները պահանջված են աշխատաշուկայում, քանի որ մարզում վերջին տարիներին ավելացել է IT ոլորտի կազմակերպությունների թիվը, որոնց աշխատակազմը համալրվում է հիմնականում ֆակուլտետի շրջանավարտներով, նույնիսկ ուսանողներով։

Մ. Զաքարյանը որպես ֆակուլտետի հաջողություններ կարևորեց ներքոհիշյալ ձեռքբերումները.

- Ռազմավարական ծրագրի հիման վրա մշակված գործողությունների տարեկան պլանին համապատասխան գործունեություն։
- Տարածաշրջանի դիմորդների կողմից և աշխատաշուկայում պահանջված, մշտադիտարկված և վերանայված վերջնարդյունքներով «Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա» կրթական ծրագրի իրականացում։
- Moodle առցանց ուսուցման համակարգի կիրառում ֆակուլտետի բոլոր դասախոսների կողմից։

- Ուսումնական գործընթացի անխափան իրականացում դրա համար անհրաժեշտ ենթակառուցվածքներով. ժամանակակից հզոր համակարգիչներով սրահներ և լաբորատորիաներ:
- Մասնակցություն ներքին և միջազգային դրամաշնորհային ծրագրերին և գրանցած հաջողություններ:
- Բարձրակարգ պրոֆեսորադասախոսական կազմ, որում ներգրավված են նաև Մասնաճյուղի շրջանավարտներ:
- Ակտիվ համագործակցություն մարզի ծրագրավորման ֆիրմաների հետ. պրակտիկաների իրականացում, ավարտական աշխատանքների ղեկավարում:

Իսկ որպես դժվարություններ Մ. Զաքարյանը կարևորեց ներքոնշյալ խնդիրները՝

- Պլանավորված գործընթացների ամբողջությամբ իրականացման խնդիրներ:
- Կրթական ծրագրի վերջնադյունքներին ամբողջությամբ հասնելու խնդիրներ:
- Moodle առցանց ուսուցման համակարգի հնարավորությունների ոչ ամբողջական կիրառում դասախոսների կողմից:
- Ուսանողների ցածր մոտիվացիա և ուսման ցածր առաջադիմություն:
- Ըստ նոր ուղղությունների դասախոսական կազմի համալրման խնդիրներ:
- Դասավանդման, ուսումնառության և գնահատման ժամանակակից մեթոդների ոչ լիարժեք կիրառում դասախոսների կողմից:
- Հետազոտական և ավարտական աշխատանքների ղեկավարման գործընթացներում ոլորտի բարձրակարգ մասնագետների ներգրավման խնդիրներ:
- Գիտահետազոտական գործունեության պասիվություն դասախոսական կազմի կողմից:
- Մասնաշենքի վերանորոգման խնդիրներ:

Այնուհետև Մ. Զաքարյանը նշեց, որ վերջին տարիներին կայունացել է ծրագրի դիմորդների թիվը, բարձրացել է մրցութային ցուցանիշը և մրցութային շեմը հաղթահարող դիմորդների մասնաբաժինը: Ծրագրի ուսանողները հետաքրքրված են ծրագրի նոր կառուցվածքով, որն առաջարկում է 3 հատուկ մասնագիտացում, ուսանողների մոտիվացիան նկատելիորեն բարձրացել է միկրոսխեմաների և սարքերի ծրագրավորման լաբորատորիայի ստեղծմամբ և գրանցվել են առաջին հաջողությունները: Թվային անվտանգության լաբորատորայի ստեղծմամբ բարձրացել է հետաքրքրությունը տեղեկատվական անվտանգության նոր ուղղության նկատմամբ, այստեղ հաջողությամբ իրականացվում են նաև վերջին 2 տարիների մասնագիտական պրակտիկաները: Ծրագրի վերջին տարիների շրջանավարտների կեսից ավելին մինչև ավարտելը, նաև տարբեր կուրսերի շատ ուսանողներ աշխատում են մասնագիտությամբ:

ԵՊՀ ԻՄ 2022-2023 ուսումնական տարվա գործունեության վերաբերյալ Մ. Զաքարյանի ներկայացրած հաշվետվության մանրամասներին կարող եք ծանոթանալ հավելված 1-ում:

Արտահայտվեցին –ԵՊՀ ԻՄ տնօրենի պաշտոնակատար Ա. Մակարյանը, ԵՊՀ ԻՄ փոխտնօրեն Մ. Օթարյանը, ԵՊՀ ԻՄ ընդհանուր մաթեմատիկայի և բնագիտության ամբիոնի վարիչի ժամանակավոր պաշտոնակատար Գ. Սիմոնյանը և այլք:

Հաշվետվության ներկայացումից հետո անդրադարձ կատարվեց գիտական խորհրդի նիստի մասնակիցների հարցերին, որոնք հիմնականում վերաբերում էին կրթական ծրագրերին և դասավանդման որակին, ԵՊՀ ԻՄ-ում այլ մասնագիտությունների ներդրման

հնարավորությանը: Մասնավորապես Ա. Մակարյանը նշեց, որ անհրաժեշտ է մտածել ֆակուլտետի վարկի և գրավչության բարձրացման ուղղությամբ:

1.2 Հումանիտար գիտությունների ֆակուլտետի դեկանի հաշվետվությունը ներկայացրեց ֆակուլտետի դեկանի պաշտոնակատար բ.գ.թ., դոցենտ Կ. Պողոսյանը:

Նա նշեց, որ Հումանիտար գիտությունների ֆակուլտետը ԵՊՀ ԻՄ գիտակրթական գործունեություն իրականացնող հիմնական ստորաբաժանումներից է, որն իրականացնում է բարձրագույն մասնագիտական կրթություն յոթ կրթական ծրագրերով՝ («Պատմություն», «Հայոց լեզու և գրականություն», «Անգլերեն լեզու և գրականություն», «Ֆրանսերեն լեզու և գրականություն», «Ռուսաց լեզու և գրականություն», «Հոգեբանություն», «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա») բակալավրիատում և մեկ կրթական ծրագրով («Դպրոցական մանկավարժություն և մեթոդիկա») մագիստրատուրայում: Ֆակուլտետն իր գործունեությունն իրականացնում է ուսումնական, մանկավարժական, գիտական և ուսումնաօժանդակ տարաբնույթ աշխատանքներով: Նա որպես հաջողություններ կարևորեց.

- Ֆակուլտետի մասնագիտացումներն ընտրող ուսանողների կայուն թվաքանակը,
- Ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական համակազմը լրացվում է փորձառու հրավիրյալ դասախոսներով, ինչպես նաև մեր շրջանավարտներով,
- «Սոցիալ-մանկավարժական նորարարությունները կրթության մեջ» երիտասարդ գիտնականների միջազգային համաժողովի կազմակերպումը,
- «Բազմամշակույթ աշխարհում ռուսաց լեզվի և մշակույթի ուսանողների կրթության արդյունավետության բարձրացում Հայաստանում» խորագիրը կրող ամառային դպրոցի կազմակերպումը:

Դժվարություններից առանձնացվեց Ֆինանսավորման աղբյուրներ գտնելու անհրաժեշտությունը և ուսումնական տարածքների պակասը:

Կ. Պողոսյանը նշեց, որ Ֆակուլտետում իրավիճակի բարելավման և նոր արդյունքների գրանցման համար անհրաժեշտ է ակտիվացնել այցերը մարզի դպրոցներ՝ տարբեր մասնագետների մասնակցությամբ, որոնք հանդես կգան ակնարկային դասախոսություններով, ինչպես նաև գովազդել մագիստրոսական կրթական ծրագիրը, որն իր շրջանավարտներին աշխատանքի լրացուցիչ հնարավորություն է տալիս՝ դպրոցում որպես ուսուցիչ աշխատելու:

Կ. Պողոսյանի ներկայացրած հաշվետվության մանրամասներին կարող եք ծանոթանալ հավելված 2-ում:

Արտահայտվեցին –ԵՊՀ ԻՄ տնօրենի պաշտոնակատար Ա. Մակարյանը, ԵՊՀ ԻՄ փոխտնօրեն Մ. Օթարյանը և այլք:

Հարցերն ու դիտողությունները հիմնականում վերաբերում էին կրթության որակին և ԵՊՀ ԻՄ-ում այլ մասնագիտությունների ներդրման հնարավորությանը: Մասնավորապես Ա. Մակարյանը և Մ. Օթարյանը կարևորեցին ֆակուլտետում առավել օբյեկտիվ գնահատման խնդիրները: Նշվեց, որ կան ուսանողներ, որոնք քննությունների ժամանակ բարձր գնահատականներ են ստացել, սակայն պրակտիկայի ժամանակ իրենց համապատասխան չեն դրսևորել: Նշվեց, որ շատ են գերազանց գնահատականները, որոնց օբյեկտիվ լինելը կարելի է որոշել տարբեր համեմատական վերլուծություններով:

1.3 **Տնտեսագիտության ֆակուլտետի դեկանի հաշվետվությունը ներկայացրեց ֆակուլտետի դեկանի պաշտոնակատար ֆ.մ.գ.թ., դոցենտ Ա. Մարգարյանը***:*

Նա, որպես, ձեռքբերումներ, նշեց ֆակուլտետում առկա դիմորդների և ուսանողների թվաքանակի աճը, ուսանողների առաջադիմության կայուն ցուցանիշները, կրթական ծրագրերի մրցունակության բարձրացումը, դասավանդման որակի բարելավումը, ուսանողների հետազոտական կարողությունների բարելավումը, կիրառական նշանակության ավարտական աշխատանքները, մասնագիտական աշխատանքի տեղավորված շրջանավարտները: Առկա դժվարություններից Ա. Մարգարյանը կարևորեց.

- դիմորդների անբավարար պատրաստվածության մակարդակը,
- բարձր տարիք ունեցող դասախոսների ժամանակակից տեխնիկական միջոցներին չտիրապետելը,
- հեռակա ուսուցման համակարգի ուսանողների զբաղվածությունը և մոտիվացիայի բացակայությունը(անվճար տեղեր չկան),
- շենքային պայմանների սահմանափակ հնարավորությունները,
- «Զբոսաշրջություն» կրթական ծրագրի դիմորդ-ընդունվածների ցածր ցուցանիշը:

Նա աշխատանքի արդյունավետության հետագա բարելավման համար առաջարկեց մշակել կրթական կարիքների վերհանման նոր մեխանիզմներ, գովազդել հաջողություններն ու ձեռքբերումներն ի նպաստ ֆակուլտետի գործունեության հետագա բարելավման համար, կազմակերպել նախապատրաստական դասընթացներ ընդունելության քննությունները հաղթահարելու նպատակով, կցել երիտասարդ մագիստրանտներին կամ աշխատակիցներին՝ ավագ սերնդի դասախոսներին էլեկտրոնային համակարգից օգտվելու նպատակով, ներդնել խրախուսման նոր մեխանիզմներ՝ հեռակա ուսուցման ուսանողների առաջադիմությունը խթանելու միտումով:

Ա. Մարգարյանի հաշվետվությունը կարող եք տեսնել հավելված 3-ում:

Արտահայտվեցին –ԵՊՀ ԻՄ տնօրենի պաշտոնակատար Ա. Մակարյանը, ԵՊՀ ԻՄ փոխտնօրեն Մ. Օթարյանը, Տուրիզմի և մշակութաբանության ամբիոնի վարիչի ժ/պ Գ. Հովհաննիսյանը, ԵՊՀ ԻՄ ընդհանուր մաթեմատիկայի և բնագիտության ամբիոնի վարիչի ժամանակավոր պաշտոնակատար Գ. Սիմոնյանը, ՄԿՈԱ բաժնի վարիչ Մ. Ճաղարյանը, ՈՒԽ նախագահ Դ. Ալեքսանյանը և այլք:

Հարցերը հիմնականում վերաբերում էին կրթական ծրագրերին, ԵՊՀ ԻՄ-ում այլ մասնագիտությունների ներդրման հնարավորությանը, գնահատման օբյեկտիվությանը և մատուցվող կրթության որակին: Մասնավորապես, կարևորվեց կարճ ժամանակահատվածում ուսանողներին մոտիվացնելու և տարեց դասախոսների կողմից Մուդլի անբողջական հնարավորությունների օգտագործման արդյունքում կրթության որակի բարձրացման հնարավորությունը:

1.4 Կիրառական արվեստի ֆակուլտետի դեկանի հաշվետվությունը ներկայացրեց բ.գ.թ., դոցենտ Վ. Աղաբաբյանը:

Նա նշեց, որ Կիրառական արվեստի ֆակուլտետն իրականացնում է բարձրագույն մասնագիտական կրթություն «Դիզայն» և «Դեկորատիվ-կիրառական արվեստ» կրթական ծրագրերով: Ֆակուլտետն իր գործունեությամբ խթանում է դիզայնի, ժողովրդական հին և նոր արհեստների պահպանումը, զարգացումը և տարածումը: Վերջին տարիներին մեծ աշխատանքներ են կատարվել գործվածքի, մետաղների, փայտի գեղարվեստական մշակման, խեցեգործության, ապակենկարչության, զարդարվեստի, քանդակի, ինտերիերի և էքստերիերի, հագուստի նախագծման և մոդելավորման ուղղություններով:

Ֆակուլտետում կրթություն է ստանում 77 ուսանող։ «Գծանկարի, գունանկարի և քանդակի» և «Դեկորատիվ կիրառական արվեստ և դիզայն» ամբիոններում դասավանդում են 1 պրոֆեսոր, 3 դոցենտ, 7 ասիստենտ և 9 դասախոս։ Ֆակուլտետը պարբերաբար կազմակերպել է «Բաց դռների օրեր» և ապագա դիմորդների ճանաչողական այցեր՝ ֆակուլտետի կրթական հնարավորությունները ներկայացնելու համար։ Մեզ հյուր են եկել Կայանավանի, Իջևանի թիվ 3, թիվ 5 հիմնական դպրոցների, «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրի, Տավուշի՝ Պ. Տէվէճեանի անվան տարածաշրջանային քոլեջի աշակերտներն ու ուսանողները։ Հանդիպումներ են իրականացվել նաև Կողբի, Դիլիջանի, Իջևանի արվեստի դպրոցներում։ Հանդիպումներին մասնակցել են նաև ֆակուլտետի ուսանողները։ Նշվեց, որ 2023 թ. օգոստոսի 10-ից 25-ը Իտալիայում կազմակերպված BIENNALE D’ARTE DELLA RIVIERA ROMANA ցուցադրությանը մասնակցել է նաև Կիրառական արվեստի ֆակուլտետի Գծանկարի, գունանկարի և քանքակի ամբիոնի վարիչ, Հայաստանի Նկարիչների Միության անդամ Համլետ Ասատրյանը։ Դեկորատիվ-կիրառական արվեստի և դիզայնի ամբիոնի ասիստենտներ Ա. Չիբուխչյանն ու Դ. Չիբուխչյանը մասնակցել են Իջևանի համայնքապետարանի և «Ուրբան» կայուն զարգացման հիմնադրամի EU4Culture-ի «Մենք ենք մեր սարերը» ծրագրի դրամաշնորհային մրցույթին և ճանաչվել հաղթող:

«Դեկորատիվ-կիրառական արվեստ» կրթական ծրագրի 4-րդ կուրսի ուսանողները «Թանգարանային գործ» առարկայի շրջանակներում 2023թ. հոկտեմբերի 17-ին այցելել են Հայաստանի պատմության թանգարան և «Էրեբունի» պատմահնագիտական արգելոց-թանգարան: Ուսանողները ծանոթացել են թանգարանային ֆոնդերում պահվող կիրառական արվեստի նմուշներին, հավաքածուների համալրման և պահպանման եղանակներին:

Վ. Աղաբաբյանի հաշվետվությունը կարող եք տեսնել հավելված 4-ում։

Արտահայտվեցին –ԵՊՀ ԻՄ տնօրենի պաշտոնակատար Ա. Մակարյանը, ԵՊՀ ԻՄ փոխտնօրեն Մ. Օթարյանը և այլք։

Հարցերն ու առաջարկությունները հիմնականում վերաբերում էին կրթության որակին, գնահատման օբյեկտիվությանը, տարածքների բարելավմանը, ֆակուլտետում այլ մասնագիտությունների ներդրման հնարավորությանը։

Այնուհետև կազմակերպվեց փակ գաղտնի քվեարկություն դեկանների կատարած աշխատանքը գնահատելու համար, որոնց արդյունքները ներկայացրեց հանձնաժողովի նախագահ Վ. Պողոսյանը։

Նա նշեց, որ Գիտական խորհրդի 35 անդամներից ներկա էին 29-ը: Քվեարկել են Բնական գիտությունների ֆակուլտետի դեկանի պաշտոնակատար, ֆ.մ.գ.թ., դոցենտ Մանվել Զաքարյանի, Հումանիտար գիտությունների ֆակուլտետի դեկանի պաշտոնակատար, բ.գ.թ., դոցենտ Կարինե Պողոսյանի, Տնտեսագիտության ֆակուլտետի դեկանի պաշտոնակատար, ֆ.մ.գ.թ., դոցենտ Ալեքսան Մարգարյանի և Կիրառական արվեստի ֆակուլտետի դեկանի պաշտոնակատար, բ.գ.թ., դոցենտ Վահան Աղաբաբյանի 2022-2023 ուստարվա գործունեությունը բավարար գնահատելու համար:

Քվեարկությանը մասնակցել են գիտական խորհրդի 29 անդամներ, բաժանվել է 29 քվեաթերթիկ, քվեատուփում առկա է 29 քվեաթերթիկ:

Քվեարկության արդյունքներն են՝

Զաքարյան Մանվել 27 կողմ, 2 դեմ:

Պողոսյան Կարինե 28 կողմ, 1 դեմ:

Մարգարյան Ալեքսան 27 կողմ, 2 դեմ:

Աղաբաբյան Վահան 28 կողմ, 1 դեմ:

Անվավեր քվեաթերթիկների քանակը 0: Փակ (գաղտնի) քվեարկության արդյունքներով որոշվում է.

- Բնական գիտությունների ֆակուլտետի դեկանի պաշտոնակատար, ֆ.մ.գ.թ., դոցենտ Մանվել Զաքարյանի 2022-2023 ուստարվա գործունեությունը գնահատել բավարար:
- Հումանիտար գիտությունների ֆակուլտետի դեկանի պաշտոնակատար, բ.գ.թ., դոցենտ Կարինե Պողոսյանի 2022-2023 ուստարվա գործունեությունը գնահատել բավարար:
- Տնտեսագիտության ֆակուլտետի դեկանի պաշտոնակատար, ֆ.մ.գ.թ., դոցենտ Ալեքսան Մարգարյանի 2022-2023 ուստարվա գործունեությունը գնահատել բավարար:
- Կիրառական արվեստի ֆակուլտետի դեկանի պաշտոնակատար, բ.գ.թ., դոցենտ Վահան Աղաբաբյանի 2022-2023 ուստարվա գործունեությունը գնահատել բավարար:

Այնուհետև բաց քվեարկությամբ, միաձայն՝ 29 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ, *որոշեցին.*

ՈՐՈՇՈՒՄ

Հաստատել փակ գաղտնի քվեարկության արդյունքները:

Արդյունքում որոշվեց.

ՈՐՈՇՈՒՄ N 71/1

Ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 23-րդ կետի 11-րդ ենթակետով և «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի աշխատակարգի 4-րդ կետի 11-րդ ենթակետով՝ «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

1. Բնական գիտությունների ֆակուլտետի դեկանի պաշտոնակատար, ֆ.մ.գ.թ., դոցենտ Մանվել Զաքարյանի 2022-2023 ուստարվա գործունեությունը գնահատել բավարար:
2. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի բնական գիտությունների ֆակուլտետի դեկանի պաշտոնակատար, ֆ.մ.գ.թ., դոցենտ Մանվել Զաքարյանի 2022-2023 ուստարվա հաշվետվություններն ըստ ԵՊՀ ԻՄ 2022-2026թթ. ռազմավարական ծրագրի հարցի վերաբերյալ հաղորդումն ընդունել ի գիտություն:

ՈՐՈՇՈՒՄ N 71/2

Ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 23-րդ կետի 11-րդ ենթակետով և «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի աշխատակարգի 4-րդ կետի 11-րդ ենթակետով՝ «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

1. Հումանիտար գիտությունների ֆակուլտետի դեկանի պաշտոնակատար, բ.գ.թ., դոցենտ Կարինե Պողոսյանի 2022-2023 ուստարվա գործունեությունը գնահատել բավարար:
2. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի հումանիտար գիտությունների ֆակուլտետի դեկանի պաշտոնակատար, բ.գ.թ.,

դոցենտ Կարինե Պողոսյանի 2022-2023 ուստարվա հաշվետվություններն ըստ ԵՊՀ ԻՄ 2022-2026թթ. ռազմավարական ծրագրի հարցի վերաբերյալ հաղորդումն ընդունել ի գիտություն։

ՈՐՈՇՈՒՄ N 71/3

Ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 23-րդ կետի 11-րդ ենթակետով և «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի աշխատակարգի 4-րդ կետի 11-րդ ենթակետով՝ «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

1. Տնտեսագիտության ֆակուլտետի դեկանի պաշտոնակատար, ֆ.մ.գ.թ., դոցենտ Ալեքսան Մարգարյանի 2022-2023 ուստարվա գործունեությունը գնահատել բավարար։
2. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի տնտեսագիտության ֆակուլտետի դեկանի պաշտոնակատար, ֆ.մ.գ.թ., դոցենտ Ալեքսան Մարգարյանի 2022-2023 ուստարվա հաշվետվություններն ըստ ԵՊՀ ԻՄ 2022-2026թթ. ռազմավարական ծրագրի հարցի վերաբերյալ հաղորդումն ընդունել ի գիտություն։

ՈՐՈՇՈՒՄ N 71/4

Ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 23-րդ կետի 11-րդ ենթակետով և «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի աշխատակարգի 4-րդ կետի 11-րդ ենթակետով՝ «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

1. Կիրառական արվեստի ֆակուլտետի դեկանի պաշտոնակատար, բ.գ.թ., դոցենտ Վահան Աղաբաբյանի 2022-2023 ուստարվա գործունեությունը գնահատել բավարար։
2. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի կիրառական արվեստի ֆակուլտետի դեկանի պաշտոնակատար, բ.գ.թ., դոցենտ Վահան Աղաբաբյանի 2022-2023 ուստարվա հաշվետվություններն ըստ ԵՊՀ ԻՄ 2022-2026թթ. ռազմավարական ծրագրի հարցի վերաբերյալ հաղորդումն ընդունել ի գիտություն։

Օրակարգի երկրորդ՝ «ԵՊՀ ԻՄ-ում դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ 2022-2023 ուստարվա ուսանողական հարցումների արդյունքների մասին» հարցի կապակցությամբ լսեցին ԵՊՀ ԻՄ ՈՒՄՎ պետ Ա. Դավթյանի հաղորդումը։

Նա նշեց, որ ԵՊՀ Իջևանի մասնաճյուղում դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ ուսանողական հարցումները ուսումնամեթոդական վարչությունը ֆեկուլտետների հետ համատեղ կազմակերպել է համաձայն «Երևանի պետական համալսարանում դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ ուսանողների հարցման կարգ»-ի, հարցաշարի և ժամանակացույցի (առաջին կիսամյակի հարցումներն իրականացվել են փետրվարի 7-ից մինչև 22-ը՝ առկա ուսուցմամբ սովորողների և մարտի 10-ից մինչև 25-ը՝ հեռակա ուսուցմամբ սովորողների համար, իսկ երկրորդ կիսամյակի հարցումները՝ հուլիսի 1-ից մինչև սեպտեմբերի 7-ը՝ առկա և հեռակա ուսուցմամբ սովորողների համար)։ Թե՛ առկա, թե՛ հեռակա ուսուցման համակարգերում հարցումներն իրականացվել են առցանց եղանակով։ 2022-2023 ուստարվա I կիսամյակի

հարցումներին մասնակցել են Մասնաճյուղի՝ առկա ուսուցման 634 ուսանողից 411-ը (ուսանողական հիմնական համակազմի 64.83 %-ը), հեռակա ուսուցման 491 ուսանողից 169-ը (ուսանողական հիմնական համակազմի 34.63 %-ը)։ II կիսամյակի հարցումներին մասնակցել են առկա ուսուցման 505 ուսանողից 220-ը (ուսանողական հիմնական համակազմի 43.56 %-ը), հեռակա ուսուցման 402 ուսանողից 71-ը (ուսանողական հիմնական համակազմի 17.66 %-ը)։ Երկրորդ կիսամյակի մասնակիցների նվազումը պայմանավորված է հարցման ժամանակացույցով (համընկնում է ուսանողների արձակուրդային ժամանակաշրջանին)։ Նշվեց, որ դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ 2022-2023 ուստարվա ուսանողական հարցումների վերլուծությունը կատարվել է վերջին 3 տարիների համար։ Հարցաշարի առաջին երկու հարցերը, որոնք վերաբերում են կոռուպցիոն երևույթներին, Մասնաճյուղում տոկոս չեն կազմում։ Հարցաշարի երրորդ հարցը, որը վերաբերում էր կրթական ծրագրի ղեկավարների աշխատանքին՝ առկա ուսուցման համակարգում հարցին պատասխանել է 223 ուսանող, որից 191-ը (90%) արդյունավետ է համարել կրթական ծրագրերի ղեկավարների աշխատանքը, իսկ հեռակա ուսուցման համակարգում հարցին պատասխանել է 57 ուսանող, որից 55-ը (97%) նույնպես համարել է արդյունավետ։

Դեկանատի աշխատակիցների վերաբերյալ գրանցված ցուցանիշով ամենաբարձրը առկա ուսուցման համակարգում ունի Տնտեսագիտության ֆակուլտետը, իսկ ամենացածրը՝ Բնական գիտությունների ֆակուլտետը։ Հեռակա ուսուցման համակարգում ամենաբարձր ցուցանիշն ունի Բնական գիտությունների ֆակուլտետը, իսկ ամենացածրը՝ Հումանիտար գիտությունների ֆակուլտետը։

Ա. Դավթյանի ամբողջական հաղորդումը կարող եք տեսնել հավելված 5-ում։

Արտահայտվեցին՝ ԵՊՀ ԻՄ տնօրենի պաշտոնակատար Ա. Մակարյանը, ԵՊՀ ԻՄ փոխտնօրեն Մ. Օթարյանը, Տուրիզմի և մշակութաբանության ամբիոնի վարիչի ժ/պ Գ. Հովհաննիսյանը, ԵՊՀ ԻՄ ընդհանուր մաթեմատիկայի և բնագիտության ամբիոնի վարիչի ժ/պ Գ. Սիմոնյանը, ՄԿՈԱ բաժնի վարիչ Մ. Ճաղարյանը, ՈՒԽ նախագահ Դ. Ալեքսանյանը և այլք։

Անդրադարձ կատարվեց կրթության որակի բարձրացմանը վերաբերվող ուսանողների առաջարկներին, որոնք հիմնականում վերաբերում էին ուսումնական գրականության և պատմական քարտեզների առկայությանը։ Նշվեց, որ այս խնդիրը կարելի է լուծել լսարաններում տեղադրված պրոյեկտորների միջոցով։

Այնուհետև բաց քվեարկությամբ, միաձայն՝ 29 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ, *որոշեցին.*

ՈՐՈՇՈՒՄ

«ԵՊՀ ԻՄ-ում դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ 2022-2023 ուստարվա ուսանողական հարցումների արդյունքների մասին» հարցի վերաբերյալ ԵՊՀ ԻՄ ՈՒՄՎ պետ Ա. Դավթյանի հաղորդումն ընդունել ի գիտություն։

Օրակարգի երրորդ՝ ««Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղում դասագրքերի ուսումնական և ուսումնամեթոդական այլ գրականության հրատարակման երաշխավորման գործընթացի կանոնակարգը հաստատելու մասին» լսեցին ԵՊՀ ԻՄ գիտական քարտուղար Մ. Աթոյանի հաղորդումը։

Նա նշեց, որ սույն կանոնակարգը մշակվել է ԵՊՀ ԻՄ-ում գործող իրավական ակտերին համապատասխան և ԵՊՀ ԻՄ զարգացման 2022-2026թթ. ռազմավարական ծրագրի

պահանջներից ելնելով: Սահմանում է ԵՊՀ ԻՄ-ում դասագրքերի, ուսումնական ձեռնարկների, ուսումնամեթոդական և այլ գրականության հրատարակման երաշխավորման գործընթացի կազմակերպման իրավական հիմքերը, սկզբունքները, երաշխավորման ենթակա աշխատանքներին ներկայացվող պահանջները, գրախոսման և երաշխավորման ընթացակարգը: Այնուհետև Մ. Աթոյանը համառոտ անդրադարձավ նախագծի առանցքային կետերին /կանոնակարգը տես հավելված 6-ում/:

Արտահայտվեցին՝ ԵՊՀ ԻՄ տնօրենի պաշտոնակատար Ա. Մակարյանը, ԵՊՀ ԻՄ փոխտնօրեն Մ. Օթարյանը, Տուրիզմի և մշակութաբանության ամբիոնի վարիչի ժ/պ Գ. Հովհաննիսյանը, ԵՊՀ ԻՄ ընդհանուր մաթեմատիկայի և բնագիտության ամբիոնի վարիչի ժամանակավոր պաշտոնակատար Գ. Սիմոնյանը և այլք:

Մասնավորապես Գ. Հովհաննիսյանը և Գ. Սիմոնյանը նշեցին, որ մշակվել է բավականին կարևոր կանոնակարգ, որը բավականին խիստ պահանջներ է սահմանում մեթոդական աշխատանքների համար: Նրանք առաջարկեցին փոքր տեխնիկական խմբագրումներ 5.1 և 9-րդ կետերում, ինչպես նաև հավելված 3-ի 6-րդ և 7-րդ կետերում:

Ա.Մակարյանը նույնպես կարևորեց այս գործընթացի կանոնակարգումը, նշելով, որ այն ավելի շուտ էր նախատեսված, և առաջարկեց հաստատել առաջարկվող փոփոխություններով հանդերձ:

Այնուհետև բաց քվեարկությամբ, միաձայն՝ 29 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ, *որոշեցին.*

ՈՐՈՇՈՒՄ N 71/5

Ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 23-րդ կետի 5-րդ ենթակետով և «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի աշխատակարգի 4-րդ կետի 5-րդ ենթակետով, «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

1. Հաստատել «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղում դասագրքերի ուսումնական և ուսումնամեթոդական այլ գրականության հրատարակման երաշխավորման գործընթացի կանոնակարգը՝ համաձայն հավելված 6-ի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

Ընթացիկ հարցեր՝

4.1. ***Լսեցին - «***«Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի հայոց պատմության և հասարակագիտության ամբիոնի ասիստենտ, պատմական գիտությունների թեկնածու Արա Կամոյի Ազատյանին ԵՊՀ գիտական խորհրդում դոցենտի գիտական կոչում ստանալու համար երաշխավորելու և միջնորդելու մասին» հարցի վերաբերյալ ԵՊՀ ԻՄ գիտական քարտուղար Մ. Ս. Աթոյանի հաղորդումը:

Մ. Աթոյանը նշեց, որ Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի հայոց պատմության և հասարակագիտության ամբիոնի 2023թ. հոկտեմբերի 01-ի թիվ 2 նիստում քննարկվել է նույն ամբիոնի ասիստենտ պատմական գիտությունների թեկնածու Արա Ազատյանին դոցենտի գիտական կոչում շնորհելու հարցը և, հաշվի առնելով հայցողի գիտամանկավարժական գործունեության տվյալները, նրան երաշխավորել են դոցենտի գիտական կոչում շնորհելու համար և դիմել են ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդին՝ առաջարկելով միջնորդել ԵՊՀ գիտական խորհրդին՝ պատմական գիտությունների թեկնածու Արա

Ազատյանին շնորհել դոցենտի գիտական կոչում և համապատասխան առաջարկով դիմել ՀՀ ԲՈԿ:

Նա նշեց, որ ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդին կից մրցութային հանձնաժողովը քննարկել է խնդրո առարկա հարցը և, ուսումնասիրելով հայցողի անձնական գործի նյութերը, արձանագրել է հետևյալը.

«Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի հայոց պատմության և հասարակագիտության ամբիոնի ասիստենտ, պատմական գիտությունների թեկնածու Արա Կամոյի Ազատյանը 2014թ.-ի ապրիլի 7-ին ընդունվել է աշխատանքի ԵՊՀ ԻՄ «Հայոց պատմության և հասարակագիտության» ամբիոնում, որպես գործավար-օպերատոր, 2011թ.ից՝ նույն ամբիոնի ասիստենտ, 2017թ. սեպտեմբերի 1-ին նշանակվել է ԵՊՀ ԻՄ տնտեսագիտության ֆակուլտետի դեկանի օգնական և աշխատել է մինչ 2018թ-ի հուլիսի 26-ը: Վերոհիշյալ աշխատանքներին զուգահեռ Ա. Ազատյանը 2015-2018թթ. համատեղության կարգով 0,25 դրույքով աշխատել է որպես Հայոց պատմության և հասարակագիտության ամբիոնի դասախոս: Ա. Ազատյան 2019թ. հունվարի 21-ից առ այսօր 1,0 դրույքով աշխատում է նշված ամբիոնում, որպես ասիստենտ:

Ա. Ազատյանը թեկնածուական ատենախոսությունը պաշտպանել է 24.02.2021թ.-ին: Նա ունի հրատարակված 13 աշխատանք, որոնցից 5-ը՝ գիտական և 1 ուսումնամեթոդական աշխատանք հրատարակվել են ատենախոսության պաշտպանությունից հետո:

Մ. Աթոյանը նշեց, որ Ա. Ազատյանի գիտամանկավարժական գործունեության տվյալները բավարարում են Հայաստանի Հանրապետության կառավարության 2001թ. հուլիսի 9-ի N 615 որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետությունում գիտամանկավարժական կադրերին պրոֆեսորի և դոցենտի գիտական կոչումներ շնորհելու մասին կարգ»-ի 5-րդ՝ «Դոցենտի գիտական կոչում կարող է շնորհվել» կետի 2)-րդ ենթակետին, ինչպես նաև կարգի 7-րդ կետում նշված նորմատիվային փաստաթղթերի պահանջներին, և առաջարկեց երաշխավորել ԵՊՀ ԻՄ հայոց պատմության և հասարակագիտության ամբիոնի ասիստենտ, պատմական գիտությունների թեկնածու Արա Կամոյի Ազատյանին դոցենտի գիտական կոչում ստանալու համար սահմանված գործընթացին մասնակցելու համար:

Փակ գաղտնի քվեարկության արդյունքներով՝ ԵՊՀ ԻՄ հայոց պատմության և հասարակագիտության ամբիոնի ասիստենտ, պատմական գիտությունների թեկնածու Արա Կամոյի Ազատյանին քվեարկել էին կողմ՝ 29, դեմ՝ 0, անվավեր՝ 0:

Այնուհետև բաց քվեարկությամբ՝ 29 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ, **որոշվեց**.

- Հաստատել փակ գաղտնի քվեարկության արդյունքները:

Այսպիսով փակ գաղտնի քվեարկության արդյունքներով որոշվեց.

ՈՐՈՇՈՒՄ N 71/6

Հաշվի առնելով, որ «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի հայոց պատմության և հասարակագիտության ամբիոնի ասիստենտ, պատմական գիտությունների թեկնածու Արա Կամոյի Ազատյանի գիտամանկավարժական գործունեության տվյալները լիովին համապատասխանում են Հայաստանի Հանրապետության կառավարության 2001թ. հուլիսի 9-ի N 615 որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետությունում գիտամանկավարժական կադրերին պրոֆեսորի և դոցենտի գիտական կոչումներ շնորհելու մասին կարգ»-ի 5-րդ՝ «Դոցենտի գիտական կոչում կարող է շնորհվել» կետի 2)-րդ ենթակետին, ինչպես նաև կարգի 7-րդ կետում նշված

նորմատիվային փաստաթղթերի պահանջներին, ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 23-րդ կետի 20-րդ ենթակետով և «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի աշխատակարգի 4-րդ կետի 20-րդ ենթակետով՝ «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

1. Երաշխավորել «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի հայոց պատմության և հասարակագիտության ամբիոնի ասիստենտ, պատմական գիտությունների թեկնածու Արա Կամոյի Ազատյանին դոցենտի գիտական կոչում ստանալու համար:
2. Միջնորդել ԵՊՀ գիտական խորհրդին՝ «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի հայոց պատմության և հասարակագիտության ամբիոնի ասիստենտ, պատմական գիտությունների թեկնածու Արա Կամոյի Ազատյանին շնորհել դոցենտի գիտական կոչում և համապատասխան առաջարկով դիմել ՀՀ ԲՈԿ:

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ_____ Ա. Հ. ՄԱԿԱՐՅԱՆ

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ_____Մ. Ս. ԱԹՈՅԱՆ

ՀԱՎԵԼՎԱԾ

«Երևանի պետական համալսարան»
հիմնադրամի ռեկտորի
2023 թ. հոկտեմբերի ____ -ի
թիվ _____ հրամանի

ԵՊՀ ԻՄ բնական գիտությունների ֆակուլտետի դեկանի հաշվետվություն

Ֆակուլտետ _Բնական գիտությունների_____

Դեկան_____Ֆ.մ.գ.թ., դոցենտ Մ. Ա. Զաքարյան_____

Ժամանակահատված___2022-2023ուստարի 2023թ. սեպտեմբեր-դեկտեմբեր_____

Ներկայացման

ամսաթիվ____18.11.2023թ._____

Երևան 2023

Մաս 1. Ֆակուլտետի գործողությունների պլանի կատարողական

(750 - 1500 բառի շրջանակում անդրադարձե՛ք ֆակուլտետի կողմից մշակված գործողությունների պլանին՝ ներկայացնելով գործողությունների մասով իրականացված աշխատանքների արդյունքները և պատասխանելով ստորև ներկայացված հարցերին:

1. Որո՞նք են գործողությունների իրականացման արդյունքում արձանագրված հիմնական հաջողությունները:
2. Ի՞նչ գործոններ են պայմանավորել նշված հաջողությունների գրանցումը:
3. Ինչպե՞ս եք պատրաստվում նշված հաջողությունները կամ ձեռքբերումները օգտագործել ի նպաստ ֆակուլտետի գործունեության արդյունավետության հետագա բարելավմանը:
4. Որո՞նք են գործողությունների իրականացման արդյունքում արձանագրված հիմնական անհաջողությունները կամ դժվարությունները:
5. Որո՞նք էին նշված անհաջողությունների կամ դժվարությունների առաջացման հիմնական պատճառները:
6. Ի՞նչ եք պատրաստվում նախաձեռնել նշված անհաջողությունների կամ դժվարությունների հաղթահարման ուղղությամբ և ի՞նչ ժամկետում:

Հաշվետու ուստարում ֆակուլտետն իր գործունեությունն իրականացրել է Մասնաճյուղի 2022-26թթ. զարգացման ռազմավարական ծրագրի իրականացման գործողությունների պլանին համաձայն՝ իր աշխատանքային պլանում ամրագրելով այն գործողությունները, որոնք պլանավորվել են ֆակուլտետների, նաև ամբիոնների կողմից իրականացման համար:

Ֆակուլտետն իր գործողությունների պլանի շրջանակներում իրականացնում է գործընթացներ, որոնք ուղղորդված են բարելավելու ուսումնական գործընթացի կազմակերպումը, նյութատեխնիկական բազան, դասախոսական կազմը և ստեղծելու կրթական անհրաժեշտ միջավայր, նպաստելու դիմորդների թվի աճին և իր շրջանավարտների ապագա կարիերայի ձևավորմանը:

Ֆակուլտետի գործունեության **հաջողությունը** պայմանավորված է այն հանգամանքով, որ ֆակուլտետում վերջին տարիներին **իրականացվում է միայն «Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա» կրթական ծրագիրը**, որն ընդհանուր առմամբ տարածաշրջանում պահանջված է դիմորդների կողմից, իսկ ծրագրի շրջանավարտները պահանջված են աշխատաշուկայում, քանի որ մարզում վերջին տարիներին ավելացել է IT ոլորտի կազմակերպությունների թիվը, որոնց աշխատակազմը համալրվում է հիմնականում ֆակուլտետի շրջանավարտներով, նույնիսկ ուսանողներով:

Հաշվի առնելով մասնագիտական ոլորտի զարգացման առկա միտումները և ուղղությունները, նաև Տավուշի մարզում գործող ծրագրավորման ֆիրմաների պահանջները ֆակուլտետը «Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա» կրթական ծրագրի վերանայման շրջանակներում, նաև 2022թ.-ին իրականացրած մշտադիտարկման արդյունքների հիման վրա, ծրագրում **իրականացրել է անհրաժեշտ փոփոխություններ**:

Մասնավորապես, կարևոր ձեռք բերում է ծրագրի նոր վերանայված տարբերակը, այն բացի հիմնական մասնագիտական կառուցամասից ներառում է նաև **3 հատուկ մասնագիտական կառուցամասեր 48 կրեդիտ բեռնվածությամբ:** Նրանք ուսանողներին հնարավորություն են տալիս 2-րդ կուրսի 2-րդ կիսամյակին որոշել իրենց նեղ մասնագիտական ուղղությունը. ծրագրավորում, ռոբոտաշինություն և մեխատրոնիկա, թվային անվտանգություն: Նոր ծրագրում, համաձայն «Ուսումնական գործընթացի կազմակերպման կարգ»-ի ներդրվել են **«շարժունության պատուհաններ»**, որին ծրագրի ուսանողները մասնակցելու են 2024-25 ուստարուց սկսած, այն հնարավորություն կտա 15 կրեդիտ բեռնվածությամբ ուսումնասիրել հարակից մասնագիտությունների դասընթացներ և լրացնել իրենց գիտելիքները և ընդհանրական կարողությունները և կողմնորոշվել ապագա կարիերայում:

Նոր կրթական ծրագրում վերանայվել են կրթական վերջնարդյունքները, նաև.

- արդիականացվել է որոշ առարկաների բովանդակությունը և թեմատիկան, ավելացվել են գործնական և լաբորատոր դասընթացների ժամաքանակները, ավելացվել է մասնագիտական պրակտիկաների քանակը (նախորդ ուստարիներին իրականացվել է 1 մասնագիտական պրակտիկա, հաշվետու ուստարվա ուսումնական պլանով՝ 2),
- ԷՀՄ ճարտարապետություն և Ասեմբլերի լեզու, Օպերացիոն համակարգեր դասընթացները միավորվել են և ուղղորդվել են դեպի միկրոպրոցեսորների ճարտարապետություն և ծրագրավորում,
- Web-ծրագրավորման առարկայի շրջանակում կատարվել է ուսումնական ծրագրի թարմացում այս ոլորտում նոր տեխնոլոգիաների ներառմամբ,
- վերանայվել է Տվյալների կառուցվածքներ առարկայի բովանդակությունը՝ համալրելով այն ավելի բարդ կառուցվածքներով, ինչպես նաև ստանդարտ գրադարաններում տվյալների կառուցվածքների իրականացման մանրամասներով,
- ծրագրում ներառվել են նոր դասընթացներ. «Մարդ–մեքենա հաղորդակցություն», «Ծրագրավորման ժամանակակակից լեզուներ (Python, Java, C#)» նեղ մասնագիտական դասընթացը և այլն:

Հատուկ ուշադրություն է դարձվում հետազոտական բաղադրիչով դասընթացների իրականացմանը, ուսանողների կողմից հետազոտական աշխատանքների իրականացման մակարդակին, թեմատիկային և գնահատմանը: Կարևոր ձեռքբերում է այն փաստը, որ հետազոտական աշխատանքների արդյունքների վերլուծությունը ցույց է տալիս, որ ուսանողները

հիմնականում բարեհաջող են իրականացրել այս գործընթացը: 2022-23 ուստարվա 1-ին կիսամյակում հետազոտական աշխատանք կատարած ուսանողներից 14-ը մասնակցել է ՄԿՈԱ բաժնի կողմից իրականացրած հարցմանը: Նրանք նշել են, որ հետազոտական աշխատանքը նրանց տվել է նոր գիտելիքներ (մասնակիցներից 11-ը), մասնագիտական հմտություններ (9-ը), ինքնուրույն աշխատելու ունակություններ (8-ը), վերլուծելու կարողություններ (6-ը) և այլն:

Հետազոտական գործունեության ակտիվացմանը նպաստել է նաև **2 նոր ուսումնական լաբորատորիաների բացումը**. միկրոէլեկտրոնիկայի և թվային անվտանգության ուղղվածություններով:

Պետք է նաև նշել, որ ֆակուլտետի ուսանոնղերի մասնագիտական կարողությունների ձևավորմանը նպաստում են նաև գործող 2 համակարգչային սրահները, որոնք հագեցած են ժամանակակից համակարգիչներով (յուրաքանչյուր սրահում տեղադրված է 16-20 ժամանակակից հզոր համակարգիչներ), ֆակուլտետում գործում է անվճար գերարագ ինտերնետ կապ:

Ֆակուլտետը բավականաչափ հաջողություններ է գրանցել նաև գիտահետազոտական աշխատանքների իրականացման ուղղությամբ, դասախոսների հիմնական մասը զբաղվում է գիտական գործունեությամբ, գրում են հոդվածներ, ուսումնական և ուսումնամեթոդական ձեռնարկներ (թվով՝ 10, նախորդ ուստարում՝ 16): Հաշվետու ուստարում ֆակուլտետի դասախոսները հրապարակել են 1 հոդված ԲՈՀ-ի կողմից հաստատված ամսագրում, 1 ուսումնական ձեռնարկ, 3 հոդված միջազգային ամսագրերում, 3 գիտական հոդված, 1 զեկույց գիտաժողովում, 1 թեզիս:

Հրատարակությունների քանակի նվազելը պայմանավորված է.

1. երիտասարդ հետազոտողների քիչ քանակով,
2. ցածր ֆինանսական խրախուսմամբ,
3. ԵՊՀ համապատասխան հետազոտական խմբերի հետ ոչ լիարժեք համագործակցությամբ,
4. դասախոսների ոչ լիարժեք մոտիվացմամբ:

Ֆակուլտետի աշխատակիցները մշտապես մասնակցում են մասնաճյուղի ներքին դրամաշնորհային մրցույթներին և այլ մրցույթների: 2021-22 ուստարում ֆակուլտետից ներքին դրամաշնորհային մրցույթում հաղթել են 2 ծրագիր:

Ֆակուլտետի 1 դասախոս մասնակցել է **միջազգային դրամաշնորհային ծրագրի** («Հողի էլեկտրաքիմիական պարամետրերի չափման սենսորի և նրա վրա հիմնված ավտոմատացված համակարգի մշակում», EU-Austria, ՀՀ Էկոնոմիկայի նախարարություն, ծրագրի գումարը՝ 6200 եվրո): Միջազգային ծրագրի գումարների միջոցով ֆակուլտետի ռոբոտաշինության լաբորատորիան ձեռք է բերել 1 դրոն, 2 դյուրակիր համակարգիչ, ռադիոդետալներ և չափիչ սարքեր:

Հաշվետու ուստարում ֆակուլտետից ներկայացված **3 ծրագրերը հաղթել են մասնաճյուղի**

<u>ներքին դրամաշնորհային մրցույթում</u>. դրանք են «Տավուշի մարզում օրգանական գյուղատնտեսության զարգացման հեռանկարները», «Տավուշի մարզի հանրակրթական դպրոցների և բուժհիմնարկների շրջակայքում աղմուկի ուսումնասիրություն» և «Տավուշի մարզի ջերմատնային տնտեսությունների համար ինֆորմացիոն ցանցի մշակում»: Այս ծրագրերից յուրաքանչյուր ներգրավվել են 1 երիտասարդ մասնագետ և 1 ուսանող:

Նաև հաշվետու ուստարում մասնաճյուղի **լավագույն դասախոս** և **լավագույն ուսանող** մրցանակները շահել են ֆակուլտետի ներկայացուցիչները:

Դասավանդման գործընթացում **<u>ներգրավված են բարձրակարգ մասնագետներ</u>**, որոնց մեջ մեծ թիվ են կազմում թեկնածուի գիտական աստիճանով (կազմի)և դոցենտի գիտական կոչումով դասախոսները:

Ավարտական աշխատանքների ղեկավարման համար ներգրավվում են նաև գործատու կազմակերպությունների առաջատար մասնագետներ: Հաշվետու ուստարում 3 ավարտական աշխատանք (առկա և հեռակա ուսուցման համակարգերում) իրականացվել է ֆակուլտետի դասախոս և «LT Coding» ՍՊԸ տնօրեն Լ.Ծատուրյանի ղեկավարությամբ: 2023-24 ուստարվա ավարտական աշխատանքների ղեկավարման համար ներգրավվել են **ևս 2 գործատու** կազմակերպությունների ներկայացուցիչներ՝ «Յեսոֆթ» ՍՊԸ տնօրեն, գործատու՝ Մ. Ավագյանը և Իջևանում թվային անվտանգության կրթական և արձագանքման կենտրոնի ղեկավար, գործատու՝ Ս.Մնացականյանը, նրանց կողմից ղեկավարվելու են 3 ավարտական աշխատանքներ, որոնք ներառում են ուսումնասիրությունների ծրագրավորման շրջանակները, և հնարավորություն են տալիս ընդլայնել հետազոտությունների ուղղությունները, ընդլայնել ուսանողների հետաքրքրությունների շրջանակը, նաև մասնակից դառնալ մարզում տեղեկատվական միջավայրի ձևավորմաը:

2023թ.-ի ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի նախագահն իր կարծիքն է արտահայտել ծրագրի շրջանավարտների իրականացրած ավարտական աշխատանքների թեմատիկայի, աշխատանքներում առկա յուրօրինակ լուծումների, վերհանված խնդիրների ուսումնասիրության և վերլուծության մակարդակի, ուսանողների ներկայացման և հաղորդակցման մակարդակի վերաբերյալ, նշելով դրանք «լավ» գնահատականով, և փաստելով, որ առկա էին նորարական աշխատանքներ, ուսանողների մոտ լավ էր սեփական տեսակետները ներկայացնելու և վստահ պաշտպանելու կարողությունները, հաղորդակցման կարողությունները և այլն:

Ուսանողների մոտիվացիայի բարձրացման, հետաքրքրությունների շրջանակը ընդլայնելու և սեփական ձեռքբերումներն ավելի տեսանելի դարձնելու համար ֆակուլտետի «Ինֆորմացիոն տեխնոլոգիաների ամբիոնը» նախաձեռնել է ֆակուլտետի ուսանողներից **<u>ծրագրավորման օլիմպիական թիմի</u>** ստեղծման գործընթացը: Այն հնարավորություն կտա ակտիվացնել ուսանողներին, զարգացնել նրանց ալգորիթմական մտածողությունը, ներգրավվել

ծրագրավորման հանրապետական օլիմպիադաներում, և լավ արդյունքների դեպքում՝ նաև միջազգային օլիմպիադաներում:

Հաշվետու ուստարում նաև արձանագրվել է ակտիվություն ուսման առաջադիմության մեջ, այն կազմել է 67.6% (նախորդ ուստարում՝ 64.6%): Ֆակուլտետը 2022-23 ուստարվա 1-ին կիսամյակում ունեցել է գերազանց առաջադիմությամբ 13 ուսանողներ, (նախորդ ուստարվա 1-ին կիսամյակում՝ 8, 2-րդ կիսամյակում՝ 6 գերազանցիկներ), որը ֆակուլտետի համար նոր և կարևոր ցուցանիշ է: Ֆակուլտետի 4 ուսանողներ 2022-23 ուստարում արժանացել են անվանական կրթաթոշակների՝ 3-ը ներքին և 1-ը ՀՀ ՊՆ արտաքին կրթաթոշակի:

Պետք է փաստել, որ ֆակուլտետի հիմնական անհաջողությունը գրանցվում է **ցածր առաջադիմության ֆոնի վրա**, ֆակուլտետում շատ են նաև անբավարար առաջադիմությամբ ուսանողները, ինչը պայմանավորված է, հավանաբար ծրագրի յուրացման բարդությամբ, նաև ուսանողների մոտ մոտիվացիայի պակասով, ու սա այն դեպքում, երբ ծրագիրը հնարավորություն է տալիս ձեռք բերել մասնագիտական անհրաժեշտ գիտելիքներ և կարողություններ, իսկ աշխատաշուկան առաջարկում է նաև առցանց աշխատելու հնարավորություններ:

1. Հետևաբար, ֆակուլտետի գործունեության հիմնական խնդիրներից մեկը ցածր առաջադիմությամբ ուսանողներն են, որոնց մոտիվացնելու և առաջադիմությունը բարձրացնելու համար պետք է ձեռնարկել քայլեր, կազմակերպել խորհրդատվական և լրացուցիչ մասնագիտական դասընթացներ, ներգրավել այդ գործում նաև լավ սովորող ուսանողներին, ստեղծել տրամադրող կրթական միջավայր:

2. Ընդհանուր **խնդիր կա** հետազոտական աշխատանք ղեկավարող դասախոսների իրական բեռնվածության հետ կապված, այն շատ ավելին է, քան ուսումնական բեռնվածության մեջ ամրագրված ժամաքանակը:

3. Ֆակուլտետը **խնդիր ունի** նաև դասախոսական կազմի հետ կապված, այն համալրվում է հիմնականում ԵՊՀ-ից և այլ բուհերից հրավիրված դասախոսներով: Դասախոսական կազմի 25-ից 6-ը ԵՊՀ-ից համատեղությամբ աշխատող դասախոսներ են, 3-ը՝ այլ բուհերից և կազմակերպություններից:

4. Ֆակուլտետը **խնդիր ունի** նաև շենքային պայմանների հետ կապված, այն առաջնային է և պայմանները բարելավելու համար մասնաճյուղից պահաջվում է էական նյութական ներդրում:

2. Ֆակուլտետի գործունեության վերաբերյալ դեկանի հաշվետվությունը

Ամփոփելով նախորդ ուսումնական տարին և յուրաքանչյուր հարցին պատասխանելով մինչև 750 բառի սահմանում՝ **ներկայացրե՛ք Ձեր՝ որպես դեկանի** գործունեությունը՝ ըստ ԵՊՀ ԻՄ զարգացման 2022-2026 ռազմավարական ծրագրի երեք նպատակների: Հարցերին պատասխանելիս ներառեք տրամադրված տվյալների հիման վրա իրականացված բովանդակային վերլուծություն:

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿ 1

ԲԱՐՁՐՈՐԱԿ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

1.1.1. Ընդունելություն

(Անդրադառնալով ֆակուլտետում հաշվետու ժամանակաշրջանում կրթական երկու մակարդակներում ուսանողների քանակական տվյալներին՝ ներկայացրե՛ք ընդհանուր պատկերն ու միտումները: Ի՞նչ եզրակացություններ կարելի է անել ընդունելության, կրթական մի մակարդակից մյուսն անցնելու, առաջին և երկրորդ հայտով ընդունելության, վճարովի և անվճար ընդունելության տվյալների, միջազգային ուսանողների ներգրավման վերլուծության արդյունքում: Որո՞նք պիտի լինեն ֆակուլտետի հետագա քայլերը իրավիճակի բարելավման և նոր արդյունքներ գրանցելու համար):

2022-2023 ուստարում ԵՊՀ ԻՄ-ում բնական գիտությունների ֆակուլտետի «Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա» կրթական ծրագրով դիմել է 28 դիմորդ, որոնցից ընդունելության շեմը հաղթահարել են 22-ը (79%-ը), որոնցից 8-ը ընդունվել է անվճար, 14-ը՝ վճարովի համակարգ: Անվճար ուսուցմամբ համակարգ ընդունված դիմորդների համար ընդունելության գնահատականի շեմը կազմել է 29.5 միավոր (նախորդ ուստարում այն եղել է 25 միավոր), վճարովի ուսուցմամբ համակարգ ընդունված դիմորդների ընդունելության գնահատականի շեմը եղել է 15.75 միավորը:

Ծրագիրը հաջողված է նրանով, որ ունի դիմորդների կայուն թիվ. միջինում 30-35 դիմորդ, և ընդունվողների կայուն թիվ՝ 22-28:

Հաշվետու ուստարում ֆակուլտետն ունենցել է լրացուցիչ փուլով դիմած և ընդունված 1 դիմորդ, որը ընդունելության շեմը հաղթահարել է 24.5 միավորով (1-ին ֆուլով եղեել է 15.75):

Պետք է նշել, որ հաշվետու ուստարում **դիմորդների թիվը նվազել էր** նախորդ ուստարվա համեմատ, սակայն գրանցվել են ընդունելության բարձր որակային ցուցանիշներ:

Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ դիմորդների թվի նվազումը պայմանավորված է

դեպի Երևան դպրոցների շրջանավատների մեծ հոսքով, որոնց մեծ մասը նախընտրել է տեխնիկական կրթությունը՝ պայմանավորված արդի գիտատեխնիկական առաջընթացով և տեղեկատվական տեխնոլոգիաների լայն կիրառությամբ և պահանջվածությամբ։

Գտնում ենք, որ դիմորդների ներգրավելու համար անհրաժեշտ է.

1. առավել ակտիվ մասնակցել մասնաճյուղի ՊԿՇՀ բաժնի կազմակերպած միջոցառումներին՝ կապված դպրոցներ այցելության հետ,
2. ՊԿՇՀ բաժնի հետ միասին ավագ դպրոցի աշակերտների համար կազմակերպել բաց դռների օրեր՝ ֆակուլտետը և իրականացվող կրթական ծրագիրը լավ ներկայացնելու համար,
3. ֆակուլտետի համար պատրաստել տեսասահիկներ դպրոցներ այցելության ժամանակ աշակերտներին ներկայացնելու համար։

1.1.2. Դիմորդների մասնագիտական կողմնորոշում

(Ի՞նչ աշխատանք է իրականացվել դիմորդների շրջանում մասնագիտական կողմնորոշման ուղղությամբ, ի՞նչ ազդեցություն են ունեցել այդ աշխատանքները: Որքանո՞վ են դրանք նպաստել դիմորդների մասնագիտական կողմնորոշման և ֆակուլտետում ընդունելության վրա: Արդյո՞ք կա դիմորդների հետ տարվող աշխատանքների վերանայման անհրաժեշտություն: Եթե կա, ապա խնդրում ենք մանրամասնել)։

Հաշվետու ժամանակահատվածում Պրակտիկայի կազմակերպման և շահակիցների հետ համագործակցության (ՊԿՇՀ) բաժնի նախաձեռնությամբ և գործակցությամբ պարբերաբար կազմակերպվել են «Բաց դռների օրեր» և ապագա դիմորդների ճանաչողական այցեր Մասնաճյուղ, այդ թվում՝ բնական գիտությունների ֆակուլտետ, որոնց ժամանակ աշակերտներին ներկայացվել են ֆակուլտետի կրթական հնարավորությունները։ Ֆակուլտետ այցելել են Իջևանի ավագ դպրոցի (ապրիլի 16, մայիսի 31) և թիվ 4 հիմնական դպրոցի (մայիսի 14) աշակերտները, որի ընթացքում նրանք ծանոթացել են ֆակուլտետում իրականացվող «Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա» կրթական ծրագրին, տեխնիկապես վերազինված լսարանների հնարավորություններին, գրադարանին, ուսանողական առօրյային, իրազեկվել ընդունելության պայմաններին:

Աշակերտները ֆակուլտետում մասնակցել են նաև իրականացվող մասնագիտական դասերին, ինչը ապագա ուսանողների համար հնարավորություն էր հասկանալու դպրոցում և համալսարանում կրթության կազմակերպման տարբերություններին ու առանձնահատկություններին:

Մասնաճյուղի կրթական ծրագրերը ներկայացնելու նպատակով կազմակերպվել են այցեր մարզի դպրոցներ: 2022թ. սեպտեմբերից սկսած ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի ինչպես վարչական

անձնակազմի, այնպես էլ **տարբեր ֆակուլտետների,** նաև բնական գիտությունների ֆակուլտետի դասախոսները և ուսանողները հանդիպումներ են ունեցել **Տավուշի մարզի,** ինչպես նաև **Գեղարքունիքի մարզի հարակից գյուղերի ավագ և միջնակարգ դպրոցների շրջանավարտների հետ՝** ներկայացնելով կրթական ծրագիրը, ֆակուլտետի առօրյան, ուսումնական և մշակութային կյանքը, մասնավորապես ֆակուլտետի տեխնիկական հնարավորությունները, ուսումնառության ուղղությունները, ապագա կարիերայի հնարավորությունները և այլն: Այդ միջոցառումներին ֆակուլտետը մասնակցել է 3 անգամ:

Հանդիպումների ժամանակ ներկայացուցիչները պատասխանել են դիմորդների հարցերին, իրազեկվել են ուսուցման զեղչային համակարգի, կրթաթոշակի հնարավորությունների, ընդունելության գործընթացների, դիմումների լրացման և այլնի մասին:

Գտնում ենք, որ **դիմորդներ ներգրավելու համար** անհրաժեշտ է.

1. Առավել ակտիվ մասնակցել մասնաճյուղի ՊԿՇՀ բաժնի կազմակերպած միջոցառումներին՝ կապված դպրոցներ այցելության հետ,
2. ՊԿՇՀ բաժնի հետ միասին ավագ դպրոցի աշակերտների համար կազմակերպել բաց դռների օրեր, ֆակուլտետը առավել լավ ներկայացնելու ,
3. Ֆակուլտետի համար պատրաստել տեսասահիկներ դպրոցներ այցելության ժամանակ աշակերտներին ներկայացնելու համար:

Ֆակուլտետում տարվում են աշխատանքներ ռադիոֆիզիկա մասնագիտությամբ նոր կրթական ծրագիր ներդնելու ուղղությամբ: Ի մի է բերվում ուսումնական պլանը, անհրաժեշտ դասախոսական կազմը, մասնագիտական գրականությունը, լաբարատորները և պարակտիկանների անցկացման հնարավորությունները:

1.1.3. Կրթական ծրագրեր

(Ի՞նչ եզրակացություններ կարելի է անել ընդունելություն-կրթական ծրագրեր հարաբերակցության վերլուծության հիման վրա: Ի՞նչ գործողություններ են անհրաժեշտ իրավիճակի բարելավման համար: Ի՞նչ աշխատանք է իրականացվել կրթական ծրագրերի որակի գնահատման, դրա բարելավման ուղղությամբ):

Հաշվետու ժամանակաշրջանում աշխատանքները կատարվել են համաձայն աշխատանքային պլանի և ժամանակացույցի: Ֆակուլտետի և նրա 2 ամբիոնների (Ծրագրավորման և ինֆորմացիոն տեխնոլոգիաների ամբիոն, Ընդհանուր մաթեմատիկայի և բնագիտության ամբիոն) աշխատանքային պլանները ներառում են բազմաթիվ գործողություններ կրթական ծրագրերի

իրականացման, նրանց որակի գնահատման և բարելավման ուղղությամբ:

«Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա» կրթական ծրագրի ղեկավարի, ֆակուլտետի դեկանի, ամբիոնների վարիչների և ֆակուլտետի աշխատակազմի ջանքերով ծրագիրը արդյունավետ իրականացվում է:

Հաշվետու ուստարում կրթական ծրագրի իրականացման հետ կապված գործառույթները կազմակերպվել են ըստ թիրախային խմբերի՝ պրոֆեսորադասախոսական անձնակազմ, ուսանողներ, ուսումնաօժանդակ անձնակազմ:

Ուսումնական տարվա մեկնարկին ստուգվել է առարկայական պորտֆոլիոների առկայությունը և համապատասխանությունը դասընթացների նկարագրիչներին (2022-23 ուստարվա 1-ին կիսամյակի 26 դասընթացներից 24 -ի համար ամբիոններում առկա է ամբողջական փաթեթը, 2-րդ կիսամյակի 16 դասընթացներից 16 -ի համար ամբիոններում առկա է ամբողջական փաթեթը): Հաշվետու ուստարում առաջին անգամ ամբողջությամբ կիրարկվել է առցանց ուսուցման e-learning էլեկտրոնային հարթակը և ֆակուլտետի բոլոր դասախոսներն անցել են էլեկտրոնային ուսուցման հարթակում դասընթացների կազմակերպմանը:

Ուսումնական տարվա մեկնարկին կազմակերպվել են հադիպումներ 1-ին կուրսի ուսանողների հետ: Ուսանողներին ներկայացվել են ֆակուլտետի կառուցվածքը, ուսումնական գործառույթների հետ կապված համալսարանում գործող կանոնակարգերը, ռեսուրսներից օգտվելու կարգը:

Ուսանողներին ներկայացվել է կրթական ծրագրի կառուցվածքը և բովանդակությունը, ուսումնական պլանի կառուցվածքը, դասավանդվող առարկաների ցանկը, կրթական ծրագրի վերջնարդյունքները, դրանց հասնելու մարտավարությունը և քարտեզը:

Աշխատանքներ են տարվել 2023-2027թթ. համար ԻԿՄ կրթական ծրագրի մշակման ուղղությամբ: Փոփոխություններ են կատարվել գործող կրթական ծրագրում, որոնք հիմնված են եղել տեղեկատվական տեխնոլոգիաների ժամանակակից ուղղությունների և աշխատաշուկայի պահանջարկի, ինչպես նաև ԵՊՀ-ում և ԵՊՀ ԻՄ-ում դասապրոցեցների կազմակերպման նոր կանոնակարգի վրա: Հաշվի է առնվել նաև դասախոսների և ուսանողների կարծիքը: Ձևավորվել են դասընթացներ, որոնք ներառում են մաթեմատիկական, ծրագրավորման, տեխնիկական բլոկների դասընթացները: **Կրթական ծրագրում ներառվել են երեք մասնագիտական ուղղություններ՝** ինֆորմատիկա և ծրագրավորում, ռոբոտատեխնիկա և մեխատրոնիկա, թվային անվտանգություն: Նոր կրթական ծրագրում ավելացվել է պրակտիկաների քանակը՝ դարձել է 2 մասնագիտական պրակտիկա:

Կրթական ծրագրի մասնագիրը քննարկվել է բնական գիտությունների ֆակուլտետի «Ծրագրավորման և ինֆորմացիոն տեխնոլոգիաների» և «Ընդհանուր մաթեմատիկայի և բնագիտության» ամբիոնների մայիսին կայացած համատեղ նիստում և ներկայացվել է ֆակուլտետի գիտական խորհրդում հաստատման:

Ինֆորմատիկա (համակարգչային գիտություններ) մասնագիտության «Ինֆորմատիկա և

կիրառական մաթեմատիկա» 2022-26թթ. կրթական ծրագիրը հաստատվել է բնական գիտությունների ֆակուլտետի 13.06.2022թ. տեղի ունեցած գիտական խորհրդի նիստում և 02.07.2022թ. ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդի նիստում: ԻԿՄ կրթական ծրագիրը հրապարակվել է ԵՊՀ ԻՄ պաշտոնական կայքում:

1.1.4. Ուսման առաջադիմություն

(Գնահատե՛ք ուսանողների ուսման առաջադիմության հիմնական միտումները հաշվետու ժամանակահատվածի ընթացքում: Ինչո՞վ են դրանք պայմանավորված, և ի՞նչ քայլեր են անհրաժեշտ իրավիճակի բարելավման համար):

2022-2023 ուստարում ֆակուլտետի ԻԿՄ կրթական ծրագրի առկա ուսուցման համակարգի համար ուսման առաջադիմության միջինը կազմել է **67.6%** (նախորդ ուստարում՝ 64.6%), իսկ հեռակա ուսուցման համակարգում՝ **23.2%:**

Ուսման առաջադիմության արդյունքները ֆակուլտետի համար բարձր չեն, սակայն պետք է նշել, որ նախորդ տարիների համեմատ կա դրական դինամիկա, և վերջին 4 ուստարիների համար այդ ցուցանիշն անընդհատ բարձրացել է **(40.9%, 56.7%, 64.6%, 67.6%):** Այս ցուցանիշի բարելավման մեջ իր ազդեցությունն ունեն կրթական ծրագրում իրականացվող վերանայումները, որոնց ժամանակ մասնագիտական դասընթացների համար ավելացվել են գործնական դասընթացների ժամաքանակները, դասընթացների բովանդակությունը ուղղորդվել է պրակտիկ գիտելիքների և կարողությունների ձևավորմանը:

Ուսման առաջադիմության բարձրացման վրա իրենց ազդեցությունն են ունեցել իրականացված մասնագիտական պրակտիկաները, որոնց ծրագրերը վերանայվել են և ուղղորդվել մասնագիտական կարողությունների զարգացմանը, նաև **ընդլայնվել է պրակտիկաների իրականացման վայրերի ցանկը**՝ ներառելով մարզում գործող գրեթե բոլոր ծրագրավորման ընկերությունները (Իջևան քաղաքում գործում են 5 ընկերություններ): Հաշվետու ուստարում պրակտիկաների մի մասը իրականացվել է նաև ֆակուլտետում նոր բացված «Թվային Հայք» լաբորատորիայում (Իջևանում թվային անվտանգության կրթական և արձագանքման կենտրոն): Պրակտիկայի ժամանակ իրականացրած աշխատանքները ուսանողները ներկայացրել են հատուկ կազմակերպված միջոցառման շրջանակներում՝ ներկայացնելով իրենց կատարած ուսումնասիրությունների, հետազոտությունների և մշակած ծրագրերի արդյունքները:

Նշենք, որ վերջին տարիներին ֆակուլտետի ուսանողների մի մասը ուսմանը զուգահեռ որպես ծրագրավորող աշխատում է մարզի ծրագրավորման ընկերություններում՝ «LT Coding» ՍՊԸ, «Vectre» ՓԲԸ, «Digital Wave» ընկերություն, նաև աշխատում են մարզում գործող «Արմաթ»

ինժեներական լաբորատորիաներում որպես խմբավարներ։

Ուսման առաջադիմությունը **բարձրացնելու ուղղությամբ** ֆակուլտետը ամբիոնների հետ միասին պետք է մշակի գործողությունների պլան-ժամանակացույց, որը կներառի կոնկետ գործնական դասընթացներ, խորհրդատվական հանդիպումներ, պրակտիկ և ինքնուրույն աշխատանքների և առաջադրանքների իրականացումներ և այլն։ Այս գործընթացում պետք է ներգրավել նաև ֆակուլտետի բարձր առաջադիմությամբ ուսանողներին, իսկ գործընթացը պետք է իրականացնել խիստ վերահսկողությամբ և պատասխանատվությամբ։

2023թ. «Ինֆորմատիկա /համակարգչային գիտություն/» մասնագիտության 19 շրջանավարտներից 14-ը աշխատում են մասնագիտությամբ:

1.1.5. Ուսանողների հոսունություն

(Գնահատե՛ք ֆակուլտետի կրթական ծրագրերի շրջանակում ուսանողների հոսունության (հեռացված, դուրս մնացած, ԵՊՀ-ից կամ ԵՊՀ տեղափոխված) ընդհանուր պատկերը: Ի՞նչ եզրակացություն կարելի է անել այս թվերի հիման վրա, և ի՞նչ գործողություններ է անհրաժեշտ նախաձեռնել այդ ուղղությամբ)։

Առկա ուսուցման համակարգում 2022-2023 ուստարում չկա հեռացված ուսանող: Նախկինում հեռացված երկու ուսանող վերականգնել են իրենց ուսանողական իրավունքները:
2023-2024 ուստարում տարկետումից վերադարձել են հինգ ուսանող՝ երկուսը պետպետվեր, այդ թվում 3-ը՝ վճարովի:

1.1.6. Դոկտորական կրթություն

(Գնահատե՛ք հայցորդների և ասպիրանտների, պաշտպանած ատենախոսությունների ընթացիկ տարվա արդյունքներն ու դրանց ազդեցությունը ՈւՍ գործունեության վրա)։

1.1.7. Կրթաթոշակներ

(Ինչպե՞ս կգնահատեք հասանելի կրթաթոշակների ազդեցությունը կրթական գործընթացի վրա, ի՞նչ քայլեր են անհրաժեշտ այդ ուղղությամբ: Ի՞նչ աշխատանքներ եք իրականացրել կրթաթոշակների թիվն ավելացնելու ուղղությամբ, ի՞նչ հնարավորություններ կան հաջորդ տարիների համար)։

Ֆակուլտետի 84 ուսանողներից կրաթաթոշակ են ստանում 22-ը, իսկ երեք ուսանող արժանացել են անվանական կրթաթոշակի, որոնցից մեկը՝ Ինննա Հարությունյանը ԵՊՀ-ի անվան անվանական կրթաթոշակի: Նա համարվել է տարվա լավագույն ուսանողը մասնաճյուղում:

1.2.1. Ներառական կրթություն

(Որքանո՞վ են ֆակուլտետում առկա պայմանները (ֆիզիկական, ենթակառուցվածքային, կրթական, մասնագիտական) ապահովում ներառական կրթության հնարավորությունները)։

1.3.1. Գործատուների հետ համագործակցություն

(Գնահատե՛ք հաշվետու ժամանակահատվածի ընթացքում տեղական և միջազգային մակարդակներում ոլորտային գործատուների և փորձագետների հետ համագործակցությունը: Որո՞նք են համագործակցության հիմնական միտումները: Ի՞նչ ազդեցություն է այն ունեցել կրթական ու գիտահետազոտական գործընթացի վրա (դասախոսների ներգրավում, կրթաթոշակներ, հետազոտական պատվերներ, կրթական ծրագրերի վերանայում և այլն), ի՞նչ հավելյալ գործողությունների անհրաժեշտություն կա իրավիճակի բարելավման համար)։

Ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի գիտական մակարդակի բարձրացմանը միտված գործող քաղաքականությանը ընդառաջ որոշվել է ավարտական աշխատանքներում **ներգրավվել հմուտ մասնագետներ գործարար շրջանակներից**: Ներդրվել է 2023-24 ուստարում ուստարում և ավարտական աշխատանքների ղեկավարման համար ներգրավվել են 2 գործատուներ: Հույսով ենք այն դրական ազդեցություն կունենա ուսման որակի վրա:

1.4.1. Ակադեմիական համակազմի նկարագիր և կարողությունների զարգացում

(Ինչպե՞ս կգնահատեք հաշվետու ժամանակաշրջանում ակադեմիական համակազմի ընդհանուր պատկերը (սեռատարիքային կազմ, կոչում, գիտական աստիճան), ինչպես նաև նրանց կարողությունների զարգացման գործընթացը: Ի՞նչ կարիքներ են բացահայտվել, և ի՞նչ քայլեր են անհրաժեշտ դրանց հասցեագրման համար):

Ֆակուլտետում գործում են երկու ամբիոններ՝ «Ընդհանուր մաթեմատիկայի և բնագիտության» (ԸՄԲ ամբիոն) և «Ծրագրավորման և ինֆորմացիոն տեխնոլոգիաների» (ԾԻՏ ամբիոն): Ֆակուլտետն ունի 27 աշխատակից, որոնցից 25-ը դասախոսներ են: Դասախոսական կազմից 10-ը հիմնական աշխատակիցներ են (6-ը՝ ԸՄԲ ամբիոնում, 4-ը՝ ԾԻՏ ամբիոնում), 4 դասախոսներ աշխատում են համատեղությամբ (3-ը՝ ԸՄԲ ամբիոնում, 1-ը՝ ԾԻՏ ամբիոնում) և 11-ը ժամավճարով (4-ը՝ ԸՄԲ ամբիոնում, 7-ը՝ ԾԻՏ ամբիոնում): 2023-24 ուստարում ֆակուլտետի դասախոսական կազմում ներգրավված են գիտական աստիճանով 14 դասախոսներ (դասախոսական կազմի 56%-ը). այդ թվում 1 դոկտոր-պրոֆեսոր և 13 գիտությունների թեկնածուներ, որոնցից 12-ը դոցենտի գիտական կոչումով:

Ուսումնական գործընթացում գիտական աստիճան ունեցող դասախոսների ներգրավման հետ կապված խնդիր ունի ԾԻՏ ամբիոնը, այստեղ դասախոսկան կազմում (12 դասախոս) ներգրավված են 5 գիտությունների թեկնածուներ, որոնցից 3-ը հրավիրված են այլ բուհերից և կազմակերպություններից: ԸՄԲ ամբիոնի դասախոսական կազմում (13 դասախոս) ներգրավված են 1 դոկտոր-պրոֆեսոր և 9 գիտությունների թեկնածուներ **(77%),** որոնցից 4-ը ֆակուլտետի հիմնական աշխատակիցներ են:

Ֆակուլտետում աշխատում են 11 կին, որոնցից 9-ը դասախոսներ են, այդ թվում 2-ը՝ գիտությունների թեկնածուի գիտական աստիճանով:

Դասախոսական կազմի կարողությունների զարգացման նպատակով ֆակուլտետի ամբիոնների վարիչները ուղղորդում են դասախոսներին՝ մասնակցել մասնաճյուղի Կրթական բարեփոխումների և դասախոսների վերապատրաստման բաժնի կողմից կազմակերպվող մասնագիտական տարբեր վերապատրաստումների: Հաշվետու ուստարում վերապատրաստումների մասնակցել են ֆակուլտետի հիմնական աշխատակազմի 4 դասախոսներ: Նրանք մասնակցել են հետևյալ վերապատրաստման դասընթացներին.

- «Թվային և տեղեկատվական անվտանգության հիմունքներ»՝ 4 դասախոս,
- «ԵՊՀ ԻՄ-ի ուսումնական գործընթացի կազմակերպման կարգի կիրառման առանձնահատկությունները»՝ 2 դասախոս,
- «Անձի ստեղծարարության զարգացումը մասնագիտական գործունեության մեջ»՝ 2 դասախոս,
- «Ինքնուրույն աշխատանքների կատարման մեթոդական ցուցումներ»՝ 1 դասախոս:

Ամբիոնների վարիչները դասավանդման գործընթացում դասախոսների ձեռքբերումների և նաև խնդիրների վերաբերյալ տեղեկատվություն ունենալու և ամբիոնի հետագա գործունեությունը պլանավորելու համար համաձայն կիսամյակի սկզբում մշակված պլանի իրականացնում են դասալսումներ: Դասալսումների արդյունքները քննարկվում են առանձին դասախոսների հետ, ընդհանուր խնդիրները՝ ամբիոնների նիստերում, նշվում են խնդիրները:

Ամբիոնի վարիչները յուրաքանչյուր կիսամյակից հետո մասնաճյուղի Ուսումնամեթոդական վարչությունից ստանում են ԵՊՀ-ի կողմից իրականացվող «Դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ ուսանողների կարծիքների ուսումնասիրություն» առցանց հարցման արդյունքները և այդ արդյունքների հիման վրա անհատական քննարկումներ են ունենում այն դասախոսների հետ, որոնց արդյունքներում կան ցածր գնահատականներ (4.0-ից ցածր), պարզաբանվում են դրանց պատճառները և տրվում է համապատասխան խորհրդատվություն:

Այդ հարցման արդյունքներով 2022-23 ուստարվա 1-ին կիսամյակի ֆակուլտետի միջին գնահատականը եղել է **4.48** (2020-21 ուստարվա նույն կիսամյակի համար՝ 4.62), իսկ 2-րդ կիսամյակի միջին գնահատականը՝ **4.66** (2020-21 ուստարվա նույն կիսամյակի համար՝ 4.35): Արդյունքներն ընդհանուր առմամբ վատ չեն (որպես աղբյուր նաև՝ ԳԱՑ 2018-2023): Նշենք, որ համեմատման համար ներկայացվել է 2020-21 ուստարվա արդյունքները, որովհետև 2021-22 ուստարում հարցմանը մասնակցել են բավականին քիչ ուսանողներ, հետևաբար այդ արդյունքները ՈՒՄՎ-ն չի դիտարկում որպես իրական արդյունքներ:

Գտնում ենք, որ մասնագիտական դասավանդման որակի բարելավման համար անհրաժեշտ է.

- հիմնական դասավանդողների առավել ակտիվ մասնակցությունը մասնագիտական վերապատրաստումներին,
- ավելի շատ արտաքին շահակիցների ներգրավվածությունը ուսումնական պրոցեսում,
- երիտասարդ հետազոտողների, կամ գիտանականների ներգրավվածությունը ուսումնական պրոցեսին:

1.5.1. Ենթակառուցվածքներ և պայմաններ

(Գնահատե՛ք ֆակուլտետում առկա պայմանները, դրանց ազդեցությունը գիտակրթական աշխատանքների կազմակերպման վրա, ինչպես նաև դրանց բարելավմանն ուղղված աշխատանքները հաշվետու ժամանակահատվածում: Ի՞նչ առաջնահերթ գործողություններ են անհրաժեշտ աշխատանքային պայմանների բարելավման համար):

Ֆակուլտետում գործում է 3 մասանգիտական համակարգչային լսարան, 1 պրոյեկտրով լսարան, 2 մասնագիտական լաբորատորիա և թվային անվտանգության նորաբաց կենտրոնը:

Կա պրոյեկտորով լսարանների ավելացման անհրաժեշտություն:

Ֆակուլտետն առայժմ լսարանային ֆոնդի խնդիր չունի, **խնդիրը հիմնականում կապված է շենքային պայմանների** հետ, որովհետ մասնաշենքը խոնավ է, պարբերաբար օդափոխման կարիք ունի:

Ֆակուլտետը **նպատակ ունի իրականացնել** նաև 2-րդ կրթական ծրագիրը՝ ֆիզիկա մասնագիտության ուղղությամբն (նախատեսվում է «Ռադիոֆիզիկա» կրթական ծրագիր): Դրա համար հիմք է հանդիսանում այն ֆաստը, որ ֆակուլտետի դասախոսական կազմում գիտական աստիճանով ֆիզիկոսի որակավորմամբ կան դասախոսներ և կա նրանց պոտենցիալը ճիշտ և արդյունավետ օգտագործելու անհրաժեշտություն:

Այդ ծրագրի ներդրման համար անհրաժեշտ կլինի ձևավորել նոր համապատասխան լաբորատորիաներ, այս ուղղությամբ ֆակուլտետը ձեռնարկում է քայլեր:

ՌԱԶԱՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿ 2

ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

2.1. Գիտական ակտիվություն

(Վերլուծելով առկա քանակական տվյալները (հոդվածներ, մենագրություններ, ձեռնարկներ, գիտաժողովներ, դրամաշնորհներ և այլն)՝ գնահատե՛ք ֆակուլտետում ակադեմիական համակազմի գիտական ակտիվությունը հաշվետու ժամանակահատվածում: Որքանո՞վ է ակադեմիական համակազմի գիտահետազոտական ակտիվությունը համահունչ ֆակուլտետի կարիքների հետ, ի՞նչ հավելյալ գործողությունների կարիք կա):

Հաշվետու ժամանակահատվածում ֆակուլտետի 2 ամբիոնների դասախոսները հրատարակել են.

- 1 հոդված ԲՈՀ-ի կողմից հաստատված ամսագրում,
- 1 ուսումնական ձեռնարկ,
- 3 հոդված միջազգային ամսագրերում,
- 3 գիտական հոդված,
- 1 զեկույց գիտաժողովում,
- 1 թեզիս:

Ամբիոններում հաճախակի կազմակերպվում են մասնագիտական քննարկումներ,

ամբիոնների նիստերում առանձնահատուկ ուշադրություն է դարձվում հետազոտական և ավարտական աշխատանքների կազմակերպման, նրանց թեմատիկայի ընտրության և ուղղվածության, գիտական մակարդակի նկատմամբ պահանջներին վերաբերող հարցերին, քննարկվում են ուսումնական գործընթացի կազմակերպման նոր կարգի պահանջներով դասընթացների բաղադրիչների ներառման, գնահատման չափանիշների ընտրության, ինքնուրույն աշխատանքների կազմակերպման և գնահատման ձևերի վերաբերյալ հարցեր (հիմք՝ ամբիոնների արձանագրությունները)։

2022-23 ուստարում ֆակուլտետի դասախոսները մասնակցել են ԵՊՀ ԻՄ ներքին դրամաշնորհային ծրագրերի մրցույթին և 3 ծրագիր շահել են մրցույթում. «Տավուշի մարզի ջերմատնային տնտեսությունների համար ինֆորմացիոն ցանցի մշակում» (ղեկավար՝ Ռ.Յոլչյան), «Տավուշի մարզում օրգանական գյուղատնտեսության զարգացման հեռանկարները» (ղեկավար Գ.Սիմոնյան), «Տավուշի մարզի հանրակրթական դպրոցների և բուժհիմնարկների շրջակայքում աղմուկի ուսումնասիրություն» (ղեկավար՝ Ա.Մարգարյան)։

2.2. Գիտահետազոտական լաբորատորիաներ և մասնակցություն ֆինանսավորվող գիտական նախագծերին

(Ինչպե՞ս կգնահատեք ֆակուլտետի բազային և գիտահետազոտական այլ բնույթի լաբորատորիաների գործունեությունն ու մասնակցությունը ֆինանսավորվող գիտական նախագծերին (դրամաշնորհային, նպատակային, տնտեսապայմանագրային, միջազգային և այլ բնույթի)։ Որո՞նք են հիմնական ձեռքբերումները, դժվարություններն ու առաջնահերթությունները)։

Արտաքին դրամաշնորհում հաղթած Ֆակուլտետի “Green Ground” թիմը իր «Մշակաբույսերի աճեցման միջավայրի էլեկտրաքիմիական պարամետրերի խելացի համալիր մշակում» թեմայով հաղթել է արտաքին դրամաշնորհային մրցույթում, և դրա արդյունքում ֆակուլտետի մեխատրոնիկայի լաբորատորիան համալրվել է մեկ համակարգչով և մեկ դրոնով: Համալրում լինելու է նաև առաջիկայում:

2.3. Գիտակրթական համագործակցություն

(Հաշվետու ժամանակաշրջանում գիտակրթական համագործակցության ի՞նչ նոր դեպքեր են արձանագրվել, ի՞նչ ազդեցություն ունեն դրանք ֆակուլտետի ընդհանուր գործունեության վրա, ի՞նչ հնարավորություններ են դրանք տալիս միջնաժամկետ ու երկարաժամկետ հեռանկարում)։

Հաշվետու ժամանակաշրջանում ֆակուլտետը նախադրյալ ունի իրականացնել գիտակրթական համագործակցություն միջնաժամկետ ու երկարաժամկետ հեռանկարում:

2.4. Գիտական միջոցառումների կազմակերպում և մասնակցություն

(Ի՞նչ գիտական միջոցառումներ են կազմակերպվել (գիտաժողով, սեմինար, զեկուցումներ և այլն), և ի՞նչ միջոցառումների են մասնակցել ֆակուլտետի աշխատակիցները: Ի՞նչ ազդեցություն ունեն դրանք ֆակուլտետի ընդհանուր գործունեության վրա, ի՞նչ հնարավորություններ են դրանք ստեղծել միջնաժամկետ ու երկարաժամկետ հեռանկարում):

Միջազգային գիտագործնական համաժողովին Ծրագրավորման և ինֆորմացիոն տեխնոլոգիաների ամբիոնի դասախոս Քնար Օթարյանի ղեկավարությամբ «Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա» կրթական ծրագրի III կուրսի ուսանողուհի Իննա Հարությունյանը հանդես է եկել «Տեղեկատվական տեխնոկոգիաները կրթության մեջ» թեմայով զեկույցով:

Զեկույցը տպագրվել է «Սոցիալ-տնտեսական նորարարարարությունները կրթության մեջ» հոդվածների ժողովածուում (15-16 մարտի ԵՊՀ ԻՄ 2022-541 էջ):

ՌԱԶԱՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿ 3.

ՀԱՆՐԱՅԻՆ ՆԵՐԳՐԱՎՈՒՄ

3.1. Շուկայի ուսումնասիրում և պահանջարկին համապատասխանեցում

(Հաշվետու ժամանակաշրջանում ի՞նչ քայլեր են իրականացվել ֆակուլտետի կողմից ոլորտային գործատուների, ձեռնարկությունների և առհասարակ շուկայի կարիքներին համապատասխանելու տեսանկյունից: Որքանո՞վ է ֆակուլտետն ինտեգրված ոլորտային շուկային: Ի՞նչ գործողություններ են իրականացվել ֆակուլտետի կողմից ոլորտային գործընկերների հետ համագործակցության ամրապնդման ուղղությամբ (քննարկումներ, հանդիպումներ, գիտաժողովներ, ցուցահանդեսներ, խորհրդակցություններ և այլ): Որքանո՞վ են ֆակուլտետի կողմից մատուցվող կրթական ծառայությունները համապատասխանում շուկայի պահանջներին, ի՞նչն է վկայում համապատասխանության կամ անհամապատասխանության մասին):

Պարբերաբար կազմակերպվում են հանդիպումներ ՏՏ-ի ոլորտի գործատուների հետ, հաճախ գործատուների նախաձեռնությամբ է կազմակերպվում հանդիպումներ ֆակուլտետի ուսանողների հետ: Արդեն իսկ կան ուսանողներ, որոնք ուսումը համատեղում են աշխատանքի հետ: Հաշվետու ժամանակահատվածում 80 ուսանողից 20-ը համատեղում էին:

3.2. Շրջանավարտներ

(Գնահատե՛ք հաշվետու ժամանակաշրջանում շրջանավարտների հետ կապերի ամրապնդմանն ուղղված, ֆակուլտետի կողմից իրականացված գործողությունները: Ի՞նչ արդյունքներ են արձանագրվել, ի՞նչ հնարավորություններ են ստեղծվել շրջանավարտների հետ համագործակցության արդյունքում):

Մասնաճյուղում գործում է շրջանավարտների հետ կապի բաժին, որտեղ ներգրավված են որոշ շրջանավարտներ նաև մեր ֆակուլտետից: Ինը շրջանավարտ աշխատում են մասնաճյուղի տարբեր բաժիններում, տարբեր տարիների ութ շրջանավարտ դարձել են գիտությունների թեկնածուներ և հինգը արժանացել են դոցենտի գիտական կոչման: Այժմ ֆակուլտետում դասավանդում են ֆակուլտետի 8 նախկին շրջանավարտներ:

Ֆակուլտետը 2020, 2021, 2022 թվականներին ԻԿՄ կրթական ծրագրով տվել է առկա ուսուցմամբ **56 շրջանավարտ և հեռակա ուսուցմամբ 72 շրջանավարտ**: Ֆակուլտետի այդ տարիների շրջանավարտների զբաղվածության ուսումնասիրությունը (ըստ ՄԿՈԱ բաժնի տվյալների) ցույց է տվել, որ 2022թ.-ի սեպտեմբերի դրությամբ առկա ուսուցման շրջանավարտներից **32-ը (57%-ը, կեսից ավելին) աշխատում է,** այդ թվում 12-ը՝ մասնագիտությամբ, իսկ հեռակա ուսուցման շրջանավարտներից աշխատում է 16-ը, միայն 1-ը մասնագիտությամբ:

2022-23 ուստարվա «Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա» կրթական ծրագրի **19 շրջանավարտներից** 11-ը ամփոփիչ ատեստավորման արդյունքում ստացել են գերազանց գնահատական, 5-ը՝ լավ: Նրանցից **10-ը ավարտելու պահին արդեն աշխատում էր մասնագիտությամբ,** իսկ 3-ը՝ ոչ մասնագիտությամբ: Շրջանավարտներից 3-ը շարունակում է աշխատել ֆակուլտետում գործող «Թվային Հայք» լաբորատորիայում: 2023թ.-ի շրջանավարտների հետագա զբաղվածության վերաբերյալ առայժմ նոր տվյալներ չկան:

Վերջին 4 տարիների զբաղվածության արդյունքները ցույց են տալիս, որ ԻԿՄ կրթական ծրագրի առկա ուսուցման շրջանավարտները աշխատաշուկայում պահանջված են, մարզի ծրագրավորման ընկերություններն իրենց աշխատակազմը համալրում են մեր շրջանավարտներով, և յուրաքանչյուր տարի մասնագիտությամբ աշխատող շրջանավարտների թիվն ավելանում է:

Ֆակուլտետը պարբերաբար հետաքրքրվում է իր շրջանավարտներով, անհրաժեշտության դեպքում աջակցում է կարիերայի ձևավորման և աշխատանք գտնելու գործընթացում: Նրանք հաճախ այցելում են ֆակուլտետ, հանդիպում դասախոսական կազմի և աշխատակիցների հետ:

Այստեղ պետք է **ամրապնդել համագործակցությունը նախկին շրջանավարտների** հետ,

նրանց ներգրավել տարաբնույթ միջոցառումներում և գործընթացներում, պարբերաբար կազմակերպել հանդիպումներ ուսանողների հետ և այլն:

Հաջորդիվ (կամ հետամուտ) քայլեր

Հաշվի առնելով ներկայացվածը, ստացված արդյունքները և բարելավման կարիք ունեցող ուղղությունները՝ նկարագրե՛ք այն քայլերն ու առաջնահերթությունները, որ նախատեսում եք ձեռնարկել հաջորդ ուսումնական տարվա ընթացքում: Միևնույն ժամանակ անդրադարձե՛ք և մեկնաբանե՛ք, թե հատկապես որ ձեռքբերումների վրա է հնարավոր կառուցել ստորաբաժանման զարգացմանն ուղղված հաջորդ քայլերը:

Ֆակուլտետի գործունեությունն ակտիվացնելու, բարելավելու և նոր ձեռքբերումներ ունենալու համար պետք է օգտվել մի շարք հնարավորություններից.

1. ակտիվ համագործակցել ԵՊՀ կիրառական մաթեմատիկայի ֆակուլտետի հետ, կազմակերպել ուսանողների փոխադարձ այցեր, ստեղծել հնարավորություններ տեղում տարբեր դասաժամերին մասնակցելու համար,
2. ակտիվ համագործակցել արտաքին շահակիցների հետ, ներգրավել կրթական ծրագրի վերանայման աշխատանքներում, հաշվի առնել նրանց առաջարկները ծրագրի տարբեր բաղադրիչների բովանդակային կառուցվածքի, դրանց գործնականում կիրառելիության վերաբերյալ,
3. տարածաշրջանի առաջատար ծրագրավորողներին ներգրավել ծրագրի իրականացման գործընթացում,
4. համագործակցության շրջանակներում օգտագործել շահակիցների ռեսուրսներն ու հնարավորությունները մասնագիտական պրակտիկաների արդյունավետ իրականացման համար,
5. իրականացնել աշխատանքներ ուսանողների մոտիվացիայի բարձրացման համար,
6. պարբերաբար կատարել արտաքին շահակիցների կարիքների ուսումնասիրություն՝ ծրագիրը նրանց պահանջմունքների բավարարմանը ուղղորդելու համար,
7. ծրագրի շրջանավարտներին ներգրավել ուսանողների հետ տարվող մասնագիտական և խորհրդատվական աշխատանքներում, օգտագործել կարիերայում նրանց ունեցած հաջողությունները՝ ուսանողների մոտ մասնագիտության և ֆակուլտետում ստացած կրթության նկատմամբ վստահություն ձևավորելու համար,
8. անգլերեն լեզվի իմացության մակարդակը բարձրացնելու համար ներդնել օտարալեզու (անգլերեն, ռուսերեն) դասընթացներ, կամ գոնե մի քանի դասաժամերի ընթացքում նյութի

օտար լեզվով մատուցման հնարավորություններ:

Նշենք այն ձեռքբերումները, որոնց վրա հնարավոր է կառուցել ֆակուլտետի զարգացմանն ուղղված հաջորդ քայլերը.

- վերջին տարիներին կայունացել է ծրագրի դիմորդների թիվը, բարձրացել է մրցութային ցուցանիշը և մրցութային շեմը հաղթահարող դիմորդների մասնաբաժինը,
- ծրագրի ուսանողները հետաքրքրված են ծրագրում ներառված դասընթացներով, ընդ որում նախապատվություն են տալիս ծրագրավորման հետ առնչություն ունեցող դասընթացներին, գտնում եմ, որ դրանք օգտակար են և ստացած գիտելիքները և ձեռք բերած մասնագիտական կարողությունները հաջողությամբ կիրառել են պրակտիկաների ժամանակ,
- դասախոսները փաստում են մասնագիտության շրջանակներում առավել խորքային խնդիրներ ուսումնասիրելու և համակարգչային գիտության արդի նվաճումներին տեղեկացված լինելու ուսանողների ձգտման և մեծ ցանկության մասին,
- ուսանողները նկատելիորեն ակտիվ աշխատում են միկրոսխեմաների և սարքերի ծրագրավորման նորաբաց լաբորատորիայում և արդեն գրանցել են առաջին հաջողությունները՝ իրենց նախագծով հաղթելով դրամաշնորհային ծրագրում,
- ծրագրի վերջին տարիների շրջանավարտները նշում են, որ բավարարված են մասնաճյուղում ստացած կրթությունից, որ նրանց 80 տոկոսը լիարժեք ձեռք է բերել կրթական ծրագրում ամրագրված մասնագիտական կարողությունները և հմտությունները,
- ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների նախագահները նշում են, որ ուսանողների ավարտական աշխատանքներում առկա են յուրօրինակ լուծումներ, նորարարական տարրեր, հաջողված ծրագրային լուծումներ,

- վերջին ուսումնական տարում իրականացված հետազոտական աշխատանքների արդյունքները և դասախոսների արձագանքները վկայում են, որ ուսանողների մոտ բավականին ընդգծված է ինքնուրույն աշխատելու և առաջադրված խնդիրների համար լուծումներ գտնելու ձգտումը, որ նրանք ունեն հետազոտական աշխատանք կատարելու անհրաժեշտ գիտելիքներ և ունակություններ,
- մարզի գործատուներն ընդհանուր առմամբ բավարարված են ծրագրի շրջանավարտներից, մարզի բոլոր ծրագրավորման ընկերություններում աշխատում են ծրագրի շրջանավարտները և ուսանողները, այստեղ առանձնահատուկ պետք է նշել, որ մարզի «Արմաթ» լաբորատորիաների գրեթե բոլոր դասընթացավարները ծրագրի շրջանավարտներն են և ուսանողները:

Հաշվի առնելով այս դրական փաստարկները կարող ենք նշել, որ «Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա» կրթական ծրագիրը տարածաշրջանում պահանջված է, այն

պարբերաբար վերանայվում է և կատարում է իր առջև դրված խնդիրները, հետևաբար նրա հետագա իրականացումը ԵՊՀ Իջևանի մասնաճյուղում արդարացված է և նպատակահարմար։

Ֆակուլտետի գործունեությունը ընդլայնելու համար 2 ամբիոնների աշխատակազմը աշխատում է **«Ռադիոֆիզիկա» կրթական ծրագրի ներդրման ուղղությամբ**։ Այժմ նախապատրաստվում են կրթական ծրագրի լիցենզավորման համար անհրաժեշտ փաստաթղթերը՝ ուսումնական պլան, դասախոսական կազմ, ռեսուրսներ և այլն, որից հետո կստեղծվի կրթական ծրագիրը մշակող աշխատանքային խումբ, կիրականացվեն նաև ծրագրի գովազդման գործընթացներ միջնակարգ և ավագ դպրոցներում (մարզի և մարզից դուրս)։

ՀԱՎԵԼՎԱԾ

«Երևանի պետական համալսարան»
հիմնադրամի ռեկտորի
2023 թ. հոկտեմբերի ____ -ի
թիվ _____ հրամանի

ԵՊՀ ԻՄ ֆակուլտետի դեկանի հաշվետվություն

Ֆակուլտետ ____Հումանիտար

գիտությունների_____

Դեկան_____Կարինե

Պողոսյան_____

Ժամանակահատված_____2022-23 ուստարի_____23-24-ի Ի

կիս._____

Ներկայացման

ամսաթիվ_____06.12.23թ._____

Երևան 2023

Մաս 1. Ֆակուլտետի գործողությունների պլանի կատարողական

(750 - 1500 բառի շրջանակում անդրադարձե՛ք ֆակուլտետի կողմից մշակված գործողությունների պլանին՝ ներկայացնելով գործողությունների մասով իրականացված աշխատանքների արդյունքները և պատասխանելով ստորև ներկայացված հարցերին:

1. Որո՞նք են գործողությունների իրականացման արդյունքում արձանագրված հիմնական հաջողությունները:
2. Ի՞նչ գործոններ են պայմանավորել նշված հաջողությունների գրանցումը:
3. Ինչպե՞ս եք պատրաստվում նշված հաջողությունները կամ ձեռքբերումները օգտագործել ի նպաստ ֆակուլտետի գործունեության արդյունավետության հետագա բարելավմանը:
4. Որո՞նք են գործողությունների իրականացման արդյունքում արձանագրված հիմնական անհաջողությունները կամ դժվարությունները:
5. Որո՞նք էին նշված անհաջողությունների կամ դժվարությունների առաջացման հիմնական պատճառները:
6. Ի՞նչ եք պատրաստվում նախաձեռնել նշված անհաջողությունների կամ դժվարությունների հաղթահարման ուղղությամբ և ի՞նչ ժամկետրում:

Հումանիտար գիտությունների ֆակուլտետը ԵՊՀ ԻՄ-ի գիտակրթական գործունեություն իրականացնող հիմնական ստորաբաժանումներից է, որն իրականացնում է բարձրագույն մասնագիտական կրթություն **յոթ կրթական ծրագրերով** («Պատմություն», «Հայոց լեզու և գրականություն», «Անգլերեն լեզու և գրականություն», «Ֆրանսերեն լեզու և գրականություն», «Ռուսաց լեզու և գրականություն», «Հոգեբանություն», «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա») բակալավրիատում և մեկ կրթական ծրագրով («Դպրոցական մանկավարժություն և մեթոդիկա») մագիստրատուրայում: Ֆակուլտետն իր գործունեությունն իրականացնում է ուսումնական, մանկավարժական, մեթոդական, գիտական և ուսումնաօժանդակ տարաբնույթ աշխատանքներով:

Գործողությունների իրականացման արդյունքում կարելի է **հաջողություն համարել.**

1. վերջին տարիներին ֆակուլտետի մասնագիտացումներն ընտրող **ուսանողների կայուն թվաքանակը**, որը պայմանավորված է ՊԿՇՀ բաժնի և ֆակուլտետի համագործակցությամբ դպրոցներում ծավալած գովազդային այցերով և մասնաճյուղում, մասնավորապես, ֆակուլտետում կազմակերպած հանդիպումներով:

2. Որպես հաջողություն կարելի է նշել այն հանգամանքը, որ ֆակուլտետում 2019-2020 ուստարում **վերագործարկվեց «Հոգեբանություն»** կրթական ծրագիրը՝ պայմանավորված մարզում հոգեբանների կարիքով և մասնագիտության նկատմամբ աճող հետաքրքրությամբ,

ինչպես նաև **ներդրվեց նոր կրթական ծրագիր՝ «Ռուսաց լեզու և գրականություն»՝** «Մասնագիտական մանկավարժություն» մասնագիտացմամբ, որը պահանջարկված էր, քանի որ մարզում զգացվում էր ռուսաց լեզվի ուսուցիչների կարիք: 2022-23 ուստարվա ավարտին նշված կրթական ծրագրերով առաջին ինը շրջանավարտներն ունեցանք, որոնցից յոթը գերազանց գնահատականով պաշտպանեցին իրենց ավարտական աշխատանքները:

3. Ավելանում է հետաքրքրությունը նաև **«Դպրոցական մանկավարժություն և մեթոդիկա» մագիստրոսական կրթական ծրագրի** նկատմամբ, քանի որ այն հնարավորություն է տալիս երկրորդ կրթական աստիճանի շնորհիվ ձեռք բերել դպրոցում որպես ուսուցիչ դասավանդելու հնարավորություն: Այս կրթական ծրագրով ուսանելու համար դիմում են ինչպես մասնաճյուղի բակալավրիատը նախորդ ուսումնական տարում ավարտած ուսանողները, այնպես էլ նախորդ տարիների շրջանավարտներ և դիմորդներ, որոնք ավարտել են հանրապետության այլ բուհեր:

Ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական համակազմը լրացվում է փորձառու հրավիրյալ դասախոսներով, ինչպես նաև մեր շրջանավարտներով: Ֆակուլտետում դասավանդող 84 դասախոսներից **13-ը մեր շրջանավարտներն են**, որոնցից 5-ը ունեն գիտությունների թեկնածուի գիտական աստիճան, 3-ը հայցորդներ են: Ուսանողների համար ֆակուլտետում պարբերաբար կազմակերպվում են հանդիպումներ իրենց մասնագիտական գործունեության մեջ հաջողությունների հասած շրջանավարտների հետ, որոնք իրենց անցած ուղին են ներկայացվում, իրենց փորձով կիսվում և խորհուրդներ տալիս ուսանողներին:

Ֆակուլտետը օտար լեզուների ամբիոնի և ամերիկյան AMVN («Հայ կամավորական ցանց») հասարակական կազմակերպության համագործակցությամբ աշխատում է **այլընտրանքային կրթության** հնարավորություն առաջարկել ուսանողներին, որոնք կարող են կազմակերպության լեզվակիր մասնագետների օժանդակությամբ բարելավել անգլերենի, ֆրանսերենի, ռուսերենի խոսակցական հմտությունները կամ նոր լեզու ուսումնասիրել: Դասընթացները հաջողությամբ ավարտած ուսանողները կազմակերպության կողմից ստանում են հավաստագրեր: Կազմակերպության հետ համագործակցությունն արդեն երկու տարուց ավելի է, սակայն ցավալի է, որ դասընթացներին մասնակցելու ցանկություն ունեցող ուսանողների թիվը չի ավելանում: Դեռևս **<u>մեծ խնդիր է</u>** ուսանողների մի հատվածին մոտիվացնելը, նրանց անտարբերությունը հետաքրքվածության վերածելը:

Հարկ է նշել, որ վճարովի համակարգում սովորող ուսանողների **<u>վարձավճարների փոխհատուցում</u>** անող որոշ կազմակերպություններ (ՀՕՖ, Հովնանյան հիմնադրամ, «Հայաստան» համահայկական հիմնադրամ, «Հայ մանուկներ» բարեգործական հիմնադրամ, ՏաՀույս Տավուշի առաջնորդարան) փոխհատուցումն անում են ուսանողի ՄՈԳ-ի հիման վրա, որը որոշակի առումով խթան է ուսման առաջադիմության համար, ինչպես նաև հիմք ընդունելով ուսանողի սոցիալական կարգավիճակը: Կան նաև բարեգործությամբ զբաղվող անհատներ, որոնք փոխհատուցում են իրենց համագյուղացի ուսանողների վարձավճարները (մասնավորապես Գոշ համայնքի ուսանողների-Փողարյան Ասպետ):

2022-23 ուստարում ֆակուլտետում օտար լեզուների ամբիոնի պրոֆեսոր Սվետլանա

Մինասյանի անմիջական նախաձեռնությամբ 2-րդ անգամ կազմակերպվեց «Սոցիալ-մանկավարժական նորարարությունները կրթության մեջ» երիտասարդ գիտնականների **միջազգային համաժողովը** (2023թ. ապրիլի 15-16), որին 16 երկրից մասնակցեց 215 մասնակից: Այս համաժողովը մասնաճյուղի և մասնավորապես ֆակուլտետի գիտամանկավարժական կյանքում մեծ իրադարձություն է, նաև խթան և ազդակ թե՛ ուսանողների և թե՛ դասախոսների համար:

2023թ.-ի հուլիսի 1-ից օգոստոսի 1-ը մասնաճյուղում կազմակերպվեց ամառային դպրոց՝ ԱՄՆ-ի Այովայի համալսարանի ուսանողների համար՝ օտար լեզուների ամբիոնի պրոֆեսոր Սվետլանա Մինասյանի ղեկավարությամբ, իսկ ամերիկյան համակարգողն էր նույն համալսարանի Համաշխարհային լեզուների, գրականության և մշակույթների ռուսական ծրագրի տնօրեն Իրինա Կոստինան: Ամառային դպրոցը (պրակտիկան) կրում էր «Բազմամշակույթ աշխարհում ռուսաց լեզվի և մշակույթի ուսանողների կրթության արդյունավետության բարձրացում Հայաստանում» խորագիրը: ԱՄՆ-ից ժամանած 9 ուսանողների համար կազմվել էր ուսումնառության ծրագիր, որն իրականացվում էր ֆակուլտետի ռուսաց լեզվի դասախոսներրի կողմից: Այսպիսի **միջազգային համագործակցությունը ևս դրական խթան էր ֆակուլտետի համար**:

Եթե խոսենք դժվարություններից, ապա առաջին հերթին անհրաժեշտ է ֆինանսավորման աղբյուրներ գտնել՝ ֆինանսական հոսք ապահովելու համար: Բացի դրանից, ֆակուլտետն ունի **ուսումնական տարածքների պակաս**, որը հատկապես ակնառու է դառնում, երբ առկա ուսուցմանը զուգորդվում է հեռակա ուսուցումը;

2. Ֆակուլտետի գործունեության վերաբերյալ դեկանի հաշվետվությունը

Ամփոփելով նախորդ ուսումնական տարին և յուրաքանչյուր հարցին պատասխանելով մինչև 750 բառի սահմանում՝ **ներկայացրե՛ք Ձեր՝ որպես դեկանի** գործունեությունը՝ ըստ ԵՊՀ ԻՄ զարգացման 2022-2026 ռազմավարական ծրագրի երեք նպատակների: Հարցերին պատասխանելիս ներառեք տրամադրված տվյալների հիման վրա իրականացված բովանդակային վերլուծություն:

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿ 1

ԲԱՐՁՐՈՐԱԿ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

1.1.1. Ընդունելություն

(Անդրադառնալով ֆակուլտետում հաշվետու ժամանակաշրջանում կրթական երկու մակարդակներում ուսանողների քանակական տվյալներին՝ ներկայացրե՛ք ընդհանուր պատկերն ու միտումները: Ի՞նչ եզրակացություններ կարելի է անել ընդունելության, կրթական մի մակարդակից մյուսն անցնելու, առաջին և երկրորդ հայտով ընդունելության, վճարովի և անվճար ընդունելության տվյալների, միջազգային ուսանողների ներգրավման վերլուծության արդյունքում: Որո՞նք պիտի լինեն ֆակուլտետի հետագա քայլերը իրավիճակի բարելավման և նոր արդյունքներ գրանցելու համար):

Ֆակուլտետը 2022-23 ուստարում առկա ուսուցման համակարգում ունեցել է 345, հեռակա ուսուցման համակարգում՝ 225 ուսանող: «Պատմություն» կրթական ծրագրով առկա ուսուցման համակարգում պլանային տեղերի թիվը անվճար ուսուցման համակարգում եղել է 3, վճարովի ուսուցման համակարգում՝ 42: Հիմնական փուլով դիմում է ներկայացրել 31 դիմորդ: Առաջին հայտով անվճար ուսուցման համակարգ է ընդունվել 3, վճարովի ուսուցման համակարգ՝ 15 ուսանող: Լրացուցիչ փուլով դիմում ներկայացրած ուսանողներ չեն եղել: Ընդունելության գնահատականի շեմը անվճար համակարգում եղել է 33,75, վճարովի համակարգում՝ 17,50: Նշված կրթական ծրագրով հեռակա ուսուցման պլանային տեղերի թիվը վճարովի համակարգում 50 է: Հիմնական փուլով դիմում է ներկայացրել 26 դիմորդ, որոնցից ընդունելության նվազագույն շեմը հաղթահարել է 8 դիմորդ: Ընդունելության գնահատականի շեմը 16 է:

«Հայոց լեզու և գրականություն» կրթական ծրագրով առկա ուսուցման համակարգում պլանային տեղերի թիվը անվճար ուսուցման համակարգում եղել է 4, վճարովի ուսուցման համակարգում՝ 31: Հիմնական փուլով դիմում է ներկայացրել 11 դիմորդ: Առաջին հայտով անվճար ուսուցման համակարգ է ընդունվել 4, վճարովի ուսուցման համակարգ՝ 3 ուսանող:

Լրացուցիչ փուլով դիմում ներկայացրած ուսանողներ չեն եղել: Ընդունելության գնահատականի շեմը անվճար համակարգում եղել է 31,75, վճարովի համակարգում՝ 18,75:

Նշված կրթական ծրագրով հեռակա ուսուցման պլանային տեղերի թիվը վճարովի համակարգում 40 է: Հիմնական փուլով դիմում է ներկայացրել 4 դիմորդ, որոնցից ընդունելության նվազագույն շեմը հաղթահարել է 3 դիմորդ: Ընդունելության գնահատականի շեմը 17,50 է:

«Անգլերեն լեզու և գրականություն» կրթական ծրագրով առկա ուսուցման համակարգում պլանային տեղերի թիվը անվճար ուսուցման համակարգում եղել է 4, վճարովի ուսուցման համակարգում՝ 31: Հիմնական փուլով դիմում է ներկայացրել 32 դիմորդ: Առաջին հայտով անվճար ուսուցման համակարգ է ընդունվել 4, վճարովի ուսուցման համակարգ՝ 25 ուսանող: Լրացուցիչ փուլով դիմում ներկայացրած ուսանողներ չեն եղել: Ընդունելության գնահատականի շեմը անվճար համակարգում եղել է 34,75, վճարովի համակարգում՝ 19,25: Նշված կրթական ծրագրով հեռակա ուսուցում մասնաճյուղը չի իրականացնում:

«Ֆրանսերեն լեզու և գրականություն» կրթական ծրագրով առկա ուսուցման համակարգում պլանային տեղերի թիվը անվճար ուսուցման համակարգում եղել է 2, վճարովի ուսուցման համակարգում՝ 13: Հիմնական փուլով դիմում է ներկայացրել 6 դիմորդ: Առաջին հայտով անվճար ուսուցման համակարգ է ընդունվել 2, վճարովի ուսուցման համակարգ՝ 4 ուսանող: Լրացուցիչ փուլով դիմում ներկայացրած ուսանողներ չեն եղել: Ընդունելության գնահատականի շեմը անվճար համակարգում եղել է 35,75, վճարովի համակարգում՝ 18,25: Նշված կրթական ծրագրով հեռակա ուսուցում մասնաճյուղը չի իրականացնում:

«Մասնագիտական մանկավարժություն» մասնագիտության «Ռուսաց լեզու և գրականություն» կրթական ծրագրով առկա ուսուցման համակարգում պլանային տեղերի թիվը անվճար ուսուցման համակարգում եղել է 2, վճարովի ուսուցման համակարգում՝ 28: Հիմնական փուլով դիմում է ներկայացրել 18 դիմորդ: Առաջին հայտով անվճար ուսուցման համակարգ է ընդունվել 2, վճարովի ուսուցման համակարգ՝ 12 ուսանող: Լրացուցիչ փուլով դիմում ներկայացրած ուսանողներ չեն եղել: Ընդունելության գնահատականի շեմը անվճար համակարգում եղել է 35,25, վճարովի համակարգում՝ 15: Նշված կրթական ծրագրով հեռակա ուսուցում մասնաճյուղը չի իրականացնում:

«Ընդհանուր մանկավարժություն» մասնագիտության «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» կրթական ծրագրով առկա ուսուցման համակարգում պլանային տեղերի թիվը անվճար ուսուցման համակարգում եղել է 5, վճարովի ուսուցման համակարգում՝ 35: Հիմնական փուլով դիմում է ներկայացրել 22 դիմորդ: Առաջին հայտով անվճար ուսուցման համակարգ է ընդունվել 5, վճարովի ուսուցման համակարգ՝ 10 ուսանող: Լրացուցիչ փուլով դիմում ներկայացրած ուսանողներ չեն եղել: Ընդունելության գնահատականի շեմը անվճար համակարգում եղել է 25,5, վճարովի համակարգում՝ 18: Նշված կրթական ծրագրով հեռակա ուսուցման պլանային տեղերի թիվը վճարովի համակարգում 40 է: Հիմնական փուլով դիմում է ներկայացրել 14 դիմորդ, որոնցից ընդունելության նվազագույն շեմը հաղթահարել է 4 դիմորդ: Ընդունելության գնահատականի շեմը 18,25 է:

«Հոգեբանություն» կրթական ծրագրով առկա ուսուցման համակարգում պլանային տեղերի թիվը անվճար ուսուցման համակարգում եղել է 2, վճարովի ուսուցման համակարգում՝ 33: Հիմնական փուլով դիմում է ներկայացրել 23 դիմորդ: Առաջին հայտով անվճար ուսուցման համակարգ է ընդունվել 2, վճարովի ուսուցման համակարգ՝ 6 ուսանող: Լրացուցիչ փուլով դիմում ներկայացրած ուսանողներ չեն եղել: Ընդունելության գնահատականի շեմը անվճար համակարգում եղել է 33,25, վճարովի համակարգում՝ 17,75: Նշված կրթական ծրագրով հեռակա ուսուցման պլանային տեղերի թիվը վճարովի համակարգում 40 է: Հիմնական փուլով դիմում է ներկայացրել 25 դիմորդ, որոնցից ընդունելության նվազագույն շեմը հաղթահարել է 9 դիմորդ: Ընդունելության գնահատականի շեմը 16,75 է:

Ֆակուլտետում իրականացվում է նաև հեռակա ուսուցման մագիստրոսական «Դպրոցական մանկավարժություն և մեթոդիկա» կրթական ծրագիրը, որին հատկացված վճարովի համակարգի պլանային 25 տեղերի համար նշված ուսումնական տարում դիմել և առաջին հայտով ընդունվել է 13 դիմորդ:

Ֆակուլտետը 2023-24 ուստարում առկա ուսուցման համակարգում ունի 346 ուսանող, հեռակա ուսուցման համակարգում՝ 215:

«Դպրոցական մանկավարժություն և մեթոդիկա» կրթական ծրագիրի վճարովի համակարգի պլանային 25 տեղերի համար 2023-24 ուսումնական տարում դիմել և առաջին հայտով ընդունվել է 19 դիմորդ:

Նշված ժամանակահատվածներում միջազգային ուսանողների ներգրավվածություն ֆակուլտետը չի ունեցել:

Ֆակուլտետում **իրավիճակի բարելավման և նոր արդյունքների գրանցման համար** անհրաժեշտ է ակտիվացնել այցերը մարզի դպրոցներ՝ տարբեր մասնագետների մասնակցությամբ, որոնք հանդես կգան ակնարկային դասախոսություններով, ինչպես նաև գովազդել մագիստրոսական կրթական ծրագիրը, որն իր շրջանավարտներին աշխատանքի լրացուցիչ հնարավորություն է տալիս՝ դպրոցում որպես ուսուցիչ աշխատելու:

1.1.2. Դիմորդների մասնագիտական կողմնորոշում

(Ի՞նչ աշխատանք է իրականացվել դիմորդների շրջանում մասնագիտական կողմնորոշման ուղղությամբ, ի՞նչ ազդեցություն են ունեցել այդ աշխատանքները: Որքանո՞վ են դրանք նպաստել դիմորդների մասնագիտական կողմնորոշման և ֆակուլտետում ընդունելության վրա: Արդյո՞ք կա դիմորդների հետ տարվող աշխատանքների վերանայման անհրաժեշտություն: Եթե կա, ապա խնդրում ենք մանրամասնել):

Ֆակուլտետը, համագործակցելով ՊԿՇՀ բաժնի հետ, տարածաշրջանի, ինչպես նաև Գեղարքունիքի և Լոռու մարզերի մի շարք դպրոցներում իրականացրել և իրականացնում է մասնագիտական կողմնորոշման աշխատանքներ: Մասնավորապես 2023 թ. ապրիլի 25-28-ի ընթացքում մասնաճյուղի տարբեր դասախոսներ **ակնարկային դասախոսություններով** հանդես են եկել մարզի տարբեր դպրոցներում:

1. Ապրիլի 27-ին Օտար լեզուների ամբիոնի դասախոսներ Մ. Կարապետյանը և Դ. Մարգարյանը Սևքարի միջնակարգ դպրոցի 11-րդ դասարանի աշակերտների համար «Ֆրանսերենը և Ֆրանկոֆոնիայի միջազգային կազմակերպությունը» թեմայով **ակնարկային** դասախոսություն կարդացին: Քննարկվեցին ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի հետ հարաբերությունների զարգացումը և «Ֆրանսերեն լեզու և գրականություն» կրթական ծրագրով սովորող ուսանողներին տրվող հնարավորությունները:

2. Ապրիլի 28-ին նույն ամբիոնի ասիստենտ Ա. Մարդանյանը և դասախոս Ա. Հովհաննիսյանը Իջևանի վարժարանի 10-12-րդ դասարաններում սովորող աշակերտների համար «Բանավոր խոսքի ըմբռնումը» թեմայով **դասախոսություն** կարդացին՝ կարևորելով ֆրանսերեն բանավոր խոսքի հմտությունների և կարողությունների զարգացումը: Աշակերտների համար իրականացվեց նաև նախօրոք պատրաստված գործնական թեմատիկ աշխատանք՝ տեսանյութերի և ուղղորդող հարցերի միջոցով՝ մեծ հետաքրքրություն և աշխուժություն առաջացնելով նրանց մեջ: http://ijevan.ysu.am/02-05-2023/

Ֆակուլտետ այցելություն են կատարել Աչաջուր գյուղի 9-րդ դասարանի աշակերտները՝ նախ ստանալու աջակցություն նախագծային աշխատանքների իրականացման հարցում, ապա լսելու դասախոսություն «Ֆրանսերեն լեզու» դասընթացից:

Նշված ուսումնական տարվա ընթացքում ՊԿՇՀ բաժնի կողմից կազմակերպված ճանաչողական շրջայցի շրջանակներում **ֆակուլտետ են այցելել** նաև Պ.Տէվէճեանի անվան տարածաշրջանային քոլեջի շրջանավարտները: Նրանք ծանոթացել են ֆակուլտետում իրականացվող կրթական ծրագրերին, բուհում կրթությունը շարունակելու հնարավորություններին, տեղեկատվություն ստացել մասնաճյուղի տարածքում գործող ուսումնագիտական կենտրոնների, ուսանողական կառույցների մասին:

ՊԿՇՀ բաժինը մասնաճյուղի ֆակուլտետների համագործակցությամբ սեպ. հոկտեմբերին կազմակերպել է հանդիպումներ Տավուշի և Գեղարքունիքի մարզերի հանրակրթական 34 դպրոցների 12-րդ դասարանի աշակերտների հետ՝ մասնագիտական կողմնորոշման շրջանակներում: Հումանիտար գիտությունների ֆակուլտետից հանդիպումներին մասնակցել են փոխդեկան Վ. Չոբանյանը և «Պատմություն», «Հայոց լեզու և գրականություն» կրթական ծրագրերով սովորող ուսանողներ: Հանդիպումների ընթացքում ներկայացվել են նաև ֆակուլտետի բակալավրիատի և մագիստրատուրայի կրթական ծրագրերը, ընդունելության կարգը և շարժունության հնարավորությունները, տրվել է հաղորդում ընդունելության նախապատրաստական դասընթացների կազմակերպման վերաբերյալ: Մասնաճյուղի ներկայացուցիչների կողմից դպրոցների պատասխանատուներին առաջարկվել է աշակերտների ճանաչողական այցեր կազմակերպել մասնաճյուղ, ինչպես նաև նրանց

հետաքրքրող թեմաներով իրականացնել ակնարկային դասախոսություններ, գործնական պարապմունքներ և թեմատիկ քննարկումներ՝ հստակեցնելով իրականացման ժամանակացույցը:

Անշուշտ դիմորդների և դպրոցների հետ տարվող աշխատանքները վերանայման անհրաժեշտություն ունեն **դրանք հաճախակի դարձնելու ուղղությամբ**, քանի մասնագիտական կողմնորոշման ուղղությամբ տարվող աշխատանքները որոշակի առումով ազդեցություն ունենում են:

1.1.3. Կրթական ծրագրեր

(Ի՞նչ եզրակացություններ կարելի է անել ընդունելություն-կրթական ծրագրեր հարաբերակցության վերլուծության հիման վրա: Ի՞նչ գործողություններ են անհրաժեշտ իրավիճակի բարելավման համար: Ի՞նչ աշխատանք է իրականացվել կրթական ծրագրերի որակի գնահատման, դրա բարելավման ուղղությամբ):

Ընդունելություն-կրթական ծրագրեր հարաբերակցության վերլուծությունը քանակական տվյալներով լավագույնս երևում է «Ռուսաց լեզու և գրականություն» (քննարկված 2022թ.-ի ապրիլի 28-ի տնօրենության N 12 նիստում)

և «Հայոց լեզու և գրականություն» կրթական ծրագրերի (քննարկված 2023թ.-ի հունիսի 14-ի տնօրենության N 10 նիստում) մոնիթորինգի արդյունքներից: Ներկայումս մոնիթորինգի փուլում են ֆակուլտետի մյուս 5 կրթական ծրագրերը՝ «Պատմություն», «Հոգեբանություն», «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա», «Անգլերեն լեզու և գրականություն», «Ֆրանսերեն լեզու և գրականություն»: Մոնիթորինգի արդյունքում ներկայացվում են ծրագրի ուժեղ և թույլ կողմերը, արվում են ծրագրի բարելավմանն ուղղված առաջարկներ և նշվում դրանց իրականացման համար ժամկետներ:

Ֆակուլտետի կրթական ծրագրերում կատարվել են բավական փոփոխություններ, որոնց մի մասը պայմանավորված է ԵՊՀ պահանջներով: Մասնավորապես կրթական ծրագրերում վերանայվել է շրջանավարտների մասնագիտական կոմպետենցիաների համախումբը: ԵՊՀ ԻՄ բակալավրի շրջանավարտների ընդհանրական կոմպետենցիաների պարտադիր կազմը քննարկվել և հաստատվել է ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդի 2022թ.-ի նոյեմբերի 26-ի նիստում:

Բացի նշվածից, ֆակուլտետի կրթական ծրագրերի վերանայման աշխատանքային խմբերը կրթական ծրագրերի ղեկավարների գլխավորությամբ վերանայել են 2023-27 և 2023-28 ուսումնական պլանները՝ պայմանավորված «ԵՊՀ բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերով ուսումնական գործընթացի կազմակերպման կարգի» փոփոխություններով և ԵՊՀ պահանջով: Նախ և առաջ հնարավորինս պահպանվել են նախորդ տարի ընդունված մոդուլային դասավանդման ձևերը, ընդհանուր կրթական կառուցամասում կրճատվել են ինչպես դասընթացների քանակը, այնպես էլ կրեդիտները: մասնագիտական դասընթացները 3, 6 կամ 9 կրեդիտով են: Կրճատվել են լսարանային ժամերը: Ընդհանուր կրթական կառուցամասի օտար լեզուների ցանկում դասընթացների կրեդիտը 4-ից դարձել է 2,

ժամաքանակը՝ 60-ից 30: «Փիլիսոփայության հիմունքներ» դասընթացը տեղափոխվել է 5-րդ կիսամյակ: «Էկոլոգիայի և բնապահպանության հիմունքներ» դասընթացը 1-ին կիսամյակից տեղափոխվել է 4-րդ: Փոփոխություններ և համալրում է կատարվել ընդհանուր կրթական կառուցամասի կամընտրական դասընթացների ցանկում: 2023-27 թթ. ուսումնական պլաններում **7-րդ կիսամյակում նախատեսվում է շարժունության պատուհան**՝ 12 կրեդիտով: Այս անհրաժեշտ կրեդիտներն ուսանողն ընտրելու է բակալավրի հարակից կրթական ծրագրերի մասնագիտական ցանկից՝ կրթական ծրագրի ղեկավարի ուղղորդմամբ: Բոլոր կրթական ծրագրերում ավելացել է «Հետազոտության պլանավորում և մեթոդներ» դասընթացը՝ 2 կրեդիտ, 30 լսարանային ժամաքանակով:

1.1.4. Ուսման առաջադիմություն

(Գնահատե՛ք ուսանողների ուսման առաջադիմության հիմնական միտումները հաշվետու ժամանակահատվածի ընթացքում: Ինչո՞վ են դրանք պայմանավորված, և ի՞նչ քայլեր են անհրաժեշտ իրավիճակի բարելավման համար):

2022-23 ուստարում ֆակուլտետում ըստ կրթական ծրագրերի արձանագրվել են երկու կիսամյակների համար առաջադիմության հետևյալ միջինացված ցուցանիշներն՝ ըստ կրթական ծրագրերի (մինչև լուծարքային շրջանը).

«Պատմություն» -Առկա ուսուցում-84,45%, հեռակա ուսուցում-35,65%

«Տարրական մանկավարժություն և մեթոդիկա»- Առկա ուսուցում-86,92%, հեռակա ուսուցում-28,55%

«Հոգեբանություն» -Առկա ուսուցում-90,92%, հեռակա ուսուցում-19,2%

«Հայոց լեզու և գրականություն» -Առկա ուսուցում-93,02%, հեռակա ուսուցում-36,65%

«Անգլերեն լեզու և գրականություն» -Առկա ուսուցում-89,57%

«Ֆրանսերեն լեզու և գրականություն» -Առկա ուսուցում-94,22%

«Ռուսաց լեզու և գրականություն» -Առկա ուսուցում-91,75%

«Դպրոցական մանկավարժություն և մեթոդիկա»- Հեռակա ուսուցում-100%

Ինչպես նկատելի է բերված տվյալներից, ցածր առաջադիմություն է արձանագրվել հեռակա ուսուցման կրթական ծրագրերով սովորող ուսանողների շրջանում: Սա ինչ-որ առումով պայմանավորված է բազային գիտելիքների ցածր մակարդակով, այլ զբաղվածությամբ, ինչպես նաև ուսման ընթացքի կարճատև լինելով և հաճախումներով: Անհրաժեշտ է դասավանդման մեթոդների մեջ փոփոխություններ անել, նոր մոտեցումներ դրսևորել առարկայական դասավանդման մեջ՝ դրանով առաջացնելով հետաքրքրություն և մոտիվացիա:

1.1.5. Ուսանողների հոսունություն

(Գնահատե՛ք ֆակուլտետի կրթական ծրագրերի շրջանակում ուսանողների հոսունության (հեռացված, դուրս մնացած, ԵՊՀ-ից կամ ԵՊՀ տեղափոխված) ընդհանուր պատկերը: Ի՞նչ եզրակացություն կարելի է անել այս թվերի հիման վրա, և ի՞նչ գործողություններ է անհրաժեշտ նախաձեռնել այդ ուղղությամբ):

2022-23 ուստարում ֆակուլտետի կրթական ծրագրերում ուսանողների հոսունության ընդհանուր պատկերը, ըստ կրթական ծրագրերի, հետևյալն է.

«Պատմություն» կրթական ծրագիր

Առկա ուսուցում

Ուսումնական իրավունքները վերականգնած ուսանողների թիվ-3 (I կուրս), 1 (III կուրս)

Այլ բուհերից և կրթական ծրագրերից տեղափախվածների թիվ-3 (II կուրս)

Հեռացված ուսանողների թիվ-1 (I կուրս), 1 (II կուրս)

Հեռակա ուսուցում

Ուսումնական իրավունքները վերականգնած ուսանողների թիվ-4 (I կուրս), 1 (II կուրս), 3 (III կուրս), 1 (IV կուրս)

Այլ բուհերից և կրթական ծրագրերից տեղափախվածների թիվ-7 (II կուրս)

Հեռացված ուսանողների թիվ-2 (II կուրս), 6 (III կուրս), 4 (IV կուրս)

«Հայոց լեզու և գրականություն» կրթական ծրագիր

Առկա ուսուցում

Ուսումնական իրավունքները վերականգնած ուսանողների թիվ-0

Այլ բուհերից և կրթական ծրագրերից տեղափախվածների թիվ-1 (III կուրս)

Հեռացված ուսանողների թիվ-2 (III կուրս)

Հեռակա ուսուցում

Ուսումնական իրավունքները վերականգնած ուսանողների թիվ-1(IV կուրս)

Այլ բուհերից և կրթական ծրագրերից տեղափախվածների թիվ-0

Հեռացված ուսանողների թիվ-0

«Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» կրթական ծրագիր

Առկա ուսուցում

Ուսումնական իրավունքները վերականգնած ուսանողների թիվ-0

Այլ բուհերից և կրթական ծրագրերից տեղափախվածների թիվ-2 (II կուրս), 1 (III կուրս)

Հեռացված ուսանողների թիվ-1 (II կուրս)

Հեռակա ուսուցում

Ուսումնական իրավունքները վերականգնած ուսանողների թիվ-2 (I կուրս), 2(II կուրս), 3 (IV կուրս)

Այլ բուհերից և կրթական ծրագրերից տեղափոխվածների թիվ-3 (II կուրս), 1 (IV կուրս)

Հեռացված ուսանողների թիվ-1(I կուրս), 1 (III կուրս)

«Հոգեբանություն» կրթական ծրագիր

Առկա ուսուցում

Ուսումնական իրավունքները վերականգնած ուսանողների թիվ-0

Այլ բուհերից և կրթական ծրագրերից տեղափոխվածների թիվ-0

Հեռացված ուսանողների թիվ-1(I կուրս), 1(II կուրս)

Հեռակա ուսուցում

Ուսումնական իրավունքները վերականգնած ուսանողների թիվ-0

Այլ բուհերից և կրթական ծրագրերից տեղափոխվածների թիվ-1 (I կուրս), 4 (II կուրս), 1(III կուրս)

Հեռացված ուսանողների թիվ-2(I կուրս), 8 (II կուրս), 2 (III կուրս)

«Անգլերեն լեզու և գրականություն» կրթական ծրագիր

Առկա ուսուցում

Ուսումնական իրավունքները վերականգնած ուսանողների թիվ-1 (I կուրս), 1 (II կուրս)

Այլ բուհերից և կրթական ծրագրերից տեղափոխվածների թիվ-2 (I կուրս), 1 (IV կուրս)

Հեռացված ուսանողների թիվ-3 (I կուրս), 2 (IV կուրս)

«Ֆրանսերեն լեզու և գրականություն» կրթական ծրագիր

Առկա ուսուցում

Ուսումնական իրավունքները վերականգնած ուսանողների թիվ-0

Այլ բուհերից և կրթական ծրագրերից տեղափոխվածների թիվ-1 (II կուրս)

Հեռացված ուսանողների թիվ-0

«Ռուսաց լեզու և գրականություն» կրթական ծրագիր

Առկա ուսուցում

Առկա ուսուցում

Ուսումնական իրավունքները վերականգնած ուսանողների թիվ-0

Այլ բուհերից և կրթական ծրագրերից տեղափոխվածների թիվ-3 (II կուրս)

Հեռացված ուսանողների թիվ-2 (I կուրս), 1 (II կուրս)

«Դպրոցական մանկավարժություն և մեթոդիկա» մագիստրոսական կրթական ծրագիր

Հեռակա ուսուցում

Ուսումնական իրավունքները վերականգնած ուսանողների թիվ-0

Այլ բուհերից և կրթական ծրագրերից տեղափոխվածների թիվ-0
Հեռացված ուսանողների թիվ-1 (I կուրս), 1 (II կուրս)

Ընթացիկ 2023-24 ուսումնական տարում ուսանողների հոսունությունն ընթացքի մեջ է: 2023-24 ուստարվա I կիսամյակում քոլեջներից ֆակուլտետ ընդունվածների ընդհանուր թիվը 5 է:

Արցախի պետական համալսարանից և «Գրիգոր Նարեկացի» համալսարանից ֆակուլտետի առկա և հեռակա ուսուցման կրթական ծրագրերում ներկայումս ընդգրկված է 17 ուսանող (9-ը առկա ուսուցման համակարգում, 8-ը՝ հեռակա):

Ուսանողների հոսունությունը շարունակական իրողություն է և պայմանավորված է ինչպես ուսանողի անձնական պատճառներով, այնպես էլ նրա ակադեմիական անբավարար առաջադիմության կամ հաճախումների թվով:

1.1.6. Դոկտորական կրթություն

(Գնահատե՛ք հայցորդների և ասպիրանտների, պաշտպանած ատենախոսությունների ընթացիկ տարվա արդյունքներն ու դրանց ազդեցությունը ՈւՍ գործունեության վրա):

1.1.7. Կրթաթոշակներ

(Ինչպե՞ս կգնահատեք հասանելի կրթաթոշակների ազդեցությունը կրթական գործընթացի վրա, ի՞նչ քայլեր են անհրաժեշտ այդ ուղղությամբ: Ի՞նչ աշխատանքներ եք իրականացրել կրթաթոշակների թիվն ավելացնելու ուղղությամբ, ի՞նչ հնարավորություններ կան հաջորդ տարիների համար):

Ֆակուլտետում սահմանված են չորս անվանական կրթաթոշակներ՝ ըստ կրթական ծրագրերի («Դավիթ Անհաղթ»-«Հոգեբանություն», «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» կրթական ծրագրեր, «Շառլ Ազնավուր»-«Անգլերեն լեզու և գրականություն», «Ֆրանսերեն լեզու և գրականություն», «Ռուսաց լեզու և գրականություն» կրթական ծրագրեր, «Գրիգոր Նարեկացի»-«Հայոց լեզու և գրականություն» կրթական ծրագիր, «Մխիթար Գոշ»-«Պատմություն» կրթական ծրագիր), որոնք հատկացվում են ուսման բարձր առաջադիմություն և հասարակական ակտիվություն ունեցող ուսանողներին՝ ըստ Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի ուսանողական նպաստների, պետական և ներբուհական կրթաթոշակների հատկացման կանոնակարգի: Բացի ֆակուլտետային կրթաթոշակներից,

լավագույն ուսանողները ներկայացվում են նաև ներբուհական մրցութային կրթաթոշակների՝ «ԵՊՀ», «Արտակ Ցուցուլյանի անվան» և «44-օրյա պատերազմում անմահացած ուսանողների անվան» և Պաշտպանության նախարարության կողմից տրամադրվող «Մոնթե Մելքոնյան» և «Վազգեն Սարգսյան» կրթաթոշակների:

Առաջադիմության համար հատկացվող կրթաթոշակների իհարկե դրական խթան են ուսանողների համար: Բարձր առաջադիմություն ունեցող ուսանողների շրջանում մեծանում է մրցակցությունը լավագույնը լինելու համար:

Նշենք, որ ֆակուլտետի վճարովի համակարգում սովորող ուսանողների վարձավճարների փոխհատուցման համար կան ինչպես անհատներ, այնպես էլ հովանավոր կազմակերպություններ («Հայ օգնության ֆոնդ», «Հովնանյան» հիմնադրամ, «Հայաստան» համահայկական հիմնադրամ, «Հայ մանուկներ» բարեգործական հիմնադրամ, ԱՄՄ բարեգործական-մարդասիրական հիմնադրամ, ՏաՀույս Տավուշի առաջնորդարան):

1.2.1. Ներառական կրթություն

(Որքանո՞վ են ֆակուլտետում առկա պայմանները (ֆիզիկական, ենթակառուցվածքային, կրթական, մասնագիտական) ապահովում ներառական կրթության հնարավորությունները):

Ֆակուլտետում հատուկ ենթակառուցվածքներ ներառական կրթության համար նախատեսված չեն: Գրադարանի մուտքը թեքահարթակ ունի, որով հատուկ օժանդակության կարիք ունեցող ուսանողների մուտքը ֆակուլտետ հարմարավետ է դառնում: Իսկ կրթական և մասնագիտական առումով ֆակուլտետում սովորող հատուկ կարիքներ ունեցող 2 ուսանողները (մեկը՝ առկա ուսուցմամբ, մյուսը՝ հեռակա) դասախոսների առանձնահատուկ և անհատական ուշադրության տակ են, նրանց հետ աշխատում են նաև առանձին:

1.3.1. Գործատուների հետ համագործակցություն

(Գնահատե՛ք հաշվետու ժամանակահատվածի ընթացքում տեղական և միջազգային մակարդակներում ոլորտային գործատուների և փորձագետների հետ համագործակցությունը: Որո՞նք են համագործակցության հիմնական միտումները: Ի՞նչ ազդեցություն է այն ունեցել կրթական ու գիտահետազոտական գործընթացի վրա (դասախոսների ներգրավում, կրթաթոշակներ, հետազոտական պատվերներ, կրթական ծրագրերի վերանայում և այլն), ի՞նչ հավելյալ գործողությունների անհրաժեշտություն կա իրավիճակի բարելավման համար):

Հաշվետու ժամանակահատվածի ընթացքում միջազգային գործատուների և փորձագետների հետ համագործակցություն չի եղել, իսկ տեղական ոլորտային գործատուների հետ համագործակցությունը հիմնականում եղել է ուսումնական գործընթացով պայմանավորված՝ պրակտիկաների շրջանակներում: Այդ առնչությամբ ֆակուլտետը

համագործակցել է հիմնականում Իջևանի դպրոցների հետ (N 1,4 և 5 հիմնական դպրոցներ, Ավագ դպրոց), Պ. Տեվէճյանի տարածաշրջանային քոլեջի, Ինֆոտան, Ամերիկյան գրադարան – դասընթացների կենտրոնի, Իջևանի պատմաերկրագիտական թանգարանի, «Հույսի կամուրջ» կազմակերպության, Իջևանի վարժարանի, Իջևանի մանկապարտեզի, տարբեր գյուղերի միջնակարգ և հիմնական դպրոցների հետ, hy.wikipedia.org էլ. հանրագիտարանի հետ:

Արտադրական-մանկավարժական պրակտիկաները կազմակերպվել են Իջևանի և տարածաշրջանի նշված դպրոցներում, որոնց մասնակցել են «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» կրթական ծրագրի 3-րդ, 4-րդ (առկա ուսուցում), 5-րդ կուրսերի (հեռակա ուսուցում), «Ռուսաց լեզու և գրականություն» կրթական ծրագրի 3-րդ, 4-րդ (առկա ուսուցում) ուսանողները, իսկ առկա ուսուցման «Հոգեբանություն» կրթական ծրագրի 3-րդ, «Պատմություն», «Հայոց լեզու և գրականություն», «Անգլերեն լեզու և գրականություն», «Ֆրանսերեն լեզու և գրականություն» կրթական ծրագրերի 4-րդ կուրսերի, ինչպես նաև հեռակա ուսուցման «Հոգեբանություն» կրթական ծրագրի 4-րդ, «Պատմություն» կրթական ծրագրի 5-րդ կուրսերի մասնագիտական պարկտիկաները կազմակերպվել են վերը նշված այլ վայրերում:

Համագործակցության հիմնական միտումները դպրոցների առնչությամբ **բուհ-դպրոց կապի ամրապնդումն է,** ուսանողների՝ դպրոցի և նրա կառավարման ու բազմաբնույթ գործառույթների վերաբերյալ տեսական գիտելիքների ձեռքբերումը, ուսուցման մեթոդների վերաբերյալ բուհում ձեռք բերած տեսական գիտելիքների գործնական կիրառումը, ոչ մանկավարժական ուղղվածությամբ ուսանողների համար՝ տարբեր գործատուների հետ առնչությունը, հետագա աշխատանքի համար կողմնորոշումը և մասամբ՝ գործնական հմտությունների ձեռքբերումը, գործատուների առումով՝ հնարավորություն է լավագույն ուսանողներից ընտրություն կատարելու, նաև վերհանելու բուհում ուսուցման ժամանակ ըստ մասնագիտացումների ուսանողների ունեցած բացերը: Որպես այդպիսին՝ գործատուների կողմից հիմնականում նշվում է ստեղծագործական մոտեցման, գործնական հմտությունների, արագ կողմնորոշվելու, խոսքը գրագետ և ճիշտ ձևակերպելու անհրաժեշտությունը:

Գործատուների հետ համագործակցությունը որոշակի ազդեցություն է ունեցել կրթական ծրագրերի վերանայման վրա այն առումով, որ վերանայվել են մասնագիտական դասընթացներում գործնական պարապմունքներին հատկացվող ժամաքանակները, պարտադիր կառուցամասի մասնագիտական կամընտրական դասընթացներն՝ իրենց բովանդակությամբ:

1.4.1. Ակադեմիական համակազմի նկարագիր և կարողությունների զարգացում

(Ինչպե՞ս կգնահատեք հաշվետու ժամանակաշրջանում ակադեմիական համակազմի ընդհանուր պատկերը (սեռատարիքային կազմ, կոչում, գիտական աստիճան), ինչպես նաև նրանց կարողությունների զարգացման գործընթացը: Ի՞նչ կարիքներ են բացահայտվել, և ի՞նչ քայլեր են անհրաժեշտ դրանց հասցեագրման համար):

2022-2023 ուսումնական տարում ֆակուլտետն ունեցել է հաստիքային 64 աշխատակից, որոնցից **35-ը գիտությունների թեկնածուի գիտական աստիճանով, 3-ը գիտությունների դոկտորի գիտական աստիճանով:** Նույն ժամանակահատվածում ժամավճարային հիմունքով հրամանագրվել է 15 աշխատակից, որոնցից 5-ը գիտությունների թեկնածուի գիտական աստիճանով, երկուսը՝ գիտությունների դոկտորի գիտական աստիճանով: Նշված ժամանակահատվածում ֆակուլտետում ժամավճարային հիմունքով դասավանդել է նաև **ՌԴ քաղաքացի, բ.գ.թ. Ալեքսանդր Վիտալիի Պաշկովը, կամավորության հիմունքով՝ Ֆրանսիայի քաղաքացի Վերոնիկ Նուենը:**: (Հրամաններ N 138§12 31.08.2022, 138§14 31.08.2022, 138§15 31.08.2022, 138§17 31.08.2022, 138§20 31.08.2022, 138§21 31.08.2022, 141§9 03.09.2022, 153§6 22.09.2022, 154§6 23.09.2022, 154§8 23.09.2022, 159§15 30.09.2022, 179§13 01.11.2022, 179§14 01.11.2022, 179§15 01.11.2022, 5§4 11.01.2023, 15§2 26.01.2023, 22§7 07.02.2023, 28§216.02.2023, 32§2 22.02.23, 36§4 28.02.23)

2023-24 ուստարվա առաջին կիսամյակում ֆակուլտետում դասավանդում է 65 հաստիքային և 20 ժամավճարային հիմունքով դասավանդող աշխատակից, որոնցից 40-ը գիտությունների թեկնածուի գիտական աստիճան ունի, 6-ը՝ գիտությունների դոկտորի: ՌԴ քաղաքացի, Ալեքսանդր Վիտալիի Պաշկովը ժամավճարային հիմունքով դասավանդում է նաև ընթացիկ ուսումնական տարում: (Հրամաններ N131§ 9 31.08.2023, 131§10 31.08.2023, 131§ 11 31.08.2023, 131§ 12 31.08.2023,131§13 31.08.2023, 131§14 31.08.2023, 131§ 15 31.08.2023, 131§16 31.08.2023, 146 § 8 20.09.2023, 173§25 31.10.2023, 173§ 37 31.10.2023, 173§ 50 31.10.2023, 175§5 02.11.2023, 175§6 02.11.2023, 175§7 02.11.2023, 175§8 02.11.2023, 175§9 11.02.2023, 180§28 09.11.2023)

Ինչպես նկատելի է, ակադեմիական համակազմը քանակական առումով մեծ փոփոխություն չի կրել: Դասավանդող աշխատակիցների 42%-ը կանայք են: Հաշվետու ժամանակահատվածում ֆակուլտետի երկու դասախոսներ ստացել են **գիտությունների թեկնածուի գիտական աստիճան** (Գրիգորյան Ավետիս-Հայոց պատմության և հասարակագիտության ամբիոն, Հարությունյան Ռաֆայել-Օտար լեզուների ամբիոն), մեկ դասախոս՝ Սարգսյան Աննա (Օտար լեզուների ամբիոն), ԵՊՀ-ում ձևակերպվել է որպես հայցորդ:

Ֆակուլտետի ամբիոններից երկուսը՝ Հայոց լեզվի և գրականության, Պատմության և հասարակագիտության, ունեն տեղացի կադրեր, որոնք գիտությունների թեկնածուի գիտական աստիճան ունեն: Նշված ամբիոններում կան նաև մեկական հայցորդներ, որոնք դեռևս

աշխատում են իրենց գիտական թեմաների վրա: Տեղացի կադրերի պակաս կա Մանկավարժության և հոգեբանության և Օտար լեզուների ամբիոններում:

Հոգեբան 13 դասախոսներից 3-ը տեղացի են, նրանցից մեկն ունի գիտությունների թեկնածուի գիտական աստիճան: Այս համակազմից երկու հիմնական աշխատակիցներ ասպիրանտներ են (Ազիզյան Մերի, Գասպարյան Գոհար): Ամբիոնի 14 մանկավարժ աշխատակիցներից միայն մեկն է հիմնական աշխատակից և գիտական աստիճանով (Հարությունյան Լիանա): Ամբիոնում կան մանկավարժության երիտասարդ դասախոսներ, որոնք առայժմ չեն նախաձեռնում կրթության հաջորդ աստիճանին անցնելու քայլեր:

Օտար լեզուների ամբիոնում ևս դասախոսների մեծամասնությունը արտաքին համատեղությամբ աշխատողներ են: Անգլերեն լեզվի տեղացի երիտասարդ մասնագետներից մեկը հաշվետու ժամանակահատվածում ստացել է գիտությունների թեկնածուի գիտական աստիճան, մյուսը դարձել է հայցորդ, ինչպես նշել ենք վերը, ևս երկուսը մտածում են հայցորդ դառնալու ուղղությամբ: Ցավոք, այս առումով առաջընթաց չկա ֆրանսերենի և ռուսաց լեզվի մասնագետների շրջանում: Նշենք, որ սա ֆրանսերենի դեպքում միգուցե պայմանավորված է դիմորդների շրջանում նշված մասնագիտացման նկատմամբ հետաքրքրության նվազմանբ և ընդունելության կայուն ցածր ցուցանիշով, իսկ ռուսերենի պարագայում՝ տեղացի դասախոսների տարիքով:

1.5.1. Ենթակառուցվածքներ և պայմաններ

(Գնահատե՛ք ֆակուլտետում առկա պայմանները, դրանց ազդեցությունը գիտակրթական աշխատանքների կազմակերպման վրա, ինչպես նաև դրանց բարելավմանն ուղղված աշխատանքները հաշվետու ժամանակահատվածում: Ի՞նչ առաջնահերթ գործողություններ են անհրաժեշտ աշխատանքային պայմանների բարելավման համար):

Ֆակուլտետի լսարանային ֆոնդն ընդգրկում է 20 լսարան, այդ թվում՝ **անգլերեն լեզվի ռեսուրս- կենտրոն, ռուսաց լեզվի և մշակույթի կենտրոն և ֆրանսերենի ուսուցման սրահ, և մեկ համակարգչային սրահ**, որն օգտագործվում է տնտեսագիտության ֆակուլտետի հետ համատեղ: **Լսարանային ֆոնդը լիովին բավարար չէ** ֆակուլտետի յոթ կրթական ծրագրերով սովորող կուրսերի խմբերին (32 խումբ՝ առկա ուսուցմամբ) ապահովելու համար, և կրթական գործընթացները կազմակերպելիս առաջանում են որոշ դժվարություններ: Դրանք առավել ակնհայտ են դառնում, երբ սկսվում է հեռակա ուսուցման դասապրոցեսը: Հաշվետու ժամանակահատվածում մեկ ուսումնական տարածք վերափոխվել է լսարանի և կահավորվել (58 լսարան): **Ֆակուլտետն ունի տեսասարքով ապահովված 9 լսարան, որոնցից մեկն ավելացել է 2022-23 ուստարում:**

Ուսանողների գիտակրթական կարիքների բավարարմանն է ուղղված նաև գրադարանի

գրքային ֆոնդի համալրումը, որն իրականացվում է մասնաճյուղի ֆինանսավորմամբ և անհատների նվիրատվություններով: Հաշվետու ժամանակահատվածում մասնաճյուղի գրադարանը համալրվել է հումանիտար ուղղվածության մոտ 800 գրքերով և դասագրքերով:

Աշխատանքային պայմանների բարելավման համար առաջին հերթին անհրաժեշտ է **լսարանային ֆոնդի ավելացում**: Սակայն առկա շենքային հնարավորություններով դա դժվար է պատկերացնել:

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿ 2

ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

2.1. Գիտական ակտիվություն

(Վերլուծելով առկա քանակական տվյալները (հոդվածներ, մենագրություններ, ձեռնարկներ, գիտաժողովներ, դրամաշնորհներ և այլն)՝ գնահատե՛ք ֆակուլտետում ակադեմիական համակազմի գիտական ակտիվությունը հաշվետու ժամանակահատվածում: Որքանո՞վ է ակադեմիական համակազմի գիտահետազոտական ակտիվությունը համահունչ ֆակուլտետի կարիքների հետ, ի՞նչ հավելյալ գործողությունների կարիք կա):

Հաշվետու ժամանակաշրջանում ֆակուլտետի ակադեմիական համակազմի կողմից արձանագրվել է հետևյալ գիտական ակտիվությունը.

ա. Հայոց լեզվի և գրականության ամբիոն-**10 հոդված** (Վ. Ավագյան, Ս. Հովհաննիսյան, Մ. Սարուխանյան), մասնակցություն համաժողովների՝ 2-ը հանրապետական, 6-ը ԱՊՀ միջազգային (Մոսկվայում, Մինսկում,Նիժնի Նովգորոդում և Սոչիում-Հովհաննիսյան Սիրանուշ)

բ. Օտար լեզուների ամբիոն-**18 հոդված** (Ա. Չուբարյան, Գ. Մուրադյան, **Ռ. Հարությունյան**, **Ս. Մինասյան,** Ա. Կարապետյան, Գ. Մադոյան, Ք. Դադյան), որոնցից 14-ը համահեղինակությամբ, 2 ուսումնական, 1 ուսումնամեթոդական ձեռնարկ, մասնակցություն 1 հանրապետական, 5 միջազգային գիտաժողովների (Ա. Չուբարյան, Գ, Մուրադյան Ս. Մինասյան)

գ. Մանկավարժության և հոգեբանության ամբիոն-**21 հոդված** (Ռ. Աղուզումցյան, Ս. Պողոսյան, Վ. Կարապետյան, Ա. Լոքյան, Մ. Մանուկյան, **Լ. Հարությունյան**), որոնցից 12-ը համահեղինակությամբ, միջազգային 8 միջազգային գիտաժողովի մասնակցություն (Ռ. Աղուզումցյան, Վ. Կարապետյան, Մ. Մանուկյան), 3 ուսումնական ձեռնարկ (Մ. Բարսեղյան), 1 ուսումնամեթոդական ձեռնարկ (Վ. Կարապետյան)

դ. Հայոց պատմության և հասարակագիտության ամբիոն-**23 հոդված** (Լ. Հովհաննիսյան, Վ. **Ալեքսանյան**, Ա. Գրիգորյան, **Ն. Գրիգորյան, Վ. Պողոսյան**, Արթուր Ղազարյան, Ն. Մինասյան, Ա. Մկրտումյան, Կ. Գասպարյան), 12 գիտաժողով, որոնցից 6-ը միջազգային:

Հաշվետու ժամանակահատվածում ֆակուլտետում իրականացվել է **ներքին դրամաշնորհային ծրագիր** հետևյալ թեմայով՝ «Իջևանի հասարակական-մշակութային կյանքը առօրեականության համատեքստում 1920-1970-ական թվականներին»՝ թեմայի կատարման համար հատկացվող 7 ամիսների ընթացքում, որի կատարման ընթացքի մասին հաղորդումներ են տրվել ֆակուլտետի գիտական խորհրդի նիստերում (Արձ. N 4, 30.11.2022, Արձ. N7, 25.03.2023):

Ներկայացված ցուցանիշները կարելի է դրական գնահատել, միայն այն դիտարկումն անենք, որ **հիմնականում ակտիվություն են ցուցաբերել համակազմի համատեղությամբ աշխատող դասախոսները:** Բնականաբար, համակազմի գիտահետազոտական ակտիվությունը նպաստում է ֆակուլտետի գիտական և ուսումնակրթական կարիքների բարելավմանը: Գիտահետազոտական ակտիվությունը խթանելուն են ուղղված մասնաճյուղի գիտքարտուղարի կողմից տարբեր գիտաժողովների վերաբերյալ՝ թե՛ հանրապետական և թե՛ միջազգային, պարբերաբար արվող իրազեկումները, ԵՊՀ ԻՄ-ի կողմից մշակված «Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի աշխատողներին աշխատանքի որոշ տեսակների կատարման համար վճարվող **լրավճարների** հաշվարկման և վճարման կարգը» (հաստատված 28.10.2019թ., նոր խմբագրություն՝ 18.02.2023թ.):

2.2. Գիտահետազոտական լաբորատորիաներ և մասնակցություն ֆինանսավորվող գիտական նախագծերին

(Ինչպե՞ս կգնահատեք ֆակուլտետի բազային և գիտահետազոտական այլ բնույթի լաբորատորիաների գործունեությունն ու մասնակցությունը ֆինանսավորվող գիտական նախագծերին (դրամաշնորհային, նպատակային, տնտեսապայմանագրային, միջազգային և այլ բնույթի): Որո՞նք են հիմնական ձեռքբերումները, դժվարություններն ու առաջնահերթությունները):

Ֆակուլտետում բազային և գիտահետազոտական այլ բնույթի լաբորատորիաներ չեն գործում:

2.3. Գիտակրթական համագործակցություն

(Հաշվետու ժամանակաշրջանում գիտակրթական համագործակցության ի՞նչ նոր դեպքեր են արձանագրվել, ի՞նչ ազդեցություն ունեն դրանք ֆակուլտետի ընդհանուր գործունեության վրա, ի՞նչ հնարավորություններ են դրանք տալիս միջնաժամկետ ու երկարաժամկետ հեռանկարում):

1. Հաշվետու ժամանակաշրջանում 2023թ.-ի հունվարի 18-ին **Գյումրիի Ռուսական տան** հետ համատեղ գիտակրթական համագործակցության շուրջ մասնաճյուղում տնօրենության ղեկավարությամբ առցանց **հանդիպում էր կազմակերպվել Ղրիմի դաշնային համալսարանի** հետ, որին մասնակցում էին ֆակուլտետի Օտար լեզուների ամբիոնի պրոֆեսոր Սվետլանա Մինասյանը, նույն ամբիոնի դոցենտ, Ռուսաստանի գիտության և մշակույթի կենտրոնի Իջևանի մասնաճյուղի ղեկավար Մարատ Զուրաբյանը: Առցանց հանդիպման ընթացքում կողմերը պայմանավորվածություն էին ձեռք բերել համագործակցելու կրթական նախագծերի մշակման, պրոֆեսորադասախոսական կազմի ակադեմիական փոխանակումների կազմակերպման, համատեղ հոդվածների, հրապարակումների, ձեռնարկների հրապարակման, բաց դասերի, սեմինարների, գիտաժողովների կազմակերպման, ուսանողների, մասնագետների փոխանակման և այլ հարցերով: http://ijevan.ysu.am/20-01-2023/ Առաջին համգործակցությունն ապրիլի կայացած

«Սոցիալ-մանկավարժական նորարարությունները կրթության մեջ» միջազգային գիտագործնական 2-րդ համաժողովի կազմակերպչական աշխատանքներում Ղրիմի դաշնային համալսարանի աշխատակիցների ներգրավումն էր:

2. Ֆրանկոֆոնիայի և քույր քաղաքների բարեկամության շրջանակներում 2023թ.-ի մարտի 28-ից Վալանսի քաղաքապետարանի և Հայկական բարեգործական ընդհանուր միության (ՀԲԸՄ) հրավերով մասնաճյուղի «Ֆրանսերեն լեզու և գրականություն» կրթական ծրագրի 4-րդ և 3-րդ կուրսերի 5 ուսանողուհիներ դասախոս Անահիտ Հովհաննիսյանի ուղեկցությամբ երեքշաբաթյա **այցով մեկնեցին Վալանս**՝ կատարելագործելու մասնագիտական գիտելիքները և բանավոր խոսքը՝ մասնակցելով դասընթացների և հանդիպումների, կատարելով ճանաչողական այցեր: Մարտի 28-ին մասնաճյուղի պատվիրակությունն այցելել է Գրենոբլի համալսարանի Վալանսի մասնաճյուղ, ծանոթացել համալսարանի կառուցվածքին, կրթական ծրագրերին և մասնագիտություններին, մարտի 29-ից մինչև ապրիլի 5-ը հաճախել են Կամիյ Վեղնե պետական լիցեյ, որը ներառում է նաև քոլեջ, մասնակցել տարբեր դասընթացների: Մեր ուսանողները Վալանսում հյուրընկալվել են նաև ՀԲԸՄ-ի մասնաճյուղում, թերթի խմբագրատանը, ռադիոտանը, կատարել են ճանաչողական այցեր: (http://ijevan.ysu.am/05-04-2023-2/)

3. 2022թ.-ի հունվարի 13-ին ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի և ԱՄՆ-ի **Այովայի համալսարանի** միջև առցանց կնքված համագործակցության հուշագրով պայմանավորված (http://ijevan.ysu.am/14-01-2022/)՝ նույն թվականի մայիսին մասնաճյուղ այցելեց Այովայի համալսարանից մարկետոլոգ Ջոն Քոելեն՝ համալսարանի ղեկավարությանը, ռեսուրսներին, հնարավորություններին, ֆակուլտետներին, մասնաճյուղում գործող կենտրոններին, ենթակառուցվածքներին, բուհի աշխատանքներին ծանոթանալու նպատակով (http://ijevan.ysu.am/22-06-2022/):

4. 2023թ.-ի հուլիսի 1-ից մինչև օգոստոսի 1-ը Իջևանի մասնաճյուղում «Project Ijevan Valley EdTech Summer School-2023» ծրագրի շրջանակներում **Այովայի համալսարանի** ուսանողների համար իրականացվեց **ամառային դպրոց**՝ «Բազմամշակութային աշխարհում ռուսաց լեզվի և մշակույթի ուսանողների կրթության արդյունավետության բարձրացում Հայաստանում»

խորագրով: Ծրագրին մասնակցում էին Այովայի համալսարանի 9 ուսանողներ: Ծրագիրը համակարգում էին ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի Օտար լեզուների ամբիոնի պրոֆեսոր Սվետլանա Մինասյանը և Այովայի համալսարանի Համաշխարհային լեզուների, գրականության և մշակույթների ռուսական ծրագրի տնօրեն Իրինա Կոստինան: Ծրագրի շրջանակներում ամերիկացի ուսանողների հետ դասընթացներ վարեցին Օտար լեզուների ամբիոնի դասախոսներ Ս. Մինասյանը, Ա. Այդինյանը, Ս. Եղիազարյանը, Ե. Շուվանան, Ռ. Հարությունյանը: Ծրագրի հիմնական նպատակն էր բացահայտել և զարգացնել ուսանողների ստեղծագործական կարողությունները ռուսաց լեզվի և գրականության, մշակույթի, նախագծային և գիտահետազոտական գործունեության մեջ, բարելավել ռուսերենի գործնական կիրառումը, հնարավորություն ընձեռել ծանոթանալու ռուսական և հայկական մշակույթներին, ներկայացնելու ամերիկյան գրականությունը, մշակույթը և պատմությունը մասնաճյուղի ուսանողներին: (http://ijevan.ysu.am/21-07-23/)

Նման համագործակցությունները ֆակուլտետի ընդհանուր գործունեության վրա դրական ազդեցություն ունեն այն առումով, որ աշխուժություն, նորություն են բերում թե՛ ուսանողների և թե՛ դասախոսական անձնակազմի համար: Մասնավորապես, ուսանողական գիտահետազոտական աշխատանքների նկատմամբ մեծացել է հետաքրքրությունը «Ռուսաց լեզու և գրականություն» կրթական ծրագրով սովորող III կուրսի որոշ ուսանողների շրջանում: Օրինակ՝ սթ. նոյեմբերի 18-ին Ուրալի պետական համալսարանում մեկնարկած «Ռուսական տարածաշրջանները փոփոխման կենտրոնում» թեմայով **միջազգային 18-րդ համաժողովում** նշված կուրսի ուսանողուհիներ Նազելի Եսայանը և Մարիամ Դարբինյանն արժանացան 1-ին կարգի դիպլոմների՝ իրենց կարդացած զեկուցումների համար: (http://ijevan.ysu.am/category/news/)

Համագործակցությունները լավ հնարավորություն են ուսանողների և պրոֆեսորադասախոսական անձնակազմի շարժունության, փոխանակման ծրագրեր իրականացնելու համար:

2.4. Գիտական միջոցառումների կազմակերպում և մասնակցություն

(Հաշվետու ժամանակաշրջանում ֆակուլտետի կողմից ի՞նչ գիտական միջոցառումներ են կազմակերպվել (գիտաժողով, սեմինար, զեկուցումներ և այլն), և ի՞նչ միջոցառումների են մասնակցել ֆակուլտետի աշխատակիցները: Ի՞նչ ազդեցություն ունեն դրանք ֆակուլտետի ընդհանուր գործունեության վրա, ի՞նչ հնարավորություններ են դրանք ստեղծել միջնաժամկետ ու երկարաժամկետ հեռանկարում):

Ֆակուլտետի Հայոց լեզվի և գրականության ամբիոնի վարիչ Վաչագան Ավագյանի նախաձեռնությամբ Երևանի պետական համալսարանի՝ ակադեմիկոս Հրանտ Թամրազյանի անվան Հայ գրականության պատմության ամբիոնը, ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի Հայոց լեզվի և գրականության ամբիոնը և Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանը համատեղ կազմակերպել են **հայագիտական միջազգային գիտաժողով**՝ նվիրված 20-րդ դարի գրական, հասարակական ու մշակութային նշանավոր գործիչ Արշակ Չոպանյանի ծննդյան 150-

ամյակին: Գիտաժողովի նիստերը տեղի են ունեցել Գրականության և արվեստի թանգարանում և ԵՊՀ Իջևանի մասնաճյուղում՝ **2022թ. հոկտեմբերի 7-ին և 8-ին**: Հանրապետության և արտերկրի տարբեր գիտակրթական կենտրոններից, ԵՊՀ Իջևանի մասնաճյուղից մասնակիցների զեկուցումները վերաբերում էին հայ մշակույթի երախտավոր Արշակ Չոպանյանի ազգային-հասարակական գործունեությանը, գրական գործերին, թարգմանչական ածխատանքներին, բանասիրական ու գրաքննադատական ուսումնասիրություններին: (http://ijevan.ysu.am/11-10-2022/)

2023թ.-ի ապրիլի 15-16-ին ԵՊՀ Իջևանի մասնաճյուղն իրականացրեց «Սոցիալ-մանկավարժական նորարարությունները կրթության մեջ» խորագրով երիտասարդ գիտնականների **միջազգային 2-րդ համաժողովը**, որին մասնակցեցին բակալավրիատի և մագիստրատուրայի տարբեր մասնագիտությունների ուսանողներ, երիտասարդ դասախոսներ և գիտնականներ՝ 62 համալսարանի 215 ներկայացուցիչներ 16 երկրից (Հայաստան, Ռուսաստան, Բելառուս, Վրաստան, Ղազախստան, Ղրղզստան, Տաջիկստան, Ուզբեկստան, Թաթարստան, Ուկրաինա, Լեհաստան, Ֆինլանդիա, Իրան, Իրաք, Ալժիր, Չինաստան): Համաժողովի նպատակն էր ուսանողական հետազոտությունների խթանումը, նրանց ստեղծագործական ներուժի բացահայտումը, ուսանողների և դասախոսների ներբուհական և միջբուհական համագործակցության զարգացումը, երիտասարդների ուծադրության կենտրոնացումը ժամանակակից մանկավարժական հետազոտությունների կարևորության վրա: Համաժողովի նախագծի հեղինակն էր ԲԳՌԱ պրոֆեսոր, ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի Օտար լեզուների ամբիոնի պրոֆեսոր, մ.գ.թ. Սվետլանա Մինասյանը: Համաժողովի կազմկոմիտեում ընդգրկված էին 13 պրոֆեսորներ՝ տարբեր երկրներից: Միջազգային համաժողովում ներկայացված աշխատանքները վերաբերում էին մասնագիտական-մանկավարժական կրթության զարգացման ներկա միտումներին, նորարարական սկզբունքներին ու մոտեցումներին, կրթության մեջ տեղեկատվական տեխնոլոգիաների, լեզվի, գրականության և մշակույթի դերին, լեզուների և մշակույթների դասավանդման մեթոդիկաներին, կրթական ծրագրերի նախագծմանը, միջմշակութային հաղորդակցությանը և թարգմանությանը: (http://ijevan.ysu.am/18-04-2023-2/)

Ֆակուլտետում հաշվետու ժամանակահատվածում՝ 2022թ. դեկտեմբերի 2-ին, իրականացել է ուսանողական սեմինար՝ «Ուսանողների գիտահետազոտական աշխատանքի հիմնական սկզբունքները» թեմայով, որին մասնակցում էին «Ռուսաց լեզու և գրականություն» կրթական ծրագրի II-IV կուրսերի ուսանողները: Այն վարում էր Օտար լեզուների ամբիոնի պրոֆեսոր Սվետլանա Մինասյանը: Նա նշեց, որ հումանիտար ուղղվածությամբ ուսանողների գիտահետազոտական գործունեության կազմակերպման ընթացքում որոշակի դժվարություն է առաջանում նրանց կողմից ուսումնամեթոդական գրականության ճիշտ վերլուծության, ավանդական մեթոդների վրա հիմնված տեսական մասի կառուցման, պրակտիկ մանկավարժների փորձի ուսումնասիրության, փորձարարական-մեթոդական ցուցումների մշակման ժամանակ: Ուստի սեմինարավարն անդրադարձավ կրթական հետազոտությունների հիմնական ուղություններին և նշանակությանը. ինչպես ճիշտ ձևակերպել թեման, նպատակները, խնդիրները, հետազոտության օբյեկտը և առարկան, վարկածը, ինչպես որոշել

աշխատանքի մեթոդները, ինչպես անցկացնել փորձ: (http://ijevan.ysu.am/03-12-2022/)

Գիտական սեմինարի կազմակերպումը կարևոր դեր ունի գիտահետազոտական աշխատանքներում ուսանողներին ներգրավելու, նրանց մեջ նոր գիտելիքներ, կարողություններ ու հմտություններ, ստեղծագործական և վերլուծական մտածողություն ձևավորելու առումով:

Ֆակուլտետում և մասնաճյուղում կազմակերպված գիտական միջոցառումները դրական ազդեցություն են ունենում ֆակուլտետի գործունեության վրա՝ ստեղծելով միջբուհական շփումներ և համագործակցային կապեր, խթանում են հետազոտական կարողությունների զարգացմանը, աշխուժացնում են գիտակրթական գործունեությունը, շարունակականության հեռանկար են բերում:

ՌԱԶԱՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿ 3.

ՀԱՆՐԱՅԻՆ ՆԵՐԳՐԱՎՈՒՄ

3.1. Շուկայի ուսումնասիրում և պահանջարկին համապատասխանեցում

(Հաշվետու ժամանակաշրջանում ի՞նչ քայլեր են իրականացվել ֆակուլտետի կողմից ոլորտային գործատուների, ձեռնարկությունների և առհասարակ շուկայի կարիքներին համապատասխանելու տեսանկյունից: Որքանո՞վ է ֆակուլտետն ինտեգրված ոլորտային շուկային: Ի՞նչ գործողություններ են իրականացվել ֆակուլտետի կողմից ոլորտային գործընկերների հետ համագործակցության ամրապնդման ուղղությամբ (քննարկումներ, հանդիպումներ, գիտաժողովներ, ցուցահանդեսներ, խորհրդակցություններ և այլ): Որքանո՞վ են ֆակուլտետի կողմից մատուցվող կրթական ծառայությունները համապատասխանում շուկայի պահանջներին, ի՞նչն է վկայում համապատասխանության կամ անհամապատասխանության մասին):

Հումանիտար գիտությունների ֆակուլտետում իրականացվում է բակալավրի յոթ կրթական ծրագիր՝ «Հայոց լեզու և գրականություն», «Պատմություն», «Հոգեբանություն», «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա», «Անգլերեն լեզու և գրականություն», «Ֆրանսերեն լեզու և գրականություն», «Ռուսաց լեզու և գրականություն», և մեկ մագիստրոսական ծրագիր՝ «Դպրոցական մանկավարժություն և մեթոդիկա»: Նշենք, որ «Ընդհանուր մանկավարժություն և մեթոդիկա» մասնագիտության «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» և «Մասնագիտական մանկավարժություն» մասնագիտացման «Ռուսաց լեզու և գրականություն» կրթական ծրագրերը ներդրվել էին համապատասխանաբար 2017-2018 և 2019-2020 ուստարիներից՝ նկատի ունենալով մարզում տարրական դպրոցի ուսուցիչների և ռուսաց լեզվի մանկավարժների պակասը: Ընդ որում, «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» կրթական ծրագիրն իրականացվում է նաև հեռակա ուսուցմամբ: Սակայն վերջին երկու տարիներին նկատվում է նշված մասնագիտության դիմորդների թվի կտրուկ անկում, ինչը վկայում է շուկայում պահանջարկի փոփոխության

մասին: Ինչ վերաբերում է «Ռուսաց լեզու և գրականություն» կրթական ծրագրերին, ապա ընդունելության առաջին տարվա ցուցանիշը երկրորդ տարում (2020թ.) կրկնապատկվեց, երրորդ տարում 2020թ.-ի ցուցանիշը կրկնապատկվեց: Ընթացիկ 2023թ.-ին դիմորդների թիվը մի փոքր անկում է ունեցել: Շուկայի ուսումնասիրությամբ և կարիքներով էր թելադրված նաև «Հոգեբանություն» կրթական ծրագրի վերագործարկումը, որի նկատմամբ հետաքրքրություն կա դիմորդների շրջանում: Քանի որ «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» և «Ռուսաց լեզու և գրականություն» կրթական ծրագրերից բացի **մյուս կրթական ծրագրերը մանկավարժական ուղղվածություն չունեն,** ուստի բավական ակտուալ է մնում «Դպրոցական մանկավարժություն և մեթոդիկա» մագիստրոսական կրթական ծրագիրը, որին դիմում են ոչ միայն մեր ֆակուլտետի մյուս կրթական ծրագրերի, այլև մասնաճյուղի մյուս ֆակուլտետների տարբեր կրթական ծրագրերի, ինչպես նաև հանրապետության այլ բուհերի շրջանավարտներ՝ շարունակական կրթության և մանկավարժի որակավորում ստանալու համար: Սա պայմանավորված է այն հանգամանքով, որ **մարզում մեծ չէ աշխատաշուկան հատկապես հումանիտար ուղղվածության կրթական ծրագրերի շրջանավարտների համար**, բացի դրանից՝ **մարզում կա որոշակի մասնագետ-ուսուցիչների կարիք**: Ընթացիկ 2023 ուսումնական տարում մագիստրատուրա ընդունված դիմորդների թիվը 19 է: Նշենք, որ նախորդ՝ 2022 ուսումնական տարում մագիստրատուրա էր ընդունվել 14 դիմորդ:

Ֆակուլտետի հիմնական ոլորտային գործընկերները Իջևանի տարածաշրջանի դպրոցներն են, «Հույսի կամուրջ» հասարակական կազմակերպությունը, Տավուշի մարզային գրադարանը, Ամերիկյան գրադարան-դասընթացների կենտրոնը, Իջևանի պատմաերկրագիտական թանգարանը, որոնց հետ համագործակցում ենք ինչպես պրակտիկաների շրջանակներում, այնպես էլ տարբեր միջոցառումների:

3.2. Շրջանավարտներ

(Գնահատե՛ք հաշվետու ժամանակաշրջանում շրջանավարտների հետ կապերի ամրապնդմանն ուղղված, ֆակուլտետի կողմից իրականացված գործողությունները: Ի՞նչ արդյունքներ են արձանագրվել, ի՞նչ հնարավորություններ են ստեղծվել շրջանավարտների հետ համագործակցության արդյունքում):

Հաշվետու ժամանակաշրջանում շրջանավարտների հետ կապերի ամրապնդմանն ուղղված կարևոր իրողություն պետք է համարել այն, որ ֆակուլտետի 6 շրջանավարտներ դարձան մեր աշխատակիցները՝ ընդգրկվելով Օտար լեզուների և Մանկավարժության և հոգեբանության ամբիոնների աշխատանքներում:

2023թ. հոկտեմբերի 25-ին անգլերենի ռեսուրս կենտրոնում կազմակերպվեց

հավաստագրերի հանձնում 2022-23 **ուստարում AMVN հասարակական կազմակերպության** կողմից իրականացված ռուսերենի և անգլերենի դասընթացների մասնակիցներին, այդ թվում նաև՝ «Անգլերեն լեզու և գրականություն» կրթական ծրագրի 2022-23 ուստարվա շրջանավարտ **Լիդա Առաքելյանին**, որը ներկայացրեց իր համագործակցությունը նշված կազմակերպության հետ, իր կամավոր մասնակցությունը **Անի Մանուկյանի** «Հաղթեցին ապրելով» գրքի թարգմանությանը: Լիդան նշեց, որ կատարած աշխատանքն օգնել է իրեն բացահայտելու սեփական ներուժը, ստացած գիտելիքները կիրառել գործնականում, հասկանալ թարգմանչական գործընթացի բնույթն ու նրբությունները: Նա իր օրինակով հորդորեց ուսանողներին բաց չթողնել այլընտրանքային կրթության հնարավորությունը՝ արժևորելով ու կարևորելով դրա անհրաժեշտությունը ֆորմալ կրթությանը զուգընթաց:

Հաջորդիվ (կամ հետամուտ) քայլեր

Հաշվի առնելով ներկայացվածը, ստացված արդյունքները և բարելավման կարիք ունեցող ուղղությունները՝ նկարագրե՛ք այն քայլերն ու առաջնահերթությունները, որ նախատեսում եք ձեռնարկել հաջորդ ուսումնական տարվա ընթացքում: Միևնույն ժամանակ անդրադարձե՛ք և մեկնաբանե՛ք, թե հատկապես որ ձեռքբերումների վրա է հնարավոր կառուցել ստորաբաժանման զարգացմանն ուղղված հաջորդ քայլերը:

Հաշվի առնելով ներկայացված արդյունքները՝ հաջորդ ուսումնական տարում անհրաժեշտ է.

ա. Առավել ինտենսիվ աշխատանք տանել տարածաշրջանի դպրոցների հետ՝ հստակ ժամանակացույցով:

բ. Դպրոցներում ֆակուլտետի մասնագիտությունները ներկայացնել ակնարկային հետաքրքրաշարժ դասախոսություններով:

գ. Կրթական ծրագրերի լավագույն շրջանավարտներին ուղղորդել շարունակական կրթության և նրանցով համալրել տեղացի դասախոսների համակազմը:

դ. Ուղղորդվել շահակիցների կողմից ներկայացված աշխատաշուկայի պահանջարկով և մտածել ֆակուլտետի կողմից առաջարկվող մասնագիտությունների ցանկում փոփոխություն անելու վերաբերյալ՝ ուսումնասիրելով նյութատեխնիկական, բազային խնդիրները:

ե. Հայագիտական կրթական ծրագրերն («Հայոց լեզու և գրականություն», «Պատմություն») ուժեղացնելու և հետաքրքրություն մտցնելու համար առաջարկել ամառային դպրոցի գաղափարը:

զ. Նպաստել գիտակրթական միջազգային համագործակցությունների շարունակական

դառնալուն:

ՀԱՎԵԼՎԱԾ

«Երևանի պետական համալսարան»
հիմնադրամի ռեկտորի
2023 թ. հոկտեմբերի ____ -ի
թիվ _____ հրամանի

ԵՊՀ ԻՄ ֆակուլտետի դեկանի հաշվետվություն

Ֆակուլտետ	Տնտեսագիտության
Դեկան	Ալեքսան Շամիլի Մարգարյան
Ժամանակահատված	01.09.22թ.-29.12.23թ
Ներկայացման ամսաթիվ	18.11.2023թ.

Երևան 2023

Մաս 1. Ֆակուլտետի գործողությունների պլանի կատարողական

(750 - 1500 բառի շրջանակում անդրադարձե՛ք ֆակուլտետի կողմից մշակված գործողությունների պլանին՝ ներկայացնելով գործողությունների մասով իրականացված աշխատանքների արդյունքները և պատասխանելով ստորև ներկայացված հարցերին:

1. Որո՞նք են գործողությունների իրականացման արդյունքում արձանագրված հիմնական հաջողությունները:
2. Ի՞նչ գործոններ են պայմանավորել նշված հաջողությունների գրանցումը:
3. Ինչպե՞ս եք պատրաստվում նշված հաջողությունները կամ ձեռքբերումները օգտագործել ի նպաստ ֆակուլտետի գործունեության արդյունավետության հետագա բարելավմանը:
4. Որո՞նք են գործողությունների իրականացման արդյունքում արձանագրված հիմնական անհաջողությունները կամ դժվարությունները:
5. Որո՞նք էին նշված անհաջողությունների կամ դժվարությունների առաջացման հիմնական պատճառները:
6. Ի՞նչ եք պատրաստվում նախաձեռնել նշված անհաջողությունների կամ դժվարությունների հաղթահարման ուղղությամբ և ի՞նչ ժամկետրում:

1)Ձեռքբերումներ.

- դիմորդների և ուսանողների թվաքանակի աճ,
- ուսանողների առաջադիմության կայուն ցուցանիշներ,
- մրցունակ կրթական ծրագրեր ,
- դասավանդման որակի բարելավում,
- էլեկտրոնային համակարգերի ներդրում,
- ուսանողների հետազոտական կարողությունների բարելավում,
- կիրառական նշանակության ավարտական աշխատանքներ,
- մրցունակ շրջանավարտներ աշխատաշուկայում:

2)Նշված հաջողությունները պայմանավորել են.

- որակյալ պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ անձնակազմ,
- ուսումնագիտական աշխատանքների արդյունավետ կազմակերպում,
- ակադեմիական ազնվություն և արդարության սկզբունքների պահպանում,
- հանրային ներգրավվածության բարձր մակարդակ:

3)Արդյունավետության հետագա բարելավման համար առաջարկվում է.

- շարունակել պատասխանատու աշխատել վերոնշյալ ուղղություններով,
- մշակել կրթական կարիքների վերհանման նոր մեխանիզմներ,
- գովազդել հաջողություններն ու ձեռքբերումներն ի նպաստ ֆակուլտետի գործունեության հետագա բարելավման համար,
- կիրառել ձեռք բերված հմտությունները և կարողությունները գործնականում:

4) Հիմնական անհաջողություններն են.

- «Զբոսաշրջություն» կրթական ծրագրի դիմորդ/ընդունվածների ցածր ցուցանիշը.
- ժամանակակից տեխնոլոգիաների կիրառման խնդիրներ,
- հեռակա ուսուցման համակարգի ընդունելության ցածր ցուցանիշ,
- հեռակա ուսուցման համակարգի ուսանողների առաջադիմության ցածր ցուցանիշ,
- անբավարար լսարանային ֆոնդ,

- լսարանների ոչ ստանդարտ լինելը:

5) Անհաջողությունների հիմնական պատճառները.

- դիմորդների անբավարար պատրաստվածության մակարդակը
- ավագ սերնդի դասախոսների ժամանակակից տեխնիկական միջոցներին չտիրապետելը,
- հեռակա ուսուցման համակարգի ուսանողների (չորրորդ, հինգերորդ կուրսերի) բացակայությունների բարձր ցուցանիշը և մոտիվացիայի բացակայությունը:

6) անհաջողությունների հաղթահարման ուղղությունները

- կազմակերպել նախապատրաստական դասընթացներ ընդունելության քննությունները հաղթահարելու նպատակով,
- կցել երիտասարդ մագիստրանտներին կամ աշխատակիցներին ավագ սերնդի դասախոսներին էլեկտրոնային համակարգից օգտվելու նպատակով(23-24թթ.առաջին կիսամյակ)
- ներդնել խրախուսման մեխանիզմներ հեռակա ուսուցման ուսանողների առաջադիմությունը խթանելու համար:

2. Ֆակուլտետի գործունեության վերաբերյալ դեկանի հաշվետվությունը

Ամփոփելով նախորդ ուսումնական տարին և յուրաքանչյուր հարցին պատասխանելով մինչև 750 բառի սահմանում՝ **ներկայացրե՛ք Ձեր՝ որպես դեկանի** գործունեությունը՝ ըստ ԵՊՀ ԻՄ զարգացման 2022-2026 ռազմավարական ծրագրի երեք նպատակների: Հարցերին պատասխանելիս ներառեք տրամադրված տվյալների հիման վրա իրականացված բովանդակային վերլուծություն:

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿ 1

ԲԱՐՁՐՈՐԱԿ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

1.1.1. Ընդունելություն

(Անդրադառնալով ֆակուլտետում հաշվետու ժամանակաշրջանում կրթական երկու մակարդակներում ուսանողների քանակական տվյալներին՝ ներկայացրե՛ք ընդհանուր պատկերն ու միտումները: Ի՞նչ եզրակացություններ կարելի է անել ընդունելության, կրթական մի մակարդակից մյուսն անցնելու, առաջին և երկրորդ հայտով ընդունելության, վճարովի և անվճար ընդունելության տվյալների, միջազգային ուսանողների ներգրավման վերլուծության արդյունքում: Որո՞նք պիտի լինեն ֆակուլտետի հետագա քայլերը իրավիճակի բարելավման և նոր արդյունքներ գրանցելու համար):

Հիմնվելով հաշվետու ժամանակաշրջանում բակալավրի առկա ուսուցման համակարգում ընդունելության քանակական տվյալների հիման վրա կարելի է ասել, որ դիմորդների թիվը մոտ են պլանային տեղերին, սակայն ընդունվածների թիվ/պլանային տեղերի թիվ հարաբերակցությունը բարելավման կարիք ունի (ֆինանսներ(ըստ ոլորտի) կրթական ծրագրի՝2022թ.35/49,2023թ՝32/40, զբոսաշրջություն՝2022թ.՝15/28,2023թ.՝16/25), իսկ հեռակա ուսուցման համակարգում՝2022թ.՝12/50, 7/35,2023թ.՝ 10/40,11/25): Նշենք նաև, որ շարունակական կրթության և այլ բուհերից տեղափոխված ուսանողների քանակը գոհացուցիչ են /քոլեջների տեղափոխված՝ 2022թ.՝ 10, 2023թ.՝ 6, այլ բուհերից՝2022թ.՝2, 2023թ.՝5 /, քանի որ հեռակա ուսուցման երկրորդ և երրորդ կուրսերում լրացված են լիցենզավորված տեղերի քանակը:
Սկսած 2022թ.-ից ընդունելության ցածր ցուցանիշը, հատկապես հեռակա ուսուցման համակարգում, պայմանավորված է ԳԹԿ –ից կողմից կազմակերպվող ընդունելության քննություններով: Իրավիճակի հետագա բարելավման նպատակով մասնաճյուղը պլանավորում է դիմորդների համար կազմակերպել արագացված կուրսեր՝ ընդունելության քննություններին նախապատրաստվելու նպատակով:

1.1.2. Դիմորդների մասնագիտական կողմնորոշում

(Ի՞նչ աշխատանք է իրականացվել դիմորդների շրջանում մասնագիտական կողմնորոշման ուղղությամբ, ի՞նչ ազդեցություն են ունեցել այդ աշխատանքները: Որքանո՞վ են դրանք նպաստել դիմորդների մասնագիտական կողմնորոշման և ֆակուլտետում ընդունելության վրա: Արդյո՞ք կա դիմորդների հետ տարվող աշխատանքների վերանայման անհրաժեշտություն: Եթե կա, ապա խնդրում ենք մանրամասնել):

ՈՒՄՎ –ի հետ համատեղ իրականացվել են այցելություններ մարզի դպրոցներ(թվով 10), որտեղ դասախոսների(թվով 4) կողմից ներկայացվել են ԿԲ-ի Դիլիջանի ուսումնահետազոտական կենտրոնի և տարածաշրջանի զբոսաշրջային կազմակերպությունների հետ համագործակցությունը: Իրականացվել է դիմորդների այց ֆակուլտետ (2022թ.-ին՝երկու այց, 2023թ.-ին մեկ այց), աշակերտները մասնակցել են դասապրոցեսներին և ծանոթացել են ֆակուլտետի կրթական ծրագրերին:
Դիմորդների մասնագիտական կողմնորոշման և ֆակուլտետում ընդունելության վերանայման անհրաժեշտության համար առաջարկվում է դիմորդների շրջանում կազմակերպել բաց դռների օր, իրականացնել խորհրդատվություններ և հարցումներ,ինչպես նաև մասնակցել ուսանողների հետազոտական աշխատանքների ներկայացմանը:

1.1.3. Կրթական ծրագրեր

(Ի՞նչ եզրակացություններ կարելի է անել ընդունելություն-կրթական ծրագրեր հարաբերակցության վերլուծության հիման վրա: Ի՞նչ գործողություններ են անհրաժեշտ իրավիճակի բարելավման համար: Ի՞նչ աշխատանք է իրականացվել կրթական ծրագրերի որակի գնահատման, դրա բարելավման ուղղությամբ):

2018-2019 ուս. տարվանից «Ֆինանսներ(ըստ ոլորտի)» կրթական ծրագիրը ենթարկվել է արմատական փոփոխության՝ հաշվի առնելով ԿԲ-ի առաջարկները համապատասխան աշխատաշուկայի արդի պահանջներին:Այն ներկայացնելով դիմորդներին, կտրուկ ավելացել է նրանց թիվը և պահպանվում է մինչև հաշվետու ժամանակաշրջանը:
Կրթական ծրագրերի բարելավման ուղղությամբ հաշվետու ժամանակաշրջանում կատարվել են հետևյալ գործողությունները.

- «Ֆինանսներ(ըստ ոլորտի)» կրթական ծրագիրի պարտադիր մասնագիտական կառուցամասից երեք դասընթաց տեղափոխվել է կամընտրական մասնագիտական կառուցամաս, որի արդյունքում չեն կրճատվել մասնագիտական դասընթացների ժամաքանակը ,
- իրականացվել է «Զբոսաշրջություն» կրթական ծրագրի մոնիթորինգ,
- իրականացվել են հարցումներ շրջանավարտների և արտաքին շահակիցների շրջանում,
- կրթական ծրագրերի հետագա բարելավման յուրաքանչյուր տարվա դեկտեմբերին ձևավորվում է աշխատանքային խումբ, որը իրականացնում է հարցումներ ուսանողների, գործատուների, դասախոսների շրջանում, որի արդյունքները հաշվի է առնվում ԿԾ-ի վերջնարդյունքերում և մոդուլներում,
- իրականացվել է դասավանդվող դասընթացների կիսամյակային բաշխվածության և բովանդակությունների վերանայում՝ թեմաների կրկնությունները բացառելու նպատակով,
- 2024-2025 ուս. տարում նախատեսվում է իրականացնել«Ֆինանսներ(ըստ ոլորտի)» կրթական ծրագրի մոնիթորիգ :

1.1.4. Ուսման առաջադիմություն

(Գնահատե՛ք ուսանողների ուսման առաջադիմության հիմնական միտումները հաշվետու ժամանակահատվածի ընթացքում: Ինչո՞վ են դրանք պայմանավորված, և ի՞նչ քայլեր են անհրաժեշտ իրավիճակի բարելավման համար):

Հաշվետու ժամանակահատվածում առկա և հեռակա ուսուցման ուսանողների առաջադիմությունը էականորեն չի փոխվել(2022-2023 ուս. տարի առկա ուսուցման ֆինանսներ մասնագիտության առաջին կիսամյակ՝ 60%, երկրորդ կիսամյակ՝63%, զբոսաշրջություն մասնագիտության առաջին կիսամյակ՝67%, երկրորդ կիսամյակ 79%) , որի հիմնական պատճառը (առաջին և երկրորդ կուրսերում) գնահատման բաղադրիչների ներմուծումն և արդյունավետ կառավարումն է: Պատճառներից մեկն էլ զեղչային համակարգում ՄՈԳ –ի շեմի բարձրացումն է : Ֆակուլտետի ՈՒԳ-ն իրականացնում է աշխատանքներ ցածր առաջադիմություն ունեցող ուսանողների հետ:
Իրավիճակի հետագա բարելավման համար առաջարկում ենք ուսման վարձի զեղչի տոկոսադրույքի դիֆերենցում՝ ՄՈԳ-երի:

1.1.5. Ուսանողների հոսունություն

(Գնահատե՛ք ֆակուլտետի կրթական ծրագրերի շրջանակում ուսանողների հոսունության (հեռացված, դուրս մնացած, ԵՊՀ-ից կամ ԵՊՀ տեղափոխված) ընդհանուր պատկերը: Ի՞նչ եզրակացություն կարելի է անել այս թվերի հիման վրա, և ի՞նչ գործողություններ է անհրաժեշտ նախաձեռնել այդ ուղղությամբ):

Վերոնշյալ ժամանակահատվածում ուսանողների հոսունության ընդհանուր պատկերն դրական է, քանի որ առկա է այլ ԲՈՒՀ-երից ֆակուլտետ տեղափոխված ուսանողների մեծ հոսք/այդ թվում Արցախից/:
Մասնաճյուղի ներսում բնագիտական ֆակուլտետից ունենք մասնագիտության փոփոխությամբ պայմանավորված ուսանողների հոսք՝ դեպի «Ֆինանսներ(ըստ ոլորտի)» կրթական ծրագիր(9 ուսանող):Հաշվետու ժամանակաշրջանում ֆակուլտետից տարբեր պատճառներով հեռացվել են 20 և այլ բուհեր տեղափոխված 2 ուսանողներ: Այս ամենը հետևանք է պարբերաբար բարելավված կրթական ծրագրերի, արհեստավարժ պրոֆեսորադասախոսական անձնակազմի և ոլորտի տարածաշրջանային առաջատար կազմակերպությունների հետ համագործակցության (ԿԲ–ի Դիլիջանի ուսումնահետազոտական կենտրոն, առևտրային բանկեր, Լաստիվեր ռեզորթ, Կանաչ տուն և այլն):

1.1.6. Դոկտորական կրթություն

(Գնահատե՛ք հայցորդների և ասպիրանտների, պաշտպանած ատենախոսությունների ընթացիկ տարվա արդյունքներն ու դրանց ազդեցությունը ՈւՍ գործունեության վրա):

1.1.7. Կրթաթոշակներ

(Ինչպե՞ս կգնահատեք հասանելի կրթաթոշակների ազդեցությունը կրթական գործընթացի վրա, ի՞նչ քայլեր են անհրաժեշտ այդ ուղղությամբ: Ի՞նչ աշխատանքներ եք իրականացրել կրթաթոշակների թիվն ավելացնելու ուղղությամբ, ի՞նչ հնարավորություններ կան հաջորդ տարիների համար):

Կրթաթոշակների ազդեցությունը կրթական գործընթացի վրա գնահատվում է հետևյալ կերպ.

- անվճար համակարգում սովորող ուսանողների առաջադիմության աճ (2022-23-ուստարի, առաջին կիսամյակ 30 ուսանող՝ այդ թվում՝ անվանական՝2, գերազանցության՝13 կրթաթոշակ, երկրորդ կիսամյակում՝32 ուսանող՝ այդ թվում՝ անվանական՝ 3, գերազանցության՝ 21 կրթաթոշակ, 2023-24-ուստարի,

առաջին կիսամյակ 24 ուսանող՝ այդ թվում՝ անվանական՝ 2, գերազանցության՝12 կրթաթոշակ)՝ կարգավիճակը պահպանելու համար,

- վճարովի համակարգի ուսանողների առաջադիմության աճ (ՄՈԳ–ի շեմը հաղթահարելու համար) և օգտվելու հիմնադրամների և այլ կազմակերպությունների կողմից տրամադրվող կրթաթոշակներից (4 ուսանող):

1.2.1. Ներառական կրթություն

(Որքանո՞վ են ֆակուլտետում առկա պայմանները (ֆիզիկական, ենթակառուցվածքային, կրթական, մասնագիտական) ապահովում ներառական կրթության հնարավորությունները):

Ապահովված չէ:

1.3.1. Գործատուների հետ համագործակցություն

(Գնահատե՛ք հաշվետու ժամանակահատվածի ընթացքում տեղական և միջազգային մակարդակներում ոլորտային գործատուների և փորձագետների հետ համագործակցությունը: Որո՞նք են համագործակցության հիմնական միտումները: Ի՞նչ ազդեցություն է այն ունեցել կրթական ու գիտահետազոտական գործընթացի վրա (դասախոսների ներգրավում, կրթաթոշակներ, հետազոտական պատվերներ, կրթական ծրագրերի վերանայում և այլն), ի՞նչ հավելյալ գործողությունների անհրաժեշտություն կա իրավիճակի բարելավման համար):

Հաշվետու ժամանակահատվածում իրականացվել են ուսանողների և դասախոսների այց ԿԲ Դիլիջանի ուսումնահետազոտական կենտրոն՝ ճանաչողական, կոնֆերանսներին մասնակցելու, դասախոսություններ լսելու, ամառային պրակտիկա անցնելու նպատակով:
Կազմակերպվել են այցելություններ առևտրային բանկեր,զբոսաշրջային ընկերություններ,հյուրանոցառեստորանային համալիրներ,հարկային համակարգ, պրակտիկաների կազմակերպում /Լաստիվեր ռեզորթ, Ապագա ռեզորթ, Կամար հյուրանոց, Քարվանսարա հյուրանոցառեստորանային համալիր/:
Գործատուների և փորձագետների հետ համագործակցության բարելավման համար անհրաժեշտ է շարունակել համագործակցությունը նշված կազմակերպությունների հետ և փնտրել նոր ընկերություններ, որոնք առաջատար դեր ունեն նշված ոլորտներում:

1.4.1. Ակադեմիական համակազմի նկարագիր և կարողությունների զարգացում

(Ինչպե՞ս կգնահատեք հաշվետու ժամանակաշրջանում ակադեմիական համակազմի ընդհանուր պատկերը (սեռատարիքային կազմ, կոչում, գիտական աստիճան), ինչպես նաև նրանց կարողությունների զարգացման գործընթացը: Ի՞նչ կարիքներ են բացահայտվել, և ի՞նչ քայլեր են անհրաժեշտ դրանց հասցեագրման համար):

Հաշվետու ժամանակաշրջանում ակադեմիական համակազմի ընդհանուր պատկերն է.
1. Սեռատարիքային կազմ.
ա) կին -19
բ) տղամարդ-23
գ)մինչև 35 (երիտասարդ) – 19
դ)36÷45 - 5
ե) 46÷60 - 7
զ)61 և ավելի - 13
2. Գիտական աստիճան.
ա)գիտությունների դոկտոր -2
բ)գիտությունների թեկնածու -18
3.Գիտական կոչում.
ա)դոցենտ -9,
բ)պրոֆեսոր -5:
Ֆակուլտետի ակադեմիական համակազմը մասնակցում են հանրապետական և միջազգային համաժողովների, կոնֆերանսների, որակավորման բարձրացման դասընթացների և սեմինարների,իսկ չորս երիտասարդ դասախոսներ ԵՊՀ-ի հայցորդներ են:

1.5.1. Ենթակառուցվածքներ և պայմաններ

(Գնահատե՛ք ֆակուլտետում առկա պայմանները, դրանց ազդեցությունը գիտակրթական աշխատանքների կազմակերպման վրա, ինչպես նաև դրանց բարելավմանն ուղղված աշխատանքները հաշվետու ժամանակահատվածում: Ի՞նչ առաջնահերթ գործողություններ են անհրաժեշտ աշխատանքային պայմանների բարելավման համար):

Ֆակուլտետում առկա են տեխնիկական միջոցներով հագեցած լսարաններ (50%), որոնք ապահովում եմ դասապրոցեսի անցկացման արդյունավետ մեթոդներ և հնարքներ, գերարագ ինտերնետ կապ, սմարտ գրատախտակ և անհրաժեշտ գույք:
Աշխատանքային պայմանների բարելավման համար անհարժեշտ է ավելացնել տեսասարքերով լսարանների քանակը:

ՌԱՁԱՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿ 2

ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

2.1. Գիտական ակտիվություն

(Վերլուծելով առկա քանակական տվյալները (հոդվածներ, մենագրություններ, ձեռնարկներ, գիտաժողովներ, դրամաշնորհներ և այլն)՝ գնահատե՛ք ֆակուլտետում ակադեմիական համակազմի գիտական ակտիվությունը հաշվետու ժամանակահատվածում: Որքանո՞վ է

ակադեմիական համակազմի գիտահետազոտական ակտիվությունը համահունչ ֆակուլտետի կարիքների հետ, ի՞նչ հավելյալ գործողությունների կարիք կա):

Հաշվետու ժամանակահատվածում ֆակուլտետի ակադեմիական համակազմի գիտական ակտիվությունը քանակական տվյալներ են.
1. գիտական հոդվածներ-12
2.ուսումնամեթոդական ձեռնարկ -2
3. դասագիրք-1
4.դրամաշնորհներ-2
5.մասնակցություն 2 գիտաժողովի:
Ակադեմիական համակազմը մասնակցել է նաև ԵՊՀ ԻՄ կողմից կազմակերպած վերապատրաստումներին(9):
Անհարժեշտ է կազմակերպել սեմինարներ և գիտաժողովներ:

2.2. Գիտահետազոտական լաբորատորիաներ և մասնակցություն ֆինանսավորվող գիտական նախագծերին

(Ինչպե՞ս կգնահատեք ֆակուլտետի բազային և գիտահետազոտական այլ բնույթի լաբորատորիաների գործունեությունն ու մասնակցությունը ֆինանսավորվող գիտական նախագծերին (դրամաշնորհային, նպատակային, տնտեսապայմանագրային, միջազգային և այլ բնույթի): Որո՞նք են հիմնական ձեռքբերումները, դժվարություններն ու առաջնահերթությունները):

Հաշվետու ժամանակահատվածում ֆակուլտետի դասախոս Թ. Վարդանյանը մասնակցել է ֆինանսավորվող գիտական նախագծին (դրամանաշնորհային):
Պլանավորվում է ստեղծել տուրիզմի լաբորատորիա, որը կնպաստի գիտական ակտիվության խթանմանը:

2.3. Գիտակրթական համագործակցություն

(Հաշվետու ժամանակաշրջանում գիտակրթական համագործակցության ի՞նչ նոր դեպքեր են արձանագրվել, ի՞նչ ազդեցություն ունեն դրանք ֆակուլտետի ընդհանուր գործունեության վրա, ի՞նչ հնարավորություններ են դրանք տալիս միջնաժամկետ ու երկարաժամկետ հեռանկարում):

Ֆակուլտետի դասախոսների կողմից դասախոսությունների կազմակերպում դպրոցներում և քոլեջներում:
Ֆակուլտետի ընդհանուր գործունեության վրա դրական է ազդել ԿԲ-ի կադրային ներուժի ներգրավումը դասավանդման գործընթացում և այլ կազմակերպությունների/Կանաչ տուն, Լաստիվեր ռեզորթ/ներգրավումը:Սա հնարավորություն է տալիս ավելի մոտ գտնվելու աշխատաշուկային, ծանոթանալու ոլորտի արդի խնդիրներին, նպաստում է կիրառական գիտելիքների և կարողությունների զարգացմանը: Դրական ազդեցություն են ունենում նաև հաճախակի կազմակերպվող սեմինարները, գիտաժողովները, դասընթացները /ԱՄՆ զբոսաշրջության փորձագետ Ջոն Հիֆըր/: Ֆակուլտետի դասախոսները և ուսանողները

հաշվետու ժամանակահատվածում մասնակցել են ՀՀ ԿԲ Դիլիջանի ուսումնահետազոտական կենտրոնի կողմից կազմակերպված «Բիզնեսի կազմակերպման նորարարական մոտեցումները ՀՀ-ում» թեմայով դասախոսության, որը վարել է դանիացի մասնագետ:

2.4. Գիտական միջոցառումների կազմակերպում և մասնակցություն

(Հաշվետու ժամանակաշրջանում ֆակուլտետի կողմից ի՞նչ գիտական միջոցառումներ են կազմակերպվել (գիտաժողով, սեմինար, զեկուցումներ և այլն), և ի՞նչ միջոցառումների են մասնակցել ֆակուլտետի աշխատակիցները: Ի՞նչ ազդեցություն ունեն դրանք ֆակուլտետի ընդհանուր գործունեության վրա, ի՞նչ հնարավորություններ են դրանք ստեղծել միջնաժամկետ ու երկարաժամկետ հեռանկարում):

Հաշվետու ժամանակաշրջանում ֆակուլտետի կողմից կազմակերպվել է ուսուցիչների երկու վերապատրաստում:

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿ 3.

ՀԱՆՐԱՅԻՆ ՆԵՐԳՐԱՎՈՒՄ

3.1. Շուկայի ուսումնասիրում և պահանջարկին համապատասխանեցում

(Հաշվետու ժամանակաշրջանում ի՞նչ քայլեր են իրականացվել ֆակուլտետի կողմից ոլորտային գործատուների, ձեռնարկությունների և առհասարակ շուկայի կարիքներին համապատասխանելու տեսանկյունից: Որքանո՞վ է ֆակուլտետն ինտեգրված ոլորտային շուկային: Ի՞նչ գործողություններ են իրականացվել ֆակուլտետի կողմից ոլորտային գործընկերների հետ համագործակցության ամրապնդման ուղղությամբ (քննարկումներ, հանդիպումներ, գիտաժողովներ, ցուցահանդեսներ, խորհրդակցություններ և այլ): Որքանո՞վ են ֆակուլտետի կողմից մատուցվող կրթական ծառայությունները համապատասխանում շուկայի պահանջներին, ի՞նչն է վկայում համապատասխանության կամ անհամապատասխանության մասին):

Ֆակուլտետի կողմից շուկայի ուսումնասիրման և պահանջարկի համապատասխանեցման համար իրականացվել են հետևյալ քայլերը.

- աշխատաշուկայի ուսումնասիրում –հարցումներ(4) գործատուների շրջանում, հանդիպումներ ոլորտի ներկայացուցիչների հետ,
- շրջանավարտ –աշխատողների հետ հարցազրույց(2),
- մարզային իշախանությունների հետ համագործակցություն և առաջարկների քննարկում(մագիստրատուրա),
- ԿԲ Դիլիջանի ուսումնահետազոտական կենտրոնի հետ համագործակցություն (11 ուսանողների ամառային աշխատանք),

Հաշվետու ժամանակահատվածում շրջանավարտները աշխատանքի են անցել մասնագիտական ոլորտներում.

- ԿԲ Դիլիջանի ուսումնահետազոտական կենտրոն -2
- Առևտրային բանկ—1
- ՊԵԿ -1
- Զբոսաշրջային ոլորտում-4

3.2. Շրջանավարտներ

(Գնահատե՛ք հաշվետու ժամանակաշրջանում շրջանավարտների հետ կապերի ամրապնդմանն ուղղված, ֆակուլտետի կողմից իրականացված գործողությունները: Ի՞նչ արդյունքներ են արձանագրվել, ի՞նչ հնարավորություններ են ստեղծվել շրջանավարտների հետ համագործակցության արդյունքում):

Հանդիպում-քննարկումներ շրջանավարտների(2) հետ, նրանց կողմից առաջարկների քննարկում ամբիոնի և ֆակուլտետի խորհրդի նիստերում, հետադարձ կապի մեխանիզմների բարելավում, մանակցություն աշխատանքի շուկայում:

Հաջորդիվ (կամ հետամուտ) քայլեր

Հաշվի առնելով ներկայացվածը, ստացված արդյունքները և բարելավման կարիք ունեցող ուղղությունները՝ նկարագրե՛ք այն քայլերն ու առաջնահերթությունները, որ նախատեսում եք ձեռնարկել հաջորդ ուսումնական տարվա ընթացքում: Միևնույն ժամանակ անդրադարձե՛ք և մեկնաբանե՛ք, թե հատկապես որ ձեռքբերումների վրա է հնարավոր կառուցել ստորաբաժանման զարգացմանն ուղղված հաջորդ քայլերը:

1. Ընդունելություն

- ակտիվացնել համագործակցությունը դպրոցների հետ, կազմակերպել աշակերտների այցելություններ ֆակուլտետ՝ ծանոթացնելու ԿԾ-երի, դասավանդման ձևերի, ուսանողների և շրջանավարտների ձեռքբերումների, տեխնիկական հնարավորությունների, պրոֆեսորադասախոսական կազմի հետ /մասնագիտական կողմնորոշման համար/,
- կազմակերպել լրացուցիչ դասընթացներ դիմորդների հետ՝ ընդունելության քննությունները հաղթահարելու նպատակով /դիմորդների ընդունում/

2. ԿԾ-երի շարունակական բարելավում՝ մոնիթորինգի և արտաքին շահակիցների կարիքների գնահատման միջոցով՝ հաշվի առնելով աշխատաշուկայի զարգացման միտումները:
3. Ուսման առաջադիմության բարելավման ուղղությամբ՝ խրախուսել «լավ» և «բարձր» առաջադիմություն ունեցող ուսանողներին:
4. Աջակցել երիտասարդ դասախոսներին դոկտորական կրթության հարցում:
5.Ձեռնարկել առաջնահերթ միջոցառումներ՝ ներառական կրթության համար անհրաժեշտ պայմաններ ստեղծելու ուղղությամբ:
6. Աշխատանք տանել ակադեմիական համակազմում երիտասարդ և գիտական աստիճան ունեցող դասավանդողների ներգրավման ուղղությամբ /ապահովելով սահուն սերնդափոխություն/:
7. Ներդնել մեխանիզմներ գիտական ակտիվությունը խրախուսելու նպատակով:
8. Ակտիվացնել կապը շրջանավարտների հետ օգտագործելով արդի տեխնիկական միջոցները:

ՀԱՎԵԼՎԱԾ

«Երևանի պետական համալսարան»
հիմնադրամի ռեկտորի
2023 թ. հոկտեմբերի ____ -ի
թիվ _____ հրամանի

ԵՊՀ ԻՄ Կիրառական արվեստի ֆակուլտետի դեկանի հաշվետվություն

Ֆակուլտետ՝ Կիրառական արվեստի

Դեկան՝ բ.գ.թ., դոցենտ Վ. Ա. Աղաբաբյան

Ժամանակահատված՝ 01.09.2022-01.11.2023

Ներկայացման ամսաթիվ՝ 18.11.2023

Իջևան 2023

Մաս 1. Ֆակուլտետի գործողությունների պլանի կատարողական

(750 - 1500 բառի շրջանակում անդրադարձե՛ք ֆակուլտետի կողմից մշակված գործողությունների պլանին՝ ներկայացնելով գործողությունների մասով իրականացված աշխատանքների արդյունքները և պատասխանելով ստորև ներկայացված հարցերին:

1. Որո՞նք են գործողությունների իրականացման արդյունքում արձանագրված հիմնական հաջողությունները:
2. Ի՞նչ գործոններ են պայմանավորել նշված հաջողությունների գրանցումը:
3. Ինչպե՞ս եք պատրաստվում նշված հաջողությունները կամ ձեռքբերումները օգտագործել ի նպաստ ֆակուլտետի գործունեության արդյունավետության հետագա բարելավմանը:
4. Որո՞նք են գործողությունների իրականացման արդյունքում արձանագրված հիմնական անհաջողությունները կամ դժվարությունները:
5. Որո՞նք էին նշված անհաջողությունների կամ դժվարությունների առաջացման հիմնական պատճառները:
6. Ի՞նչ եք պատրաստվում նախաձեռնել նշված անհաջողությունների կամ դժվարությունների հաղթահարման ուղղությամբ և ի՞նչ ժամկետրում:

Կիրառական արվեստի ֆակուլտետը ԵՊՀ ԻՄ-ի գիտակրթական գործունեություն իրականացնող հիմնական ստորաբաժանումներից է, որն իրականացնում է բարձրագույն մասնագիտական կրթություն «Դիզայն» և «Դեկորատիվ-կիրառական արվեստ» կրթական ծրագրերով:

Ֆակուլտետը իր գործունեությամբ խթանում է դիզայնի, ժողովրդական հին և նոր արհեստների պահպանումը, զարգացումը և տարածումը: Վերջին տարիներին մեծ աշխատանքներ են գործվածքի, մետաղների, փայտի գեղարվեստական մշակման, խեցեգործության, ապակենկարչության, զարդարվեստի, քանդակի, ինտերիերի և էքստերիերի, հագուստի նախագծման և մոդելավորման ուղղություններով:

Հանրապետության տարբեր քաղաքներում, Իջևանի քաղաքային

պատկերասրահում և մասնաճյուղում հաճախ են կազմակերպվում ուսանողների և դասախոսների թեմատիկ լայն ընդգրկում ունեցող ստեղծագործությունների ցուցահանդեսներ, ցուցահանդես վաճառքներ։

2023 թ. օգոստոսի 10-ից 25-ը Իտալիայում կազմակերպված BIENNALE D'ARTE DELLA RIVIERA ROMANA ցուցադրությանը մասնակցել է նաև Կիրառական արվեստի ֆակուլտետի Գծանկարի, գունանկարի և քանքակի ամբիոնի վարիչ, ՀՆՄ անդամ Համլետ Ասատրյանը:

https://www.facebook.com/100003610736127/videos/pcb.2987778764685785/258925870354342

Դեկորատիվ-կիրառական արվեստի և դիզայնի ամբիոնի ասիստենտներ Ա. Չիբուխչյանն ու Դ. Չիբուխչյանը մասնակցել են Իջևանի համայնքապետարանի և «Ուրբան» կայուն զարգացման հիմնադրամի EU4Culture-ի «Մենք ենք մեր սարերը» ծրագրի դրամաշնորհային մրցույթի և ճանաչվել հաղթող:

Ծրագրի նպատակն է վարպետաց դասերի, ուսուցման և վերապատրաստման միջոցով խթանել ազգային արժեքների /դեկորատիվ-կիրառական արվեստ և արհեստ/ վերհանմանը, փոխանցմանն ու հանրայնացմանը և մշակութային անձ-քաղաքացի ձևավորման միջոցով զարգացնել Իջևան բազմաբնակավայր համայնքի մշակութահենք տնտեսությունը:
https://www.facebook.com/100081793561016/videos/883798193100384

2023 թ. մայիսի 18-ին ԵՊՀ Իջևանի մասնաճյուղում տեղի ունեցավ «Մունետիկ» հասարակական կազմակերպության կողմից իրականացված «Մեկ հայրենիք, մեկ նպատակ» հայրենաճանաչողական ծրագրի մասնակիցների աշխատանքների ցուցահանդես: Ցուցահանդեսում ներկայացված էին հայրենաճանաչողական ծրագրի մասնակիցների բազմաժանր (գեղանկար, գրաֆիկա, բատիկա և այլն) ստեղծագործությունները, որոնց մեջ մեծ թիվ էին կազմում ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի Կիրառական արվեստի ֆակուլտետի

ուսանողների աշխատանքները: http://ijevan.ysu.am/20-05-2023/?fbclid=IwAR39ER-sx74F_FVXBzY2IWt_cbnWsKNNf4Jx_vCHikmvunD7Iuf_SwCTXfc

2023 թվականի հուլիսի 12-ին ԵՊՀ Իջևանի մասնաճյուղում կայացավ 2022-2023 ուստարվա շրջանավարտների դիպլոմների հանձնման հանդիսավոր արարողություն, որի ընթացքում կազմակերպվել էր Կիրառական արվեստի ֆակուլտետի շրջանավարտների ավարտական աշխատանքների ցուցադրություն: https://www.facebook.com/100067789696707/videos/833135951755142

2023 թվականի հուլիսի 19-ին ֆակուլտետների դասախոսներից և ուսանողներից մասնակցեցին Տավուշի մարզի նկարիչների հավաքական ցուցահանդեսին: https://www.facebook.com/100068834058363/videos/546075494255025

2023 թվականի հոկտեմբերի 14-ին տեղի ունեցած Futuris Architects-ի կողմից կազմակերպված «FA Convention 23» կոնֆերանսին մասնակցեցին նաև Կիրառական արվեստի ֆակուլտետի «Դիզայն» կրթական ծրագրի IV կուրսի ուսանողները՝ Դեկորատիվ-կիրառական արվեստի և դիզայնի ամբիոնի ասիստենտ Քրիստինե Մխիթարյանի գլխավորությամբ:

«Դեկորատիվ-կիրառական արվեստ» կրթական ծրագրի 4-րդ կուրսի ուսանողները Հայոց պատմության և հասարակագիտության ամբիոնի ասիստենտ, պ.գ.թ., ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի գիտաշխատող Ավետիս Գրիգորյանի ուղեկցությամբ «Թանգարանային գործ» առարկայի շրջանակներում 2023թ. հոկտեմբերի 17-ին այցելեցին Հայաստանի պատմության թանգարան և Էրեբունի պատմահնագիտական արգելոց-թանգարան: Ուսանողները ծանոթացան թանգարանային ֆոնդերում պահվող կիրառական արվեստի նմուշներին, հավաքածուների համալրման և պահպանման եղանակներին: http://ijevan.ysu.am/19-10-23-2/

Կոնֆերանսի ընթացքում քննարկվեցին ճարտարապետության և դիզայնի

ոլորտի պրակտիկ մարտահրավերները և դրանց հնարավոր լուծումները, ներկայացվեցին դիզայնի թրենդները։

https://www.facebook.com/photo?fbid=660715459531438&set=pcb.660715492864768

Ակտիվ գործունեություն ծավալող 4 ուսանողների և դասավանդող դասախոսների մասին Հանրային հեռուստաընկերության «Առավոտ լուսո» հաղորդաշարը պատրաստել է տեսանյութեր (Անուշ և Դոնարա Չիբուխչյաններ https://www.facebook.com/aravotluso.1tv/videos/563683495877329, Նարա Ստեփանյան https://www.facebook.com/aravotluso.1tv/videos/1403565823515109, Կամո Հովակիմյան https://www.facebook.com/aravotluso.1tv/videos/739107337605401, Ալիսա Ոսկանյան https://www.facebook.com/aravotluso.1tv/videos/1463147070758990, Լիլիթ Սարգսյան https://www.facebook.com/aravotluso.1tv/videos/924923135386927 ։

«Դեկորատիվ-կիրառական արվեստ» կրթական ծրագրի III կուրսի ուսանող Էրիկ Ամյանը 2023 թ. սեպտեմբերից ԻՆՆՈԻՋևան նորարական ՀԱԲ-ի հետ համատեղ Իջևանի տարածաշրջանի 6-12 տարեկան երեխաների համար կազմակերպում է նկարչության դասընթացներ՝ մարզում կիրառական արվեստի ճյուղերին և նկարչությանը ծանոթացնելու նպատակով։

2022-2023 և 2023-2024 ուստարիներին ավելի մեծ ուշադրություն է դարձվել պրակտիկաներին: III կուրսից սկսած՝ ուսանողները իրենց տեսական գիտելիքները կիրառում են պրակտիկայի շրջանակներում: Փորձ է արվում պրակտիկան մոտեցնել արտադրության: Դեռև դժվարություններ կան նյութերի ձեռք բերման հետ կապված: Հաշվետու ժամանակահատվածում պրակտիկայի շրջանակներում իրականացվել են խեցեգործության, ապակենկարչության, ոչ հենքային գոբելենի, համակարգչային գրաֆիկայի և եռաչափ մոդելավորման, հագուստի մոդելավորման և նախագծման պրակտիկաներ: Այս առումով մի փոքր դժվարությունների ենք հանդիպում նյութատեխնիկական բազայի և արվեստանոցների՝ ժամանակակից պահանջներին ոչ լիարժեք համապատասխանելու պատճառով:

Ավարտական աշխատանքների գիտական մակարդակի բարձրացմանը միտված պարբերաբար քայլեր են իրականացվում: Այդ նպատակին է ծառայում մասնագիտական պրակտիկան, որի ընթացքում ուսանողները վերջնական տեսքի են բերում նախագծերը, կատարում հետազոտական մասը, ստեղծում իրենց՝ նախորդ տարիների աշխատանքներից կազմված փաթեթ, որը էլեկտրոնային եղանակով պահվում է:

Բացի ղեկավարից՝ հետազոտական աշխատանքներին պրակտիկայի ղեկավարի ներգրավվածությունը նպաստում է գրագողության դեպքերի նվազմանը, աշխատանքները ավելի բազմաբովանդակ են դառնում: Ամբիոնում մի քանի անգամ կազմակերպվում են նախապաշտպանություններ, որ ժամանակ, բացի շտկողական աշխատանքները, երևում է նաև ընթացքը:

Ամբիոններում առարկայական փաթեթները հիմնականում առկա են: Առարկայական փաթեթների պարտադիր առկայությունը E-lerning հարթակում նպաստել է, դասախոսների կողմից այդ աշխատանքների վրա ուշադրության սևեռմանը: Ճիշտ է, դեռևս կան առարկայական փաթեթներ, որոնցում առկա են միայն դասընթացի ուսումնական պլանները, հանձնարարվող գրականության ցանկը և հարցաշարերը, սակայն յուրաքանչյուր կիսամյակ այդ աշխատանքները լավարկվում են:

Հաշվետու ժամանակահատվածում Դեկորատիվ-կիրառական արվեստ կրթական ծրագրի ավարտական աշխատանքների թեմաների ընտրության ժամանակ կարևորվել է դեկորատիվ-կիրառական արվեստի ճյուղերի տարածաշրջանային և ազգային ավանդույթները: Դիզայն կրթական ծրագրի ավարտական աշխատանքների զգալի մասը ներառել են մարզի տարբեր հիմնարկ-ձեռնարկությունների ինտերիերի և էքստերիերի մշակումն ու արդիականությունը: Մասնավորապես՝

1. Ա. Հարությունյան- Հաղարծին գյուղի երաժշտական դպրոցի ինտերիերի

նախագիծ։

2. Մ. Ղավալյան- Կիրառական արվեստի ֆակուլտետի ինտերիերի դիզայն։
3. Ա. Ամիրաղյան- Իջևանի պատկերասրահի արդիականացում։
4. Ա. Չոբանյան- Սրճարանի ինտերիերի դիզայն՝ Սալվադոր Դալիի մոտիվներով /նախատեսված Դիլիջան քաղաքի համար/։
5. Ա. Դավթյան- Վերականգնողական կենտրոնի նախագիծ /նախատեսված Դիլիջան քաղաքի համար/։
6. Գ. Բաղրամյան- Տուրիստական գործակալության փաթեթ /Նոյեմբերյանի տարածաշրջանի տուրիստական ուղղությունների ռճավորում/։
7. Ն. Պարոնյան- Տիպային հանգստյան տնակների նշանակությունը զբոսաշրջության խթանման հարցում /նախատեսված Իջևան քաղաքի համար/։
8. Ն. Վարդանյան- Սարիգյուղ համայնքի մշակույթի տան ինտերիերի և էքստերիերի դիզայն։
9. Ա. Մարտիրոսյան- Սևքար համայնքի երաժշտական դպրոցի ինտերիերի և էքստերիերի դիզայն։
10. Մ. Մելիքյան- Գրաֆիկական դիզայն «Հյուրանոցի գովազդային փաթեթ» /Աճարկուտ գյուղի տուրիստական ուղղությունների ռճավորում/։
11. Շ. Սահակյան- ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի գլխավոր մասնաշենքի էքստերիերի և բակի ձևավորում։
12. Կ. Հովակիմյան- Չգործող ճոպանուղու կայանի՝ սրճարանի վերակառուցման նախագիծ։

Ֆակուլտետում գրագողությամ դեմ պայքարի մի քանի մեխանիզմներ են ներդրվել։ Նախ՝ առաջադրանքները կատարվում են տեղում՝ դասախոսի անմիջական հսկողությամբ, իսկ ինքնուրույն աշխատանքները և ընթացիկ աշխատանքները ստուգվում են համապատասխան ծրագրերի միջոցով։ Բոլոր

աշխատանքները գնահատվում է հանձնաժողովի միջոցով և գնահատականները միջինացվում են: Ուսումնական կիսամյակների սկզբում ուսանողներին տրվել է քննական հարցաշարերը, ինքնուրույն աշխատանքի թեմատիկան, տեղեկացվել են ակադեմիական ազնվության և գնահատման կարգերի մասին: Բացի այդ՝ ուսանողների հետ զրույցներ են անցկացվել ակադեմիական ազնվության մասին, կանխվել են ոչ պրոֆեսիոնալ նկարներց և գործերից արտանկարելու, ինտերնետային կայքերից, գիտաուսումնական աղբյուրներից նույնությամբ օգտվելու փորձերը: Քննությունների ընթացքը վերահսկվել է նաև ՈՒՄՎ տեսուչների, դեկանի և ամբիոնների վարիչների կողմից:

Պարբերաբար հանդիպումներ են եղել հետազոտական բաղադրիչ ունեցող դասընթաց վարող դասախոսների, այնպես էլ՝ հետազոտական աշխատանք պատրաստող ուսանողների հետ: Քննարկվել և ճշտվել են թեմաները, տրվել անհրաժեշտ գրականության ցանկը: Գրվել և պաշտպանության են ներկայացվել գիտական տեսակետից հետաքրքրություն ներկայացնող թեմաներով հետազոտական և ավարտական աշխատանքներ, որոնցից վերջինների մասին իրենց գոհունակությունը, նաև դիտողություններն են հայտնել ավարտական ատեստավորման հանձնաժողովի նախագահը (առկա է գրավոր հաշվետվությունը՝ http://ijevan.ysu.am/05-06-2023/):

Ակադեմիական ազնվությանը նպաստել են նաև անհատական առաջադրանքների կազմումը, առանձին դասընթացների համար ամբիոնների կողմից հաստատված գնահատման ձևերը, ավարտական և հետազոտական աշխատանքներին վերագրվող չափանիշների հստակ վերահսկողությունը, ավարտական աշխատանքների համար առանձին փաթեթների կազմումը և հավաքագրումը:

Ուսանողի ինքնուրույն աշխատանքների ստուգման և գնահատման ներդրված նոր ձևերը պարբերաբար ներկայացվել է առաջին կուրսեցիներին: Ավարտական

կուրսերի ուսանողների հետ քննարկվել է պրակտիկաների և ավարտական աշխատանքների թեմաները, հաստատվել աշխատանքների վերջնական նախագծերը /Տե՛ս ամբիոնի արձանագրությունները/։ Նրանց է ներկայացվել նաև ԵՊՀ ԻՄ-ի ակադեմիական ազնվության կանոնակարգը, «ԵՊՀ ԻՄ-ում ավարտական աշխատանքների պատրաստման և գնահատման» կարգը և գրագողության դեմ պայքարի մեխանիզմները։ Իրականացվել է ավարտական աշխատանքներին վերագրվող չափանիշների հետևողական վերահսկողություն:

Կրթական ծրագրերի վերանայման ընթացքում դիտարկվել են ոլորտի մի շարք ուսումնական հաստատությունների ուսումնական պլաններ և փորձել ենք հնարավորինս մոտ լինել՝ ապահովելով «շարժունության պատուհաններ»:

Ամբիոնի երիտասարդ դասախոսներին մեթոդապես օգնելու, փորձի փոխանակման նպատակով նշանակվել են մենթորներ ։ Այժմ մենթոր- մենթի խմբերի աշխատանքները իրականացնելու համար ամբիոնի կողմից կազմվում է աշխատանքային պլան-ժամանակացույց։

Ամբիոններում իրականացվել են փոխադարձ դասալսումներ, վարպետաց դասեր՝ ուսումնասիրելու դասախոսական կազմի ուսումնամեթոդական առաջավոր փորձը:

Հաշվետու ժամանակահատվածում ֆակուլտետի դեկանի և ամբիոնի վարիչի կողմից բոլոր դասախոսների մոտ իրականացվել են դասալսումներ, կատարվել քննարկումներ։ Կարևորվել է առաջավոր փորձի կիրառումը, տրվել խորհրդատվություն։ Քննարկումների վերաբերյալ առկա են ամբիոնի նիստի արձանագրությունները։

Ֆակուլտետի աշխատանքները մի փոքր դժվարանում են Դեկորատիվ-կիրառական արվեստի և դիզայնի ամբիոնի վարիչի և կրթական ծրագրերի ղեկավարների բացակայության պատճառով։ Այս առումով մեր երկու ամբիոնները բախվում են օբյեկտիվ և սուբյեկտիվ խնդիրների։

Բացի այդ՝ մասնաճյուղի մնացած ամբիոնները համատեղության կարգով կարող են հրավիրել Մայր բուհի որակյալ դասախոսների: Մեր կողմից իրականացվող կրթական ծրագրերը ԵՊՀ-ում չեն իրականացվում և դժվարություններ են առաջանում հատկապես դիզայն, խեցեգործություն, փայտի գեղարվեստական մշակման, հագուստի մոդելավորում և մի շարք նմանատիպ ոլորտների բարձրակարգ մասնագետների հետ երկարաժամկետ համագործակցությունը՝ վերջիններիս պահանջարկի, զբաղվածության և ֆակուլտետի՝ մայրաքաղաքից հեռու գտնվելու պատճառով:

2. Ֆակուլտետի գործունեության վերաբերյալ դեկանի հաշվետվությունը

Ամփոփելով նախորդ ուսումնական տարին և յուրաքանչյուր հարցին պատասխանելով մինչև 750 բառի սահմանում՝ **ներկայացրե՛ք Ձեր՝ որպես դեկանի** գործունեությունը՝ ըստ ԵՊՀ ԻՄ զարգացման 2022-2026 ռազմավարական ծրագրի երեք նպատակների: Հարցերին պատասխանելիս ներառեք տրամադրված տվյալների հիման վրա իրականացված բովանդակային վերլուծություն:

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿ 1

ԲԱՐՁՐՈՐԱԿ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

1.1.1. Ընդունելություն

(Անդրադառնալով ֆակուլտետում հաշվետու ժամանակաշրջանում կրթական երկու մակարդակներում ուսանողների քանակական տվյալներին՝ ներկայացրե՛ք ընդհանուր պատկերն ու միտումները: Ի՞նչ եզրակացություններ կարելի է անել ընդունելության, կրթական մի մակարդակից մյուսն անցնելու, առաջին և երկրորդ հայտով ընդունելության, վճարովի և անվճար ընդունելության տվյալների, միջազգային ուսանողների ներգրավման վերլուծության արդյունքում: Որո՞նք պիտի լինեն ֆակուլտետի հետագա քայլերը իրավիճակի բարելավման և նոր արդյունքներ գրանցելու համար):

Հաշվետու ժամանակահատվածում ֆակուլտետում կրթություն է իրականացվում միայն բակալավրիական մակարդակում: Համեմատելով վերջին երեք տարիների տվյալները՝ տեսնում ենք դրական դինամիկա: Եթե 2021-2022 ուսումնական տարում Դիզայն կրթական ծրագրով ընդունվել էր 9, 2022-2023 ուստարում՝ 6, ապա 2023-2024 ուստարում ընդունվողների թիվը կազմել է 16: 2021-2022 ուսումնական տարում Դեկորատիվ-կիրառական արվեստ կրթական ծրագրով ընդունվել է 7, 2022-2023 ուստարում՝ 12, ապա 2023-2024 ուստարում ընդունվողների թիվը կազմել է 13:

Նշված տարիներին նկատվել է նաև անցողիկ շեմի դինամիկ ցուցանիշ: 2021-2022 ուսումնական տարում Դիզայն կրթական ծրագրով անվճար ընդունվելու շեմը կազմել է 28.00, իսկ վճարովին՝ 20.00, 2022-2023 ուստարում՝ 31.00 և 22.00, 2023-2024 ուստարում ընդունելության շեմը կազմել է 32.00 և 19.00, իսկ Դեկորատիվ-կիրառական արվեստ կրթական ծրագրով 2021-2022 ուսումնական տարում անվճար ընդունվելու շեմը կազմել է 24.00, իսկ վճարովին՝ 19.00, 2022-2023 ուստարում՝ 36.00 և 18.00, ապա 2023-2024 ուստարում ընդունելության շեմը կազմել է 29.00 և 16.00:

Առայժմ ֆակուլտետում սովորող ուսանողների ավելի քան 97.5 %-ը Տավուշի մարզից են: Ֆակուլտետում քիչ թվով սովորում են նաև Լոռու մարզից ուսանողներ: Այս առումով ֆակուլտետը կարևորում է այլ մարզերի ավագ և միջնակարգ դպրոցներում, արվեստի դպրոցներում և քոլեջներում իրականացվող հանդիպումները, բաց դռների օրերը:

Հաշվետու ժամանակահատվածում հանդիպումներ են եղել Գեղարքունիքի մարզում: Նախատեսվում են հանդիպումներ Լոռու մարզում:

2024-2025 ուստարվա դիմորդների համար նախատեսվում է կազմակերպել նախապատրաստական դասընթացներ ներբուհական «Գծանկար» և «Կոմպոզիցիա» առարկաներից: http://ijevan.ysu.am/11-10-23-2/

1.1.2. Դիմորդների մասնագիտական կողմնորոշում

(Ի՞նչ աշխատանք է իրականացվել դիմորդների շրջանում մասնագիտական կողմնորոշման ուղղությամբ, ի՞նչ ազդեցություն են ունեցել այդ աշխատանքները: Որքանո՞վ են դրանք նպաստել դիմորդների մասնագիտական կողմնորոշման և ֆակուլտետում ընդունելության վրա: Արդյո՞ք կա դիմորդների հետ տարվող աշխատանքների վերանայման անհրաժեշտություն: Եթե կա, ապա խնդրում ենք մանրամասնել):

Հաշվետու ժամանակահատվածում Կիրառական արվեստի ֆակուլտետը պարբերաբար կազմակերպել է «Բաց դռների օրեր» և ապագա դիմորդների ճանաչողական այցեր՝ ֆակուլտետի կրթական հնարավորությունները ներկայացնելու համար: Այցելությունների նպատակն է աշակերտներին ծանոթացնել ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի և Կիրառական արվեստի ֆակուլտետի գործունեությանը, համալսարանական միջավայրին, աշակերտների հետաքրքրություններին համապատասխանող կրթական ծրագրերին, դասընթացներին, բուհում ընթացող գործընթացներին:

Շփումների ընթացքում դպրոցականները ստացան գործնական խորհուրդներ ու տեղեկատվություն իրենց նախընտրելի մասնագիտությունների, մասնաճյուղի հնարավորությունների, ընդունելության գործընթացի, ինչպես նաև ուսանողական առօրյայի վերաբերյալ: Համալսարանի դասերին ունեցած մասնակցությունը ապագա ուսանողների համար հնարավորություն էր հասկանալու դպրոցում և համալսարանում կրթության կազմակերպման տարբերություններն ու առանձնահատկությունները: Հաշվետու ժամանակահատվածում կազմակերպված հանդիպումներն են՝

1. 2022թ. նոյեմբերի 26-ին ֆակուլտետի հյուրերն էին Կայանավանի միջնակարգ դպրոցի 6-րդ դասարանցիներին (https://www.facebook.com/photo?fbid=466071578995828&set=pcb.466072155662437):

2. Իջևանի թիվ 5 հիմնական դպրոցի 9-րդ դասարանների աշակերտները 2023թ.

ապրիլի 21-ին հյուրընկալվեցին ԵՊՀ Իջևանի մասնաճյուղում: http://ijevan.ysu.am/21-04-2023/

3. 2023թ. ապրիլի 29-ին ճանաչողական այցով ԵՊՀ Իջևանի մասնաճյուղում հյուրընկալվել էին «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրի 8-10-րդ դասարանի աշակերտները: http://ijevan.ysu.am/02-05-2023-2/

4. 2023թ. մայիսի 26-ին ճանաչողական այցով ԵՊՀ Իջևանի մասնաճյուղում հյուրընկալվել էին Տավուշի՝ Պ.Տեվէճեանի անվան տարածաշրջանային քոլեջի 2023թ. շրջանավարտները: http://ijevan.ysu.am/05-06-2023/

5. 2023 թ. հոկտեմբերի 20-ին Իջևանի թիվ 3-րդ դպրոցի VII գ դասարանի հետ հանդիպում ունեցավ ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի դոցենտ, ՀՀ նկարիչների միության անդամ Միեր Ստեփանյանը: Հանդիպման թեման արվեստն էր, արվեստի դերը մարդու ճաշակի և հոգեկերտվածքի ձեւավորման գործում: https://www.facebook.com/photo?fbid=3470557439921764&set=pcb.3470557693255072

Հաշվետու ժամանակահատվածում ֆակուլտետի կրթական ծրագրերը ներկայացնելու նպատակով:կազմակերպել են այցեր մարզի դպրոցներ: Ֆակուլտետի դեկան Վ. Աղաբաբյանը՝ ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի վարչական անձնակազմի ներկայացուցիչների և ՄԿՊԿ բաժնի հետ պարբերաբար հանդիպումներ է ունեցել Տավուշի մարզի, ինչպես նաև Գեղարքունիքի մարզի հարակից գյուղերի ավագ և միջնակարգ դպրոցների շրջանավարտների հետ (http://ijevan.ysu.am/07-05-2022-2/): Հանդիպումներ են իրականացվել նաև Կողբի, Դիլիջանի, Իջևանի արվեստի դպրոցներում: Հանդիպումներին մասնակցում էին նաև ֆակուլտետի ուսանողներ Մարիամ Ռևազյանը (ԴԿԱ IV), Սվետլանա Բաղյանը (Դիզայն IV), Կամո Հովակիմյանը (Դիզայն III), Արտյոմ Քարիմյանը (Դիզայն II)՝ ներկայացնելով մասնաճյուղի առօրյան, ուսումնական և մշակութային կյանքը:

Հանդիպումները դիմորդների համար ոչ միայն լավ հնարավորություն են ցանկացած հարց ուղղելու ֆակուլտետում ուսուցանվող կրթական ծրագրի

վերաբերյալ, այլև իրազեկված լինելու ուսուցման զեղչային համակարգի, կրթաթոշակի հնարավորությունների, ընդունելության գործընթացների, դիմումների լրացման և այլնի մասին:

2. 2022 թ. մայիսի 14- ին ֆակուլտետը հյուրընկալել էր Իջևանի թիվ 4 հիմնական դպրոցի ութերորդ դասարանի աշակերտներին (https://www.facebook.com/photo?fbid=472004924701487&set=pcb.472006734701306),

1.1.3. Կրթական ծրագրեր

(Ի՞նչ եզրակացություններ կարելի է անել ընդունելություն-կրթական ծրագրեր հարաբերակցության վերլուծության հիման վրա: Ի՞նչ գործողություններ են անհրաժեշտ իրավիճակի բարելավման համար: Ի՞նչ աշխատանք է իրականացվել կրթական ծրագրերի որակի գնահատման, դրա բարելավման ուղղությամբ):

1.1.4. Ուսման առաջադիմություն

(Գնահատե՛ք ուսանողների ուսման առաջադիմության հիմնական միտումները հաշվետու ժամանակահատվածի ընթացքում: Ինչո՞վ են դրանք պայմանավորված, և ի՞նչ քայլեր են անհրաժեշտ իրավիճակի բարելավման համար):

1.1.5. Ուսանողների հոսունություն

(Գնահատե՛ք ֆակուլտետի կրթական ծրագրերի շրջանակում ուսանողների հոսունության (հեռացված, դուրս մնացած, ԵՊՀ-ից կամ ԵՊՀ տեղափոխված) ընդհանուր պատկերը: Ի՞նչ եզրակացություն կարելի է անել այս թվերի հիման վրա, և ի՞նչ գործողություններ է անհրաժեշտ նախաձեռնել այդ ուղղությամբ):

1.1.6. Դոկտորական կրթություն

(Գնահատե՛ք հայցորդների և ասպիրանտների, պաշտպանած ատենախոսությունների ընթացիկ տարվա արդյունքներն ու դրանց ազդեցությունը ՈւՍ գործունեության վրա):

1.1.7. Կրթաթոշակներ

(Ինչպե՞ս կգնահատեք հասանելի կրթաթոշակների ազդեցությունը կրթական գործընթացի վրա, ի՞նչ քայլեր են անհրաժեշտ այդ ուղղությամբ: Ի՞նչ աշխատանքներ եք իրականացրել կրթաթոշակների թիվն ավելացնելու ուղղությամբ, ի՞նչ հնարավորություններ կան հաջորդ տարիների համար):

1.2.1. Ներառական կրթություն

(Որքանո՞վ են ֆակուլտետում առկա պայմանները (ֆիզիկական, ենթակառուցվածքային, կրթական, մասնագիտական) ապահովում ներառական կրթության հնարավորությունները):

1.3.1. Գործատուների հետ համագործակցություն

(Գնահատե՛ք հաշվետու ժամանակահատվածի ընթացքում տեղական և միջազգային մակարդակներում ոլորտային գործատուների և փորձագետների հետ համագործակցությունը: Որո՞նք են համագործակցության հիմնական միտումները: Ի՞նչ ազդեցություն է այն ունեցել կրթական ու գիտահետազոտական գործընթացի վրա (դասախոսների ներգրավում, կրթաթոշակներ, հետազոտական պատվերներ, կրթական ծրագրերի վերանայում և այլն), ի՞նչ հավելյալ գործողությունների անհրաժեշտություն կա իրավիճակի բարելավման համար):

1.4.1. Ակադեմիական համակազմի նկարագիր և կարողությունների զարգացում

(Ինչպե՞ս կգնահատեք հաշվետու ժամանակաշրջանում ակադեմիական համակազմի ընդհանուր պատկերը (սեռատարիքային կազմ, կոչում, գիտական աստիճան), ինչպես նաև նրանց կարողությունների զարգացման գործընթացը: Ի՞նչ կարիքներ են բացահայտվել, և ի՞նչ քայլեր են անհրաժեշտ դրանց հասցեագրման համար):

1.5.1. Ենթակառուցվածքներ և պայմաններ

(Գնահատե՛ք ֆակուլտետում առկա պայմանները, դրանց ազդեցությունը գիտակրթական աշխատանքների կազմակերպման վրա, ինչպես նաև դրանց բարելավմանն ուղղված աշխատանքները հաշվետու ժամանակահատվածում: Ի՞նչ առաջնահերթ գործողություններ են անհրաժեշտ աշխատանքային պայմանների բարելավման համար):

Նյութատեխնիկական պայմանները լավարկելու նպատակով թարմացվել է համակարգչային սրահի համակարգիչների զգալի մասը՝ ապահովելով անհրաժեշտ ծրագրային հագեցվածությամբ: Թարմացվել է արվեստանոցների գույքը, ձեռք է բերվել անհրաժեշտ քանակի նոր նկարակալներ, խեցեգործության դասընթացի իրականացման համար անհրաժեշտ նյութեր և պարագաներ: Տեքստիլ արվեստանոցի համար ձեռք է բերվել համակարգիչ:

Ուսանողները բարձրացրել էին նաև աշխատանքները տեղում թողնելու համար համապատասխան պահարանների անհրաժեշտության մասին, որը նույնպես ձեռք է բերվել: Հանդիպումների արդյունքում բարձրացվել էր նաև նկարչական պարագաների /ռեկվիզիտ/ թարմացման անհրաժեշտության մասին, որը ևս ներառվել է ֆակուլտետի 2021-22 ուստարվա գնումների պլանում: Նույն պլանում ներառվել է նաև արվեստանոցների, կրթական միջավայրի վերանորոգման հարցը, ինչը ավելի հարմարավետ կդարձնի ուսումնական գործընթացը:

ՌԱՁԱՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿ 2

ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

2.1. Գիտական ակտիվություն

(Վերլուծելով առկա քանակական տվյալները (հոդվածներ, մենագրություններ, ձեռնարկներ, գիտաժողովներ, դրամաշնորհներ և այլն)՝ գնահատե՛ք ֆակուլտետում ակադեմիական համակազմի գիտական ակտիվությունը հաշվետու ժամանակահատվածում: Որքանո՞վ է ակադեմիական համակազմի գիտահետազոտական ակտիվությունը համահունչ ֆակուլտետի կարիքների հետ, ի՞նչ հավելյալ գործողությունների կարիք կա):

2.2. Գիտահետազոտական լաբորատորիաներ և մասնակցություն ֆինանսավորվող գիտական նախագծերին

(Ինչպե՞ս կգնահատեք ֆակուլտետի բազային և գիտահետազոտական այլ բնույթի լաբորատորիաների գործունեությունն ու մասնակցությունը ֆինանսավորվող գիտական նախագծերին (դրամաշնորհային, նպատակային, տնտեսապայմանագրային, միջազգային և այլ բնույթի): Որո՞նք են հիմնական ձեռքբերումները, դժվարություններն ու առաջնահերթությունները):

2.3. Գիտակրթական համագործակցություն

(Հաշվետու ժամանակաշրջանում գիտակրթական համագործակցության ի՞նչ նոր դեպքեր են արձանագրվել, ի՞նչ ազդեցություն ունեն դրանք ֆակուլտետի ընդհանուր գործունեության վրա, ի՞նչ հնարավորություններ են դրանք տալիս միջնաժամկետ ու երկարաժամկետ հեռանկարում):

2.4. Գիտական միջոցառումների կազմակերպում և մասնակցություն

(Հաշվետու ժամանակաշրջանում ֆակուլտետի կողմից ի՞նչ գիտական միջոցառումներ են կազմակերպվել (գիտաժողով, սեմինար, զեկուցումներ և այլն), և ի՞նչ միջոցառումների են մասնակցել ֆակուլտետի աշխատակիցները: Ի՞նչ ազդեցություն ունեն դրանք ֆակուլտետի ընդհանուր գործունեության վրա, ի՞նչ հնարավորություններ են դրանք ստեղծել միջնաժամկետ ու երկարաժամկետ հեռանկարում):

ՌԱԶԱՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿ 3.

ՀԱՆՐԱՅԻՆ ՆԵՐԳՐԱՎՈՒՄ

3.1. Շուկայի ուսումնասիրում և պահանջարկին համապատասխանեցում
(Հաշվետու ժամանակաշրջանում ի՞նչ քայլեր են իրականացվել ֆակուլտետի կողմից ոլորտային գործատուների, ձեռնարկությունների և առհասարակ շուկայի կարիքներին համապատասխանելու տեսանկյունից: Որքանո՞վ է ֆակուլտետն ինտեգրված ոլորտային շուկային: Ի՞նչ գործողություններ են իրականացվել ֆակուլտետի կողմից ոլորտային գործընկերների հետ համագործակցության ամրապնդման ուղղությամբ (քննարկումներ, հանդիպումներ, գիտաժողովներ, ցուցահանդեսներ, խորհրդակցություններ և այլ): Որքանո՞վ են ֆակուլտետի կողմից մատուցվող կրթական ծառայությունները համապատասխանում շուկայի պահանջներին, ի՞նչն է վկայում համապատասխանության կամ անհամապատասխանության մասին):

Դեկանատը և ամբիոնները սերտորեն համագործակցում են կրթական ծրագիրը սպասարկող այլ ֆակուլտետների դասախոսների հետ՝ ուղղորդելով առարկայական պորտֆոլիոները կրթական ծրագրում ամրագրված կրթական վերջնարդյունքների ձեռքբերմանը: Կրթական ծրագրի պատասխանատուները ոչ մասնագիտական առարկաները դասավանդող դասախոսների հետ քննարկել են առարկայական մասնագրերը: Համատեղ մշակվել է վերջնարդյունքների ձեռքբերման քարտեզը:

Հայոց և օտար լեզուների դասընթացների շրջանակում քննարկվել են առարկայի թեմաները և մասնագիտական գրականության ցանկը, որն առաջարկվում է ուսանողներին: Այն ներառում է մասնագիտական տեքստեր և միտված է նպաստելու ուսանողների գրավոր և բանավոր խոսքի, հաղորդակցման զարգացմանը:

Հումանիտար պարտադիր և կամընտրական առարկաների թեմատիկան հիմնականում ուղղորդված է տարաբնույթ փոխանցելի գիտելիքի, կարողությունների և հմտությունների ձեռքբերմանը: Սակայն կա խիստ

անհրաժեշտություն այդ և մասնագիտական առարկաների միջև փոխհամագործակցության եզրեր հաստատելու ուղղությամբ:

Այս առումով կարևոր էր կամընտրական «Ցուցահանդեսների տեխնոլոգիա» և «Թանգարանային գործ» կամընտրական առարկաների ավելացումը, որը շրջանավարտներին հնարավորություն կտա հմտանալ թանգարանային գործի կազմակերպման, ցուցահանդեսային-տոնավաճառային գործունեության տեխնոլոգիաների, ինչպես նաև ժամանակակից պայմաններում տարատեսակ ու տարաբնույթ ցուցադրություններ կազմակերպելու հարցում:

3.2. Շրջանավարտներ

(Գնահատե՛ք հաշվետու ժամանակաշրջանում շրջանավարտների հետ կապերի ամրապնդմանն ուղղված, ֆակուլտետի կողմից իրականացված գործողությունները: Ի՞նչ արդյունքներ են արձանագրվել, ի՞նչ հնարավորություններ են ստեղծվել շրջանավարտների հետ համագործակցության արդյունքում):

Հաջորդիվ (կամ հետամուտ) քայլեր

Հաշվի առնելով ներկայացվածը, ստացված արդյունքները և բարելավման կարիք ունեցող ուղղությունները՝ նկարագրե՛ք այն քայլերն ու առաջնահերթությունները, որ նախատեսում եք ձեռնարկել հաջորդ ուսումնական տարվա ընթացքում: Միևնույն ժամանակ անդրադարձե՛ք և մեկնաբանե՛ք, թե հատկապես որ ձեռքբերումների վրա է հնարավոր կառուցել ստորաբաժանման զարգացմանն ուղղված հաջորդ քայլերը:

ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՈՐԱԿԻ ԵՎ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ 2022-2023 ՈՒՍՏԱՐՎԱ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՀԱՐՑՈՒՄՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ԵՊՀ Իջևանի մասնաճյուղում դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ ուսանողական հարցումները Ուսումնամեթոդական վարչությունը ֆեկուլտետների հետ համատեղ կազմակերպել է համաձայն «**Երևանի պետական համալսարանում դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ ուսանողների հարցման կարգ**»-ի, հարցաշարի և ժամանակացույցի (առաջին կիսամյակի հարցումներն իրականացվել են փետրվարի 7-ից մինչև 22-ը՝ առկա ուսուցմամբ սովորողների և մարտի 10-ից մինչև 25-ը՝ հեռակա ուսուցմամբ սովորողների համար, իսկ երկրորդ կիսամյակի հարցումները՝ հուլիսի 1-ից մինչև սեպտեմբերի 7-ը՝ առկա և հեռակա ուսուցմամբ սովորողների համար)։ Թե՛ առկա, թե՛ հեռակա ուսուցման համակարգերում հարցումներն իրականացվել են առցանց եղանակով, համալսարանական էլեկտրոնային հասցեների միջոցով։

Հարցման արդյունքների օբյեկտիվ պատկեր ստանալու համար կարևոր է ուսանողների մասնակցությունը։ 2022-2023 ուստարվա I կիսամյակի հարցումներին մասնակցել են մասնաճյուղի՝ առկա ուսուցման **634** ուսանողից **411-ը** (ուսանողական հիմնական համակազմի 64.83 %-ը), հեռակա ուսուցման **491** ուսանողից **169-ը** (ուսանողական հիմնական համակազմի 34.63 %-ը)։ II կիսամյակի հարցումներին մասնակցել են առկա ուսուցման **505** ուսանողից **220-ը** (ուսանողական հիմնական համակազմի 43.56 %-ը), հեռակա ուսուցման **402** ուսանողից **71-ը** (ուսանողական հիմնական համակազմի 17.66 %-ը)։ Երկրորդ կիսամյակի մասնակիցների նվազումը պայմանավորված է հարցման ժամանակացույցով (համընկնում է ուսանողների արձակուրդային ժամանակաշրջանին)։

Դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ 2022-2023 ուստարվա ուսանողական հարցումների վերլուծությունը մեր կողմից կատարվել է 3 տարիների համեմատությամբ։

Հարցաշարի առաջին երկու հարցերը, որոնք վերաբերում են կոռուպցիոն երևույթներին, մասնաճյուղում տոկոս չեն կազմում։

Հարցաշարի երրորդ հարցը վերաբերում է կրթական ծրագրի ղեկավարների աշխատանքին։ Առկա ուսուցման համակարգում հարցին պատասխանել է 223 ուսանող, որից 191-ը (90%) արդյունավետ է համարել կրթական ծրագրերի ղեկավարների աշխատանքը, իսկ հեռակա ուսուցման համակարգում հարցին պատասխանել է 57 ուսանող, որից 55-ը (97%) նույնպես համարել է արդյունավետ։

Հարցաշարի ֆակուլտետների, դեկանատների և մասնագիտական ամբիոնների կրթության կազմակերպման գնահատումն ունի հետևյալ պատկերը։

Դեկանատի աշխատակիցների վերաբերյալ գրանցված ցուցանիշով ամենաբարձրը առկա ուսուցման համակարգում ունի Տնտեսագիտության ֆակուլտետը, իսկ ամենացածրը՝ Բնական գիտությունների ֆակուլտետը։ Հեռակա ուսուցման համակարգում

ամենաբարձր ցուցանիշն ունի Բնական գիտությունների ֆակուլտետը, իսկ ամենացածրը՝ Հումանիտար գիտությունների ֆակուլտետը:





Ըստ ամբիոնների՝ առկա ուսուցման համակարգում ամենաբարձր ցուցանիշն ունի Օտար լեզուների ամբիոնը, իսկ ամենացածրը՝ Ծրագրավորման և ինֆորմացիոն տեխնոլոգիաների ամբիոնը: Հեռակա ուսուցման համակարգում ամենաբարձր ցուցանիշն ունի Ընդհանուր մաթեմատիկայի և բնագիտության ամբիոնը, իսկ ամենացածրը՝ Ընդհանուր տնտեսագիտության ամբիոնը:



Ֆակուլտետների ամփոփմամբ առկա ուսուցման համակարգում ամենաբարձր ցուցանիշն ունի Տնտեսագիտության ֆակուլտետը, իսկ ամենացածրը՝ Բնական գիտությունների ֆակուլտետը: Հեռակա ուսուցման համակարգում ամենաբարձր ցուցանիշն ունի Հումանիտար գիտությունների ֆակուլտետը, իսկ ամենացածրը՝ Տնտեսագիտության ֆակուլտետը:



Հարցաշարի հաջորդ գնահատումը, որը վերաբերում է դասախոսի գնահատմանը, արդյունքներն ուղարկվել են ֆակուլտետներ և մասնագիտական ամբիոններ՝ նիստերում քննարկելու համար։

Դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ հարցումն ընդգրկում է նաև ուսանողների կողմից կարծիք- առաջարկություններ.

- դասախոսական աշխատանքի ընդունել ավելի բանիմաց երիտասարդ դասախոսների,
- միևնույն դասընթացի անընդմեջ դասախոսությունը ծանր է և հոգնեցնող,
- ավելացնել գործնական և սեմինար դասաժամերը,
- ունենալ լավ համակարգիչներ և լսարաններն ապահովել ժամանակակից սարքավորումներով (պրոյեկտորներ),
- հաշվի առնել ուսանողների հաճախելիությունը,
- պատմության մասնագիտության համար ապահովել քարտեզներ,
- ավելացնել մասնագիտական գրականությունը,
- ունենալ օբյեկտիվ գնահատում։